«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2021

ՆԱԽԱԲԱՆ

Գորիսի պետական համալսարանի (այսուհետ՝ ԳՊՀ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է բուհի ներկայացրած դիմումի համաձայն: Հավատարմագրման գործընթացը կազմակերպել և համակարգել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) կողմից:

Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959–Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած էր 4 տեղացի և 1 միջազգային փորձագետներից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Հետևաբար, փորձագետների առջև դրված էր երկու խնդիր.

1) իրականացնել ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննություն՝ ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին համապատասխան,

2) որակի բարելավման նպատակով՝ իրականացնել փորձագիտական գնահատում՝ միջազգային զարգացումներին համապատասխանելու և Բարձրագույն կրթության եվրոպական տարածք (այսուհետ՝ ԲԿԵՏ) ինտեգրվելու տեսանկյունից:

Այս զեկույցը պարունակում է Գորիսի պետական համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների և միջազգային փորձագետի գործընկերային գնահատման դիտարկումները՝ ԲԿԵՏ ինտեգրվելու տեսանկյունից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գնահատման ամփոփում 4
Ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատում՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների 4
Գործընկերային գնահատում՝ բարձրագույն կրթության եվրոպական տարածքին ՄՈՒՀ-ի ինտեգրվելու տեսանկյունից 13
Փորձաքննության նկարագրությունը 18
Գնահատում ըստ հավատարմագրման չափանիշների 22
Համառոտ տեղեկատվություն ՄՈՒՀ-ի վերաբերյալ 22
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 24
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 28
III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 37
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 47
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 55
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 63
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 71
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 81
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 86
X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 93
Գնահատականները՝ ըստ հավատարմագրման չափանիշների 100
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 101
Հավելված 1. Փորձագիտական խմբի անդամների ինքնակենսագրականներ 101
Հավելված 2. Փորձագիտական այցի ժամանակացույց 103
Հավելված 3. Ուսումնասիրված փաստաթղթերի ցանկ 106
Հավելված 4. Ուսումնասիրված ռեսուրսներ 112
Հավելված 5. ՄՈՒՀ-ի կազմակերպական կառուցվածք 113
Հավելված 6. Հապավումների ցանկ 114

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ԳՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խմբի[1] կողմից: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ ԳՊՀ-ն բարձրագույն ուսումնական հաստատություն է, որն իր առաքելությունն է համարում.

1. տարածաշրջանի կրթության, մշակույթի, արդյունաբերության, իրավական դաշտի ու սպասարկման ոլորտի կարիքներին ու զարգացման հնարավորություններին համահունչ կրթական-հետազոտական ծրագրերի ու ծառայությունների իրականացումը՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, մրցունակ մասնագետների պատրաստումը, համագործակցային ծրագրերի՝ պատշաճ մակարդակով իրականացումը,
2. արտաքին ու ներքին շահակիցների հետ համագործակցության և հաշվետվողականության մշակույթի ձևավորումը, ինչը կնպաստի համալսարանի կողմից մատուցվող կրթական ծառայությունների թափանցիկությանը և կրթության որակի բարձրացմանը,
3. կրթության բնագավառում առաջավոր փորձի փոխանակման, միջազգային համագործակցության, կրթության բովանդակությանը և որակին ներկայացվող պահանջների ու չափանիշների ապահովումը,
4. բարեփոխումների ու նորամուծությունների ներդրման ճանապարհով բարձրագույն կրթության առաջանցիկ զարգացումը:

Փորձագիտական խումբը հաշվի է առել ԳՊՀ-ի, որպես բարձրագույն ուսումնական հաստատություն, կապերը ԿԳՄՄՆ-ի հետ, ինչպես նաև դերն ու նշանակությունը ինչպես Սյունիքի մարզի, այնպես էլ ՀՀ-ի համար: Միաժամանակ, փորձագիտական խումբը հաշվի է առել այն հանգամանքը, որ ԳՊՀ-ն արդեն երկրորդ անգամ է անցնում հավատարմագրման գործընթաց, ունեցել է նախորդ հավատարմագրման գործընթացի արդյունքում կազմված թերությունների վերացման ծրագիր:

ԳՊՀ-ի ՄԿԾ-ները կազմված են ՈԱՇ-ին համապատասխան վերջնարդյունքների վրա, իրականացվել են ՄԿԾ-ների կառուցվածքային բարեփոխումներ, քայլեր են կատարվել ըստ ուսումնառության ակնկալվող արդյունքների դասավանդման և գիտելիքի գնահատման մեթոդների համապատասխան ընտրություն ապահովելու համար: Բուհում կարևորում են նաև ակադեմիական ազնվության ապահովումը և քայլեր են ձեռնակել այդ ուղղությամբ: Սակայն շահակիցները թույլ են ներգրավված ՄԿԾ-ների մշակման և բարելավման գործընթացներում, միաժամանակ այդ գործընթացները հստակ

[1] ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐԸ

ինստիտուցիոնալացված չեն: Չնայած բուհը կարևորում է ՊԴ կազմի և ուսանողների շարժունությունը, սակայն հնարավորություններ դեռևս առկա չեն:

ԳՊՀ-ում առկա է ՊԴ և ՈւՕ կազմերի ձևավորման փաստաթղթային հենք, կան առաջընթացի ապահովման մեխանիզմներ: ՊԴ կազմը բազմազան է. կան բազմափորձ հնաբնակներ և նոր ներգրավված առաջատար մասնագետներ, երիտասարդ, նորը ներդնելու նախաձեռնությամբ դասավանդողներ և պրակտիկ փորձառությամբ մասնագետներ, այս ամենի արդյունքում հիմնականում ապահովվում է ՄԿԾ-ների իրականացման համար անհրաժեշտ ՊԴ կազմ: Մենթորության քաղաքականության բացակայությունն ու երիտասարդ դասախոսներով համալրելու գործընթացի անկատարությունը խոչընդոտում է սահուն սերնդափոխության գործընթացը: Չնայած ունեն ՊԴ կազմի գնահատման որոշ մեխանիզմներ, սակայն համակողմանի գնահատման և կարիքների վերհանման գործընթացը լիարժեք չէ, միաժամանակ հստակ չէ այդ գործընթացով պայմանավորված վերլուծությունների հիման վրա միջոցառումների կազմակերպման գործընթացը:

Համալսարանը անընդհատ և շարունակական աշխատանքներ է իրականացնում շենքային պայմանների բարելավման, ռեսուրսների համալրման և զարգացման ուղղությամբ: Չնայած ֆինանսական միջոցների սղությանը, կարողանում է համապատասխան կառավարման արդյունքում այդ նպատակով հատկացումներ կատարել համալսարանի բյուջեից, միաժամանակ իրականացվող արտաքին ծրագրերը ևս նպաստել են ռեսուրսային բազայի զարգացմանը: Դրա հետ մեկտեղ համալսարանը փորձում է պետական կառավարման մարմինների ուշադրությունը հրավիրել թե՛ ռեսուրսների զարգացման, թե՛ անվտանգության ապահովման նպատակների իրագործման հարցերին: Արդյունքում համալսարանին հաջողվում է ընդհանուր առմամբ ապահովել համապատասխան կրթական միջավայր: Չնայած համալսարանն ունի ֆինանսական ռեսուրսների բաշխման քաղաքականություն, սակայն հստակ չի արտահայտվում դրա կապակցվածությունը ՌԾ պլանավորման հետ: Ռեսուրսների համալրման գործընթացը թույլ է կապակցված ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների և ծառայությունների գնահատման և բարելավումների գործընթացների հետ:

ԳՊՀ-ն իրականացնում է տարբեր կրթական ծրագրեր, որոնցում առկա են այնպիսիք, որոնց իրականացման շարունակականության երաշխիքներ չկան: Սակայն այս շարքում կան պետական կարևորության բնագիտական ուղղության կրթական ծրագրեր, որոնք իրականացնելու համար համալսարանը գործադրում է հնարավոր բոլոր ջանքերը, սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ այս ուղղությամբ քայլերը առավել ինստիտուցիոնալացնելու կարիք կա, այդ թվում մեծ կարևորություն ունի այս հարցում պետական մեխանիզմների ներդրումն ու գործադրումը:

Չնայած ՄԿԾ-ներին, ՊԴ և ՈւՕ կազմերին և նյութական ու ֆինանսական ռեսուրսներին վերաբերող որոշ խնդիրներին, փորձագիտական խումբը գտնում է, որ համալսարանն հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում, իսկ առկա խնդիրներն ու վտանգները հաղթահարելի են:

ԳՊՀ-ն կարևոր դերակատարություն ունի տարածաշրջանում, և՛ որպես տարածաշրջանի աշխատաշուկայի բարձրագույն մասնագիտությամբ պայմանավորված

պահանջարկը լրացնելու առումով, և՛ տարածաշրջանում կրթական, գիտական և մշակութային զարգացումն ապահովելու առումով, սակայն դերը ըստ հնարավորությունների և մարտահրավերները հստակեցնելու ու դրանով պայմանավորված էլ հստակ գործընթացներ ապահովելու անհրաժեշտություն ունի:

Համալսարանում ստեղծված է կառավարման հստակ համակարգ, որը հիմնականում համալրված է համապատասխան մարդկային ռեսուրսներով ու անհրաժեշտ նյութական ռեսուրսներով, որի բարելավման ուղղությամբ շարունակական աշխատանքներ են իրականացվում: Համալսարանը կարևորում է ռազմավարական կառավարումը և այս ուղղությամբ կատարված որոշ աշխատանքներ տեսանելի են, սակայն երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորումները և ըստ դրանց հաշվետվողականության համակարգը դեռևս հստակ փոխկապակցված չեն, ուստի և չի երևում պլանավորման, իրականացման, գնահատման և բարելավման գործընթացների հստակ փոխկապակցված գործունակությունը և դրանցում առկա է խզվածք: Համալսարանը կարևորում է որակի ապահովման գործընթացները, առկա է համապատասխան ստորաբաժանում, աշխատանքներ են իրականացվել որակի ապահովման գործընթացների հետ կապված որոշակի փաստաթղթային հենք ստեղծելու ուղղությամբ, նաև հարցումներ են իրականացնում: Սակայն որակի ապահովման ներքին համակարգը դեռևս հստակ ձևավորված չէ, թույլ է արտահայտված վերջինիս ազդեցությունը որոշումների կայացման և բարելավումների վրա: Ներքին և արտաքին շահակիցների դերն էլ հստակեցված չէ այդ համակարգում և նրանց ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում դեռևս թույլ է և թույլ ազդեցիկ:

Վերոնշյալի արդյունքում փորձագիտական խումբը եզրակացնում է, որ կառավարման համակարգը բավականին ինստիտուցիոնալացված է, և ստեղծվել են նախադրյալներ զարգացման ապահովման համար, սական վերջինս բավարար կայուն չէ, քանի որ որակի ապահովման համակարգի ազդեցությունը դեռևս երաշխավորված չէ:

ԳՊՀ-ն ունի ուսանողների հավաքագրման և ընտրության հստակ քաղաքականություն, և ունի բավական թվով ուսանողներ, ընդ որում գերակշռում են հեռակա համակարգում ուսումնառողների թիվը: Համալսարանում աշխատակիցները պատրաստակամ են աջակցելու ուսանողներին, ընդ որում դա հիմնականում տեղի է ունենում առանց միջնորդավորման: ՈւԽ-ի դերակատարությունը որպես գործող կառույցի նկատելի չէ: Համալսարանը պատրաստակամ է աջակցելու ուսանողներին նաև կարիերայի հետ կապված, համապատասխան ենթակառուցվածքում տրամադրել է հաստիք, սակայն դեռևս նկատելի չէ բուհի ազդեցությունը շրջանավարտների կամ ուսանողների աշխատանքով ապահովվածության հարցում: Ուսանողները թույլ են մոտիվացված հետազոտական աշխատանքներում ներգրավվելու առումով:

ԳՊՀ-ն ունի ներքին և արտաքին շահակիցների առջև հաշվետվողականության հստակ քաղաքականություն և ձեռնարկել են քայլեր նաև դրանց բովանդակային բարելավման ուղղությամբ, սակայն դեռևս վերլուծական բաղադրիչը թույլ է արտահայտված: Համալսարանը մի շարք մեխանիզմներ է գործածում իր գործունեությունն առավել թափանցիկ և հասանելի դարձնելու, ինչպես նաև հասարակությանը գիտելիքի փոխանցման համար, սակայն դրանք ընդլայնելու և

բարելավելու կարիք ունեն: Բացի այդ հասարակության հետ հետադարձ կապի մեխանիզմները բարելավելու ուղղությամբ քայլերի անհրաժեշտություն կա:

ԳՊՀ-ն սահմանել է հետազոտության և միջազգայնացման ոլոտներում գերակայություններ և հավակնություններ, սակայն դրանց խզումը ապահովված արդյունքների հետ մեծ է: Առկա չեն վերլուծություններ և հիմնավորումներ, որ այդ ռազմավարական հավակնությունները բխում են իրենց հնարավորություններից և գրանցված արդյունքներով պայմանավորված էլ առկա չեն երաշխիքներ դրանք հասանելի դարձնելու հետ կապված: Երկու ուղղություններով էլ առկա են համապատասխան ենթակառուցվածքներ, որոնց գործունեությունը կանոնակարգված է: ԳՊՀ-ն 2010 թ.-ից իրականացնում է «Սյունիքի նյութական և հոգևոր (ոչ նյութական) ժառանգությունը» թեմայով դրամաշնորհային գիտական ծրագիրը: Հարկ է նշել, որ չնայաց առկա են ուսումնառության և հետազոտության փոխկապակցման մեխանիզմներ, սակայն դրանց արդյունքները վկայում են թույլ արդյունավետության մասին: Մտահոգիչ է ուսանողների և ՊԴ կազմի ակադեմիական շարժունության ցուցանիշների բացակայությունը վերջին 4 տարիներին և դեռևս նման հնարավորությունների բացակայությունը:

Այսպիսով՝ փորձագիտական խումբը եզրակացնում է, որ ԳՊՀ-ն ձգտում է ապահովել իր երկարաժամկետ զարգացումը, քայլեր է կատարել այս ուղղությամբ և ստեղծել նախադրյալներ, սակայն հետազոտության և միջազգայնացման ուղղությամբ ձեռքբերումները դեռևս բավարար երաշխիքներ չեն ստեղծել երկարաժամկետ զարգացման համար:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1) ՄԿԾ-ների կառուցվածքը, որը ներառում է մանրամասն նկարագիր ըստ շնորհվող որակավորումների և ակնկալվող ուսումնառության արդյունքների:
2) ՊԴ և ՈւՕ կազմերի ձևավորման և առաջընթացի ապահովման մեխանիզմների առկայությունը, համապատասխան ՊԴ, վարչական և ՈւՕ կազմերով ապահովվածությունը:
3) Համապատասխան ուսումնական միջավայրի առկայությունը, կրթական ծրագրերի նպատակների իրագործման համար ռեսուրսային բազայի շարունակական բարելավման և անվտանգ միջավայրի ապահովման ձգտումը:
4) Տարածաշրջանում, մարզում զբաղեցրած անփոխարինելի տեղը և դրանով պայմանավորված տարածաշրջանի աշխատաշուկայի համար նշանակությունը:
5) Կառավարման կանոնակարգված համակարգը, անհրաժեշտ հիմնական ռեսուրսներով ապահովվածությունն ու ռազմավարական կառավարման համակարգի ներդրման ձգտումը:
6) Որակի ապահովման գործընթացների կարևորումը համալսարանի կողմից և համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման ու մասնագետների առկայությունը:
7) Ուսանողների հավաքագրման և ընտրության հստակ մեխանիզմների առկայությունն ու նրանց աջակցելու և խորհրդատվություն տրամադրելու պատրաստակամությունը:
8) «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» բյուջետային ֆինանսավորմամբ իրականացվող «Սյունիքի նյութական և

հոգևոր (ոչ նյութական) ժառանգությունը» թեմայով դրամաշնորհային գիտական ծրագրի շարունակական իրականացումը:

9) Գիտական կենտրոնի որպես կառուցվածքային ստորաբաժանման առկայությունը:

10) Ներքին ու արտաքին շահակիցների առջև հաշվետվողականության հստակ սահմանված մեխանիզմների առկայություն և գործունեության թափանցիկության ու հասանելիության ապահովման պատրաստակամությունը:

11) Օտար լեզուների ամբիոնի և արտաքին կապերի ուղղությամբ համապատասխան ենթակառուցվածքի առկայությունը՝ համապատասխան փորձառությամբ մասնագետներով, միջազգային ծրագրեր իրականացնելու փորձի առկայությունը:

Հաստատության թույլ կողմերն են.

1) Կրթական ծագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման հստակ քաղաքականության բացակայությունը և մշակման ու բարելավման գործընթացներում ներքին ու արտաքին շահակիցների թույլ ներգրավվածությունը:

2) ՊԴ կազմի համակողմանի գնահատման և կարիքների վերհանման գործընթացի և դրա արդյունքների վրա հիմնված միջոցառումների կազմակերպման մեխանիզմների անկատարությունը:

3) Ֆինանսական ռեսուրսների ըստ ՌԾ-ի բաշխման մեխանիզմների անկատարությունը:

4) Ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների և ծառայությունների գնահատման և բարելավումների գործընթացների թույլ կապը:

5) Նպատակների ու խնդիրների ձևավորման և որակի ներքին ապահովման գործընթացներում շահակիցների թույլ ներգրավվածությունը և թույլ մոտիվացվածությունն այդ առումով:

6) Նպատակների թերի պլանավորմամբ պայմանավորված դրանց իրականացման, գնահատման մեխանիզմների անկատարությունը:

7) Ուսումնասիրությունների և որոշումների կայացման ու բարելավումների իրականացման թույլ կապը:

8) Որակի ապահովման ներքին համակարգի ոչ հստակ կառույցը և դրա թույլ ազդեցությունը որոշումների կայացման վրա:

9) Ուսանողների՝ հետազոտական աշխատանքներում ներգրավվելու թույլ մոտիվացվածությունը և խրախուսման մեխանիզմների բացակայությունը, ուսումնառության և հետազոտության փոխկապակցման մեխանիզմների թույլ արդյունավետությունը:

10) Հետազոտական ոլորտի (այդ թվում՝ ոլորտի միջազգայնացման) զարգացման հստակ գործառնական քաղաքականության բացակայությունը, ոլորտում ռազմավարական կառավարման անկատարությունը, հետազոտական ոլորտում ապահովված արդյունքների և հավակնությունների անհամապատասխանությունը:

11) Հաշվետվություններում ՌԾ-ի հետ կապի և վերլուծական բաղադրիչի անկատարություն:

12) Միջազգայնացման ուղղությամբ ռազմավարության և հնարավորությունների անհամապատասխանությունն ու ակադեմիական շարժունության հնարավորությունների բացակայությունը:

13) Գործող արտաքին կապերի ոչ լիարժեքությունը ՌԾ-ով նախատեսված արդյունքներն ապահովելու համար:

Հիմնական խորհրդատվություններ.

Առաքելությունը և նպատակները

1. Ձևավորել նոր իրավիճակին համապատասխան և իրական հնարավորություններից բխող զարգացման ՌԾ՝ վերանայելով, վերագնահատելով դերը տարածաշրջանի համար և հաշվի առնելով շահակիցների ակնկալիքներն ու կարիքները:

2. Ապահովել ՌԾ-ի իրագործման հստակ իրագործելի և չափելի գործողությունների պլան՝ ներառելով կատարողականի ցուցիչներ և բարելավել ՌԾ-ի մշտադիտարկման և գնահատման մեխանիզմները:

Կառավարումն ու վարչարարությունը

3. Ներդնել կառավարման մարմիններում ընդգրկված շահակիցների մոտիվացվածության և ակտիվ ներգրավվածության ապահովման մեխանիզմներ:

4. Բարելավել ռազմավարական պլանավորումը՝ դրանք կապակցելով միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորման հետ, ինչպես նաև ներդնել դրանց մշտադիտարկման արդյունքահեն համակարգ:

5. Հստակեցնել բուհի գործունեության վրա ազդող հիմնական գործոնները և պլանավորման և բարեփոխումների գործընթացները պայմանավորեցնել վերջիններիս համալիր և համակողմանի վերլուծություններով:

6. Ապահովել կառավարման և վարչարարության գործընթացների համընթաց զարգացումը՝ ՊԻԳԲ շրջափուլի հիման վրա:

7. Ապահովել տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և հրապարակումների գնահատման մեխանիզմների բարելավումը՝ հենված ուսումնասիրությունների և վերլուծությունների վրա:

Մասնագիտության կրթական ծրագրերը

8. Ներդնել աշխատաշուկայի պահանջների ուսումնասիրման մեխանիզմներ՝ տվյալներն օգտագործելով ինչպես կրթական ծրագրերի ներդրման, այնպես էլ դրանց վերանայման (նաև՝ դասընթացի բովանդակության) ժամանակ:

9. Կրթական ծագրերի մշակման և բարելավման գործընթացներում ներգրավել ներքին և արտաքին շահակիցների լայն շրջանակ՝ ապահովելով կրթական ծրագրի և դասընթացների վերջնարդյունքների հստակ փոխկապակցվածությունը, ինչպես նաև փաստաթղթերի և պրակտիկ գործընթացների նույնականացումը:

10. Բարելավել պրակտիկ կարողությունների և հմտությունների ձևավորումն ապահովող դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդները:

11. Ներդնել դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների արդյունավետության գնահատման մեխանիզմներ՝ ապահովելով համընթաց կատարելագործումը:

12. Ապահովել ակադեմիական շարժունության հնարավորություններ, առաջավոր փորձի (միջազգային և ազգային) ուսումնասիրման (ՄԿԾ-ների և մեթոդների), բարելավումների հանգեցնող մոտեցումներ, այդ թվում՝ կիրառելով գործատուների հետ համագործակցության շրջանակները և խրախուսել համապատասխան գործունեությունը:

13. Ներդնել կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման հստակ քաղաքականություն՝ հիմնված համակողմանի վերլուծությունների, աշխատաշուկայի հարափոփոխ զարգացման, առաջավոր փորձի ուսումնասիրման վրա:

Ուսանողները

14. Կիրառել ուսանողների և շրջանավարտների կարքիների վերհանման բազմազան մեխանիզմներ՝ հաշվի առնելով հեռակա կրթաձևի ուսանողների առանձնահատկությունները,

15. Ակտիվացնել ուսանողական խորհրդի ներգրավվածությունը բուհում ուսանողների իրավունքների իրազեկման և պաշտպանության գործընթացներում

16. Ներդնել ուսանողների մասնակցությունը գիտահետազոտական աշխատանքներում խրախուսելու գործիքակազմ և մեխանիզմներ:

17. Ապահովել շրջանավարտ-բուհ-գործատու կապ և համապատասխան համագործակցության շրջանակ՝ ուղղված ուսանողների կարիերային նպաստող համակարգված գործընթացների իրականացմանն ու զարգացմանը, աշխատաշուկայի արդյունավետ համալրմանը:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

18. Ապահովել ՊԴ կազմի նաև մրցութային կարգով պաշտոնների տեղակալում՝ կարևորելով ըստ ՄԿԾ-ների պահանջները:

19. Կանոնակարգել առաջատար մասնագետներ, գործատուներ հրավիրելու գործընթացը՝ սահմանելով հստակ չափանիշներ և, ըստ հնարավորության, ներգրավելով նաև միջազգային մասնագետների:

20. Ընդլայնել գործատուների հետ համագործակցության շրջանակները և ապահովել հրավիրյալ դասախոսների լիարժեք ներգրավվածությունը բուհի գործընթացներին՝ միտված ՊԴ կազմի կատարելագործմանը (այդ թվում՝ փորձի փոխանակմանը):

21. Նոր մեխանիզմների ներդրումը (մասնավորաբար՝ ՊԴ կազմի վերապատրաստման և որակավորման բարձրացման ծրագիր, ԿԾ պատասխանատուներ) պայմանավորեցնել հետազոտությունների արդյունքներով՝ նվազեցնելով դրանց ներդրմամբ պայմանավորված ռիսկերն ու խնդիրները, ինչպես նաև հստակեցնելով ներդրումից ակնկալիքները:

22. Ապահովել ՊԴ կազմի համակողմանի գնահատման և կարիքների վերհանման գործընթաց՝ միտված համընթաց զարգացման ապահովմանը և գործածվող մեխանիզմների բարելավմանը (այդ թվում՝ առաջընթացի և սերնդափոխության ապահովման մեխանիզմների):

23. Ապահովել կարիքների վերհանման վրա հիմնված միջոցառումների համալիր՝ գնահատելով դրանց արդյունավետությունը:

24. ՊԴ, ՈւՕ և վարչական կազմերի պարգևատրման, խրախուսման, առաջընթացի մեխանիզմները ինստիտուցիոնալացնել՝ պայմանավորեցնելով ՌԾ-ի առաջնահերթություններով և շահակիցներին հայտնի նախապես սահմանված չափանիշներով՝ գնահատելով ներդրված մեխանիզմների արդյունավետությունը:

Հետազոտությունը և զարգացումը

25. Ապահովել հետազոտության ոլորտում ռազմավարական կառավարում ըստ սահմանված գերակայությունների և ՌԾ-ի՝ վերջինս պայմանավորեցնելով առկա նյութական, ֆինանսական և մարդկային ռեսուրսներով, հնարավորություններով, հստակ պատասխանատվությունների բաշխմամբ և դարձնելով իրագործելի ու չափելի:

26. Հստակեցնել Գիտական կենտրոնի դերն ու ապահովել ազդեցությունը գիտահետազոտական գործընթացների զարգացման վրա:

27. Մշակել և ներդնել գիտահետազոտական գործունեության միջազգայնացման քաղաքականություն՝ ապահովելով այդ ուղղությամբ գործընթացների շարունակական զարգացում:

28. Ընդլայնել գիտահետազոտական ոլորտում համագործակցության շրջանակները՝ միաժամանակ վերջինս ծառայեցնելով պրակտիկաների շրջանակներում հետազոտությունների իրականացմանը՝ գործատուների ռեսուրսների կիրառմամբ:

29. Ապահովել ուսումնական և հետազոտական գործընթացների փոխկապակցման մեխանիզմների արդյունավետ գործառնությունը՝ գնահատելով արդյունքները և բարելավելով դրանք:

30. Ապահովել ուսանողների ներգրավվածությունը գիտահետազոտական աշխատանքներում՝ ներդնելով խրախուսման և խթանման մեխանիզմներ (այդ թվում՝ ՊԴ կազմի մոտիվացմամբ):

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

31. Ապահովել ֆինանսական ռեսուրսների բաշխման և ՌԾ-ի նպատակների իրականացման փոխկապակցվածություն, ներդնել ռեսուրսների համալրման և զարգացման մեխանիզմ՝ ներգրավելով շահակիցներին:

32. Ապահովել ֆինանսական մուտքերի բազմազանեցում՝ ֆինանսական կայունության երաշխավորման նպատակով:

33. Ապահովել ՄԿԾ-ների (հատկապես պետության և տարածաշրջանի համար կարևոր) շարունակականության երաշխավորման քաղաքականություն և ինստիտուցիոնալ մեխանիզմներ՝ հիմնված համալիր վերլուծությունների վրա /այս խնդրում կարևոր է պետական աջակցությունն ու համապատասխան քաղաքականությունը/:

34. Ներդնել փաստաթղթաշրջանառության և տեղեկատվության տարածման գործընթացների բարելավման մեխանիզմներ՝ հենված շահակիցների կարիքների և արդի պահանջների վրա:

35. Իրականացնել ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների և ծառայությունների պարբերական գնահատում՝ ռազմավարական ծրագրի նպատակներին և ՄԿԾ-ի պահանջներին համապատասխան:

Հասարակական պատասխանատվությունը

36. Բոլոր օղակների հաշվետվություններում ապահովել ՌԾ-ի հետ կապը և վերլուծական բաղադրիչի առկայությունը, իրականացնել հաշվետվողականության մեխանիզմների արդյունավետության գնահատում:

37. Գնահատել հասարակության լայն շրջանակի հետ հետադարձ կապի ապահովման մեխանիզմների արդյունավետությունը, բարելավել և կատարելագործել դրանք, այդ

թվում՝ պաշտոնական կայքէջի տեղեկատվությունը՝ անդրադառնալով արձագանքների վերլուծություններին, օտարալեզու նյութերի ընտրության մեխանիզմներին:

38. Ընդլայնել հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմները լրացուցիչ ծրագրերի, դասընթացների. խորհրդատվական կենտրոնների միջոցով՝ հենված հասարակության ակնկալիքների և բուհի հնարավորությունների վրա, և գնահատել դրանց արդյունավետությունը:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

39. Վերագնահատել միջազգայնացման ոլորտում ԳՊՀ-ի սահմանած հավակնությունները՝ հիմնվելով սեփական համատեքստի վրա՝ ապահովելով արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմներ և գործընթաց, այդ թվում նաև ներդնել վերլուծական հաշվետվությունների մեխանիզմը:

40. Հստակեցնել արտաքին կապերի քաղաքականությունը՝ ընդլայնելով համագործակցության շրջանակները և համապատասխանեցնելով ԳՊՀ-ի ՌԾ-ին, կարիքներին, հնարավորություններին և տարածաշրջանային առանձնահատկություններին: Որպես առանձին հնարավորություն դիտարկել հայկական սփյուռքը՝ հենվելով ուսումնասիրությունների վրա:

41. Հնարավորություններ ստեղծել ուսանողների և դասախոսների շարժունության ապահովման համար՝ նպաստելով փորձի փոխանակմանն ու զարգացմանը:

42. Փորձի փոխանակման, առաջավոր փորձի ուսումնասիրման և լեզվահմացության զարգացման միջոցով ապահովել զարգացման և միջազգայնացման արդյունավետ գործընթաց՝ ներդնելով խրախուսման և մոտիվացման մեխանիզմներ. Լեզվահմացության զարգացման գործընթացում կարևորել ներուժի և հնարավորությունների ուսումնասիրություններն ու թիրախավորումը՝ գործընթացի նպատակներով պայմանավորված:

Որակի ներքին ապահովման համակարգը

43. Հստակեցնել որակի ապահովման ներքին համակարգը և օղակների (այդ թվում՝ ԿՈԱ և ՈւԿԱ բաժնի) դերը դրանում՝ ապահովելով համապատասխան փաստաթղթային հենք և գործընթացների համապատասխանություն դրանց:

44. Ապահովել որակի ապահովման գործընթացների հստակ պլանավորում՝ նաև ռեսուրսների և պատասխանատուների տրամադրմամբ:

45. Ներդնել որակի ապահովման գործընթացների համար տրամադրվող ռեսուրսների արդյունավետության և կարիքների գնահատման մեխանիզմներ՝ ապահովելով դրանց արդյունքների հիման վրա բարելավման և կատարելագործման գործընթացներ:

46. Ապահովել ներքին և արտաքին շահակիցների մոտիվացված ներգրավվածությունը որակի ներքին ապահովման գործընթացներում:

47. Ապահովել գործընթացների իրագործման համար ՊԻԳԲ շրջափուլով ընթացքը:

48. Ապահովել ընթացիկ համակողմանի հետազոտությունների (այդ թվում՝ պարբերական հարցումների) և դրանց վերլուծությունների իրականացում, ինչպես նաև արդյունքների արդյունավետ կիրառում:

49. Ապահովել ընթացակարգերի և գործընթացների որակի վերաբերյալ (այդ թվում՝ հետազոտությունների և դրանց վերլուծությունների արդյունքների) հասանելիությունը շահակիցներին:

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Ընդհանուր դիտարկումներ

Գորիսի պետական համալսարանը փոքր բուհ է, որն իր գործունեությունը ծավալում է դժվար պայմաններում՝ պայմանավորված Սյունիքի մարզի մեկուսացած աշխարհաքաղաքական դիրքով: Վերջին ժամանակներում ստեղծված պատերազմական իրավիճակը և Քովիդ-19 համավարակը բուհի գործունեության խաթարման պատճառ դարձան: Չնայած այդ բացառիկ դժվարություններին՝ ԳՊՀ-ն գիտակցում է, որ միջազգային հարաբերությունների հաստատումն ու միջազգայնացումը բուհի գործունեության բաղկացուցիչ մասն են: Հետևապես բուհը շարունակում է կարևորել միջազգային հարաբերությունների և միջազգայնացման ապահովումն ու զարգացումը՝ Եվրոպական բարձրագույն կրթության տարածքին համահունչ: ԳՊՀ-ի կողմից առաջարկվող կրթությունն իրականացվում է երկաստիճան բարձրագույն կրթության շրջանակում՝ Բոլոնիայի համակարգին համապատասխան: Ուսումնառության վերջնարդյունքների ձևավորումը ՀՀ Որակավորումների ազգային շրջանակին համապատասխան կրթական համակարգի մաս է կազմում: ԳՊՀ-ն իր կրթությունն իրականացնում է կրեդիտային համակարգով՝ հիմնվելով ուսանողակենտրոն մոտեցման վրա:

Առաքելություն և ռազմավարական առաջնահերթություններ

ԳՊՀ-ի առաքելությունը բխում է Բոլոնիայի սկզբունքներից: ԳՊՀ-ն ՀՀ Սյունիքի մարզի առաջատար բուհ է, որի առաքելությունն է պատրաստել բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական աստիճաններում բարձրորակ մասնագետներ, որոնք կկարողանան հաղթահարել բարձրագույն կրթության, տնտեսության, արտադրության և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում առաջացող մարտահրավերները: Ինչպես կարելի է ենթադրել ԳՊՀ-ի ինքնավերլուծությունից, ԲԿԵՏ-ին ինտեգրումը բուհի ռազմավարության հստակ առանձնացված մաս չի կազմում: ԲԿԵՏ-ին ինտեգրումը կարելի է ընկալել տարբեր ձևերով: Այդ ձևերից մեկը կարելի է համարել ԲԿԵՏ-ի տարածքում ընդգրկված այլ բուհերի կառուցվածքի, մշակույթի և փորձառության նույն սկզբունքների որդեգրումը, մասնավորապես՝ բարձրագույն կրթության եռաստիճան համակարգը, հստակ մշակված որակի ապահովումը, ուսանողակենտրոն ուսուցումը և Կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգը (ECTS): ԳՊՀ-ն իրապես ու բացահայտ կերպով նշում է այդ սկզբունքների պահպանման վերաբերյալ, և այդ ուղղությամբ բուհի ջանքերը տեսանելի են: ԲԿԵՏ-ին ինտեգրվելու մեկ այլ ձև է բուհերի բաց և փոխկապակցված համակարգի մաս դառնալը, որի շրջանակում ուսանողները և պրոֆեսորադասախոսական կազմը կունենան այդ տարածքում ազատ տեղաշարժի իրատեսական հնարավորություններ, և ակտիվ միջբուհական համագործակցությունը կնպաստի, որպեսզի բուհերը հնարավորինս արդյունավետորեն մատուցեն ծառայություններն իրենց շահակիցներին: ԳՊՀ-ն հայտարարում է նաև ԲԿԵՏ-ին առնչվող այդ նպատակի ընդունման մասին: Այսուհանդերձ, փաստացի հանգամանքներն առաջացնում են աննախադեպ խոչընդոտներ զգալի ձեռքբերումներ ունենալու ճանապարհին, ինչպես նաև առաջադրում են այն հարցը, ըստ որի՝ արդյոք այդ

նպատակն իրապես կարևոր տեղ պետք է զբաղեցնի ռազմավարության մեջ: Հստակ չէ, թե ԳՊՀ-ի ղեկավար կազմը որքանով է ԲԿԵՏ-ին առնչվող նշված երկրորդ նպատակի իրականացման հանձնառությունը համարում արտաքին ուժերի կողմից պարտադրված խնդիր:

Մասնագիտության կրթական ծրագրեր, դասավանդում և ուսումնառություն

ԳՊՀ-ում իրականացվող կրթության մեջ ներգրավված են հեռակա ուսուցմամբ մեծաթիվ ուսանողներ: Լիարժեք հստակ չէ, թե որքանով է ուսանողական համակազմի այսպիսի բնութագիրը ենթադրում, որ պետք է կիրառել առաջարկվող կրթությանը և ուսանողներին մատուցվող ծառայություններին հարմարեցված մոտեցում: ԳՊՀ-ն իսկապես նման հարմարեցված մոտեցման կիրառման որոշակի նշաններ ցույց է տալիս, սակայն այն առավել ակներև կլիներ, եթե համապատասխան պատճառաբանությամբ և նպատակներով հիմնավորվեր առկա և հեռակա ուսուցմամբ ուսանողների տարբերակվածությունը, օրինակ՝ վերլուծության միջոցով առավել հստակեցնել հեռակա ուսուցմամբ ուսանողական համակազմի տարբերակվածությունը: Արդյոք հեռակա ուսանողների ուսումնառությունն ինտեգրվա՞ծ է նրանց առկա աշխատանքային զբաղվածության ոլորտին, նրանք նպատակ ունե՞ն բարելավել իրենց զբաղվածության հեռանկարները:

ԳՊՀ-ն ՈւՎ-երի ձևավորման ուղղությամբ հետագա բարելավման ներուժ ունի, մասնավորապես մետաճանաչողական (ընդհանուր ակադեմիական) և ոչ ճանաչողական (անձնական) կարողությունների ձևավորման տիրույթում: Այդպիսի մետա/ոչ ճանաչողական ՈւՎ-երի ձևավորման բարելավումը կարող է խթանել նաև դասավանդման/ուսումնառության ինտեգրման գործընթացների բարելավումը, որն էլ կարող է օժանդակել զարգացնելու որոշակի ՈւՎ-եր:

Պրոֆեսորադասախոսական կազմ

Բուհը մատնանշում է, որ ՊԴ առավել բազմազան կազմի կարիք կա: Դա կարելի է հատկապես բացատրել այն առումով, որ ՊԴ կազմը պետք է տարբերակել, օրինակ, ըստ սեռային, տարիքային, սոցիալական և մշակութային բաշխվածության, անհրաժեշտ է մեծացնել միջազգային դասախոսների, ինչպես նաև սփյուռքահայ մասնագետների թիվը:

Բուհը շեշտադրում է «թիմային աշխատանք» և «ստեղծագործական հմտություններ» բաղադրիչները՝ որպես կարողություններ, որոնք անհրաժեշտ են ՊԴ կազմի համալրման համար: Թեև գովելի է զուտ մասնագիտական կարողություններից բացի նաև անձնային որակների կարևորումը, սակայն միևնույն ժամանակ ԳՊՀ-ն պետք է առավել հստակեցնի, թե ինչու են այդ առանձնահատուկ կարողություններն ընտրվել, և ինչպես են դրանք գնահատվում համալրման գործընթացում:

Հետազոտություն

Թեև բուհի ռազմավարական ծրագրում հետազոտությունը ֆորմալ կերպով դիտարկվում է որպես առաջնահերթություն, այն ԳՊՀ-ի ամենաքիչ զարգացած ոլորտն է, և միջազգային բուհերի հետ համեմատած՝ առկա բացը մեծ է: Նշված խնդիրը հասկանալի է, երբ բուհը դիտարկվում է Սյունիքի մարզի աշխարհաքաղաքական և սոցիալ-տնտեսական

պայմաններում: Վերջիններս հաշվի առնելով՝ բուհի հետազոտության ոլորտի քաղաքականությունն ու ռազմավարությունն առավել շահեկան դիրքում կլինեին, եթե հաշվի առնվեր հետազոտության ոլորտում հետազոտական համալսարանների ու բուհերի և մասնավորապես ԳՊՀ-ի համար առավել համապարփակ կերպով մշակված գործառույթների շրջանակը: Հետազոտությունը կարևոր է, քանի որ դրա միջոցով բուհը կարող է.

- խթանել նոր (դեռևս գոյություն չունեցող) գիտելիքի ստեղծումը,
- կիրառել և/կամ առկա գիտելիքը համապատասխանեցնել կամ հարմարեցնել ԳՊՀ-ի համատեքստին ու իր շահակիցների կարիքներին,
- օժանդակել ԳՊՀ ՊԴ կազմի և ուսանողների ակադեմիական կարողությունների զարգացմանը, կամ՝ պարզապես բավարարել հետազոտություն իրականացնելու իր կարիքը:

ԳՊՀ-ն կարող է իր ռազմավարության և իրականության միջև առկա բացը նեղացնել հետազոտության ոլորտում գործառույթի կամ գործառույթների հստակ սահմանման միջոցով, որոնք առավել համապատասխան են ԳՊՀ-ին: Նշվածի իրականացումը կարող է օժանդակել բուհի և՛ ներկա իրավիճակի, և՛ միջնաժամկետ ու երկարաժամկետ զարգացմանը:

Միջազգայնացում

Միջազգայնացումն իրապես ԳՊՀ ռազմավարության մաս է կազմում: Հստակ չէ, թե միջազգայնացման այդ ռազմավարությունը որքանով է բխում բուհի տեսլականից ու ղեկավարության կողմից կատարված վերլուծությունից, ինչպես նաև ՀՀ բարձրագույն կրթության քաղաքականության ոլորտում սահմանված նորմերից և առկա ակնկալիքներից: ՀՀ բարձրագույն կրթության քաղաքականությունը թերևս առաջադրում է միջազգայնացման ռազմավարության պահանջ, սակայն հստակ սահմանված չեն միջազգայնացման ոլորտում ՀՀ բուհերի հավակնություններն ու համապատասխան մակարդակները, և թե ինչպես կարելի է դրանք տարբերակել ըստ որոշակի համատեքստի ու ՀՀ բուհերի առանձնահատուկ կարիքների: Միջազգայնացման ոլորտում ԳՊՀ-ի ռազմավարության արդյունավետությունը պահանջում է, որ այն հիմնված լինի բուհի տեսլականի ու առաքելության վրա՝ ԳՊՀ-ի համար ընտրելով որոշակի տեղ ու դիրք ՀՀ բուհերի համար միջազգայնացման ոլորտում սահմանված նորմերի ու ակնկալիքների համընդհանուր համատեքստում:

Որակի ապահովում

ԳՊՀ-ում որակի գնահատման ռազմավարությունն ու փորձն ավելի շատ կենտրոնացված են ընթացակարգերի և սահմանված գործողությունների իրականացման, քան որակի ապահովման մեխանիզմների կիրառման և կրթության, հետազոտության ու հասարակական պատասխանատվության/ ծառայությունների ոլորտներում բուհի սահմանած հեռահար նպատակների իրականացման խթանման վրա: Բուհը կարող է իր ղեկավարության, վարչական և ՊԴ կազմերի հստակ ու համընդհանուր տեսլականն ու արժեքները՝ որպես ՈԱ գործընթացների ուղենիշներ, դարձնել առավել տեսանելի: Նշվածը կարող է ծառայել ԳՊՀ-ի գործունեության ՈԱ ոլորտի բարելավմանը՝ ՈԱ

համակարգին առնչվող հետևյալ առանցքային հասկացությունները/հարցադրումները որպես ուղենիշներ դիտարկելու միջոցով.

- համապատասխանություն. «արդյոք մենք ճի՞շտ գործեր ենք կատարում»,
- արդյունավետություն. «մենք իրականում հասնու՞մ ենք մեր նպատակակետին և արդյոք մեր գործողությունները կատարու՞մ ենք խելամտորեն և ռեսուրսների խնայողությամբ»,
- ազդեցություն. «մենք տեսնու՞մ ենք նշաններ, որ ձեռքբերումները դրական ազդեցություն ունեն նաև անմիջականորեն ներառված ոլորտների շրջանակից դուրս»,
- կայունություն. «մենք կարո՞ղ ենք վստահ լինել, որ ձեռքբերումները երկարաժամկետ կլինեն»,
- համահունչություն. «արդյոք մեր ընդհանուր գործունեությունը ճի՞շտ ուղու վրա է, ապահովվա՞ծ է գործունեության ոլորտների փոխկապակցվածությունը, և բուհը կարողանու՞մ է խուսափել խաչվող խոչընդոտներից»:

Խորհրդատվություններ

1. Տարբերակել ԲԿԵՏ-ին ինտեգրման ջանքերը՝ մի կողմից պահպանելով միանման սկզբունքները, մյուս կողմից՝ բաց շարժունության և համագործակցային դաշտին ինտեգրումը,
2. հստակեցնել միջազգայնացման ոլորտում բուհի հավակնությունները և դրանք դարձնել իրատեսական այն առումով, որ հստակ լինի, թե ԲԿԵՏ-ին ինտեգրումը որքանով է ցանկալի և հասանելի,
3. առավել հստակ կերպով պատճառաբանել և հիմնավորել առկա ու հեռակա ուսուցմամբ սովորող ուսանողական համակազմի տարբերակվածությունը և վերջինիս հիմքում առավել հստակ կերպով դիտարկել հեռակա ուսուցմամբ սովորող ուսանողական համակազմի վերլուծությունը,
4. բարելավել ՈւՎ-երի ձևավորումը հատկապես մետաճանաչողական (ընդհանուր ակադեմիական) և ոչ ճանաչողական (անձնական) կարողությունների տիրույթում, որը հիմք կհանդիսանա դասավանդման/ուսումնառության ինտեգրման գործընթացների բարելավման համար և կօժանդակի որոշակի ՈւՎ-երի զարգացմանը,
5. առավել հստակեցնել ՊԴ կազմի բազմազանության խնդիրը, մասնավորապես՝ ՊԴ կազմը պետք է տարբերակել, օրինակ, ըստ սեռային, տարիքային, սոցիալական և մշակութային բաշխվածության, անհրաժեշտ է մեծացնել միջազգային դասախոսների, ինչպես նաև սփյուռքահայ մասնագետների թիվը,
6. առավել հստակ դարձնել այն, թե ինչու և ինչպես ոչ ճանաչողական որոշակի որակներ պետք է դիտարկել որպես չափանիշներ անձնակազմի համալրման համար,
7. ավելի հստակ ձևակերպել, թե հետազոտության մասնավորապես որ գործառույթը կամ գործառույթներն են համապատասխանում ԳՊՀ-ին ինչպես ներկա դրությամբ, այնպես էլ միջնաժամկետ և երկարաժամկետ ռազմավարական հեռանկարներում,

8. առավել հստակեցնել միջազգայնացման ռազմավարությունը և այն ավելի շատ համապատասխանեցնել բուհի համատեքստին,
9. վերահավասարակշռել բուհի ՈԱ ռազմավարությունը և բուհի համընդհանուր նպատակների իրագործման փորձը, առավել արդյունավետ կերպով կիրառել ՈԱ փորձառությունը՝ հիմնվելով բուհի ղեկավարության, ՊԴ և վարչական կազմերի հստակ ու համընդհանուր տեսլականի վրա,
10. գնահատել՝ արդյոք և ինչպես կարող են *համապատասխանություն, արդյունավետություն, ազդեցություն, կայունություն* և *համահունչություն* բաղադրիչների հարցադրումները դառնալ գործիքակազմ:

_____

Արմենուհի Սարգսյան
Փորձագիտական խմբի ղեկավար

23 հուլիսի 2021

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Գորիսի պետական համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

1. **Արմենուհի Սարգսյան՝** ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, Շիրակի պետական համալսարանի Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն,
2. **Կիս Կուվենար՝** պատմության դոկտոր, Նիդերլանդների Ավրորա եվրոպական համալսարանների միության գլխավոր քարտուղար,
3. **Նարինե Կիրակոսյան՝** տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, Եվրոպական համալսարանի Կառավարման ամբիոնի վարիչ,
4. **Նարինե Միրականյան՝** մանկավարժական գիտությունների թեկնածու, ՀՀ Կրթության տեսչական մարմնի Ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման, վերլուծությունների և գնահատման վարչության փորձագետ,
5. **Գրիգոր Բեջանյան՝** Հյուսիսային համալսարանի Իրավագիտության բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ, և նշանակվել ՈԱԱԿ-ի տնօրենի որոշմամբ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ Քաղաքականության մշակման և իրականացման բաժնի մասնագետ Մերի Բարսեղյանը:

Թարգմանությունը կատարել են Երևանի Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարանի դասախոսներ Վարդանուշ Բաղդասարյանը և Անի Շահինյանը:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, թարգմանիչն ու համակարգողը ստորագրել են անկախության և գաղտնիության համաձայնագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար ԳՊՀ-ն դիմել է ՈԱԱԿ՝ լրացնելով սահմանված ձևաչափի դիմում-հայտը և ներկայացնելով լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները, կից փաստաթղթերը:

Դիմում-հայտի ընդունման մասին որոշում կայացնելուց հետո ՈԱԱԿ-ի և ԳՊՀ-ի միջև կնքվել է երկկողմ պայմանագիր: Կազմվել և հաստատվել է աշխատանքների իրականացման ժամանակացույց, որն այնուհետև փոփոխվել է՝ պայմանավորված COVID-19 համավարակով և ՀՀ-ում արտակարգ, այնուհետ՝ ռազմական դրությամբ:

Ինքնավերլուծություն

Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը՝ հայերեն և անգլերեն լեզուներով, և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը:

ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությունն իրականացրել է հատուկ այդ նպատակով ՄՈՒՀ-ի ռեկտորի հրամանով ձևավորված խումբը: Խմբում ներգրավվել են ներկայացուցիչներ բուհի վարչական, ուսումնական, պրոֆեսորադասախոսական և ուսանողական համակազմից:

ՈԱԱԿ-ն ուսումնասիրել է զեկույցը՝ տեխնիկական առումով ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: ԳՊՀ ներկայացրած ինքնավերլուծությունը չի համապատասխանել սահմանված միասնական ձևաչափին, առկա են եղել տեխնիկական, ձևաչափային և բովանդակային թերություններ: Ինքնավերլուծությունը վերադարձվել է բուհին, և բուհը սահմանված ժամկետներում շտկել է թերությունները և ինքնավերլուծությունը համապատասխանեցրել ՈԱԱԿ սահմանված ձևաչափին: Ինքնավերլուծությունը ՈԱԱԿ է ներկայացվել 06.04.2020թ.-ին: Այնուհետև ինքնավերլուծությունն ու կից փաստաթղթերի փաթեթը, համալսարանի կողմից լրացված էլեկտրոնային հարցաշարը տրամադրվել են փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է համալսարանի հետ, և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով:

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խմբին աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով ՈԱԱԿ-ի կողմից իրականացվել են չորս վերապատրաստումներ հետևյալ թեմաներով.

1. Փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
2. Նախնական գնահատումը՝ որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները,
3. Փաստաթղթերի և ռեսուրսների ուսումնասիրության մեթոդաբանությունը,
4. Հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Նախնական գնահատման ընթացքում փորձագիտական խմբի անդամները մասնակցել են նաև բուհում տեղի ունեցող առցանց դասերին և իրականացրել դասալսումներ:

Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց[2]:

Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն և այլն:

Նախապատրաստական այց

2020 թվականի ապրիլի 19-ին Զում (Zoom) հարթակում տեղի է ունեցել առցանց հանդիպում համալսարանի ղեկավար կազմի հետ: Հանդիպման ժամանակ համալսարանի հետ քննարկվել և համաձայնեցվել է փորձագիտական այցի

[2] ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ժամանակացույցը, ներկայացվել է ուսումնասիրության ենթակա լրացուցիչ փաստաթղթերի ցանկը, քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի կազմակերպչական, տեխնիկական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ: Քննարկվել են ֆոկուս խմբային հանդիպումների և փորձագիտական խմբի աշխատանքի համար նախատեսված պայմանները, հստակեցվել են առցանց միջավայրում հանդիպումների իրականացման կանոնները:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը նախապես պլանավորված է եղել իրականացնել եռօրյա ժամկետներում, սակայն առցանց իրականացման պարագայում եռօրյա փորձագիտական այցը դարձել է քառօրյա՝ պահպանելով փորձագիտական խմբի համար նույն աշխատածավալը: Փորձագիտական առցանց այցը տեղի է ունեցել 2021 թ. ապրիլի 26-ից 29-ը ընկած ժամանակահատվածում: Ժամանակացույցի համաձայն փորձագիտական այցի աշխատանքները մեկնարկել են փակ հանդիպմամբ, որի նպատակն էր միջազգային փորձագետ Կիս Կուվենարի հետ քննարկել և համաձայնեցնել փորձագիտական գնահատման շրջանակը, այցի ընթացքում ուսումնասիրման ենթակա խնդիրները, ՄՈՒՀ-ի ուժեղ և թույլ կողմերը՝ ըստ չափանիշների, ֆոկուս խմբային հանդիպումների ընթացակարգը, հստակեցնել հետագա քայլերը:

Այցին ներկա է գտնվել փորձագիտական խումբն ամբողջությամբ, ՈԱԱԿ-ի համակարգողը և թարգմանիչը:

Փորձագիտական առցանց այցը սկսվել և ավարտվել է Գորիսի պետական համալսարանի ղեկավար կազմի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների դասախոս և ուսանող մասնակիցները, դեկանները, ամբիոնի վարիչները, գործատուներն ու շրջանավարտներն ընտրվել են բուհի կողմից նախապես տրամադրված ցանկից: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները, բացառությամբ՝ բաց հանդիպման՝ մասնակիցների գրացված չլինելու հանգամանքով պայմանավորված: Փորձագիտական խումբը փաստաթղթերի ուսումնասիրություն[3], ռեսուրսների դիտարկում[4] և ԳՊՀ ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ ֆոկուս խմբային հանդիպումներն իրականացրել է առցանց տարբերակով:

Այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքներ, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները:

Փորձագիտական գնահատումը կատարվել է Հավատարմագրման պետական չափանիշների և չափորոշիչների և ՈԱԱԿ-ի ընթացակարգերի շրջանակներում, որով նախատեսվում է գնահատման երկաստիճան սանդղակ՝ **բավարար** և **անբավարար:**

[3] ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

[4] ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խումբը նախնական գնահատումն իրականացրել է ԳՊՀ լրացրած էլեկտրոնային հարցաշարի, ներկայացրած ինքնավերլուծության, դրան կից փաստաթղթերի ուսումնասիրության, իրականացված առցանց դասալսումների, փորձագիտական այցի դիտարկումների հիման վրա՝ պարբերաբար կազմակերպվող քննարկումների արդյունքում: Քննարկումներից հետո դուրս բերված դիտարկումների հիման վրա փորձագիտական խումբը և ՈԱԱԿ-ի համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը: Միջազգային փորձագետը պատրաստել է նաև գործընկերային գնահատման վերաբերյալ առանձին կարծիք: Փաստաթղթերը թարգմանվել և տրամադրվել են փորձագիտական խմբին: Գործընկերային գնահատման կարծիքը ամբողջությամբ ներառվել է զեկույցի տեքստում: Նախնական զեկույցը ներկայացվել է համալսարան 25.06.2021թ.-ին:

Զեկույցի վերաբերյալ իր արձագանքը համալսարանն ուղարկել է ՈԱԱԿ 15.07.2021-ին: Ուսումնասիրելով փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը՝ բուհը չի ներկայացրել դիտողություններ և առարկություններ: Փորձագիտական խումբը կազմել է զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 23.07.2021թ.-ին:

Մերի Բարսեղյան
Փորձագիտական խմբի համակարգող

23 հուլիսի 2021

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմություն. Սյունիքի մարզի հանրակրթական դպրոցները բարձրագույն կրթություն ունեցող որակյալ կադրերով ապահովելու նպատակով Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի 1967թ.-ի հոկտեմբերի 1-ի որոշմամբ Գորիս քաղաքում հիմնադրվել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի մասնաճյուղը՝ «Ֆիզիկա» և «Մաթեմատիկա» մասնագիտություններով: ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի 1984թ. հունիսի 25-ի թիվ 382 որոշմամբ Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի Գորիսի մասնաճյուղը վերակազմակերպվել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի մասնաճյուղի, 1991 թվականից՝ Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի մասնաճյուղի: ՀՀ կառավարության 2005թ. հոկտեմբերի 6-ի թիվ 2400-Ն որոշմամբ Գորիսի մասնաճյուղի հենքի վրա ստեղծվել է «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ը՝ որպես ինքնուրույն բարձրագույն ուսումնական հաստատություն:

Գորիսի պետական համալսարանը միտված է մասնագիտության կրթական ծրագրերի ու ծառայությունների միջոցով պատրաստել բակալավրի ու մագիստրոսի որակավորումներով համակողմանի զարգացած, աշխատաշուկայում մրցունակ, ժամանակի մարտահրավերներին դիմակայելու ընդունակ բարձրորակ կադրեր տարածաշրջանի կրթության, տնտեսության, արդյունաբերության ու տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտների համար, ստեղծել ուսանողակենտրոն միջավայր, որը բնութագրվում է տնտեսության և հասարակության կրթական ու տեխնոլոգիական կարիքներին համահունչ ճկուն կրթական ծրագրերով, մշակված դասընթացներով, դասավանդման և ուսումնառության արդի մեթոդներով:

Կրթություն. Գորիսի պետական համալսարանում գործում է կրթության երկաստիճան համակարգ (բակալավրիատ, մագիստրատուրա): Առաջին աստիճանի՝ բակալավրիատի ուսումնական ծրագրերը 4-ամյա ուսումնառությամբ կազմակերպված են ըստ մասնագիտությունների և իրականացվում են 14 ուղղություններով: Երկրորդ աստիճանի՝ մագիստրոսական ուսումնառության 2-ամյա(հեռակա կրթաձևով՝ 2.5-ամյա) ծրագրերը կազմված են ըստ գործող մասնագիտությունների ու մասնագիտացումների:

ԳՊՀ ռազմավարական զարգացման հիմնական ուղղություններից է նոր մասնագիտական կրթական ծրագրերի մշակումը և գործող ՄԿԾ-ների վերամշկումը, որոնք կնպաստեն աշխատաշուկայի պահանջներին առավելագույնս համապատասխանող շրջանավարտներ տալուն: Դրանք իրականացնելու համար վերջին երկու տարիների ընթացքում ուսումնառության ակնկալվող արդյունքները համապատասխանեցվել են ՀՀ ՈԱՇ-ի նկարագրիչներին: Աշխատանքներ են տարվում շահակիցների ներգրավվածությունը ապահովելու և նոր կրթական տեխնոլոգիաներ ներդնելու ուղղությամբ: Կարևորվում է պրակտիկաների կազմակերպման և իրականացման արդյունավետության բարձրացումը, ակադեմիական ազնվության ապահովումը:

Հետազոտություն. ԳՊՀ-ում հետազոտական գործունեության շարունակական իրականացումը և կապն ուսումնառության հետ պահելու համար ԳՊՀ ՌԾ-ով սահմանվել են հետևյալ խնդիրները.

- հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով հետազոտությունների իրականացում և զարգացում,
- գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար նյութատեխնիկական և ֆինանսական միջոցների ապահովում,
- հետազոտական աշխատանքների միջազգայնացման խթանում,
- հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի արդյունավետ փոխկապակցվածության ապահովում:

Միջազգայնացում. ԳՊՀ-ն, նպատակ ունենալով բարձրացնել համալսարանի միջազգայնացման արդյունավետությունը և նպաստել համալսարանի արդիականացմանը, ԳՊՀ 2019-2023թթ. ռազմավարական զարգացման ծրագրում սահմանել է հետևյալ խնդիրները.

- ստեղծել փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր,
- ապահովել ենթակառուցվածքի կանոնակարգված գործունեություն,
- արդյունավետորեն համագործակցել տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ,
- հնարավորինս ապահովել ներքին շահակիցների՝ օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակը

Որակի ապահովում. ԳՊՀ որակի ապահովման խնդրի արդիականությունը պայմանավորված է գործընթացներով, որոնք ներկայումս տեղի են ունենում ՀՀ բարձրագույն կրթության համակարգում, այն է՝ Բոլոնյան գործընթացի հիմնադրույթների զարգացում, դրանց իրականացման խթանում և ուղղորդում դեպի որակի ապահովման եվրոպական չափանիշներ.

- որակի ապահովման նկատմամբ համալսարանի պատասխանատվության բարձրացում՝ որակի ապահովման ներքին համակարգի կատարելագործման միջոցով,
- գիտելիքահեն տնտեսության և աշխատաշուկայի պահանջներին և կարիքներին համապատասխան ուսումնական ծրագրերի վերանայում և արդիականացում:

Վերոնշյալ գործընթացները հիմք են հանդիսանում որակի ապահովման ոլորտում բուհի զարգացման ռազմավարական ուղղությունների և համապատասխան ռազմավարական ծրագրերի մշակման համար, որոնց հիմնական նպատակը որակի ապահովման ներքին համակարգի ձևավորումն է:

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր՝ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն):*

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

1.1 ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:

ԳՊՀ-ն Սյունիքի մարզի միակ պետական բուհն է: ԳՊՀ-ի առաքելությունն ու նպատակներն ամրագրված են ՄՈՒՀ-ի 2019-2023 թթ.-ի ռազմավարական զարգացման ծրագրում: Ըստ դրա ԳՊՀ-ն իր առաքելությունն է համարում տարածաշրջանի կրթության, մշակույթի, արդյունաբերության, իրավական դաշտի ու սպասարկման ոլորտի կարիքներին ու զարգացման հնարավորություններին համահունչ կրթական, հետազոտական ծրագրերի ու ծառայությունների իրականացումը՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, մրցունակ մասնագետների պատրաստումը, արտաքին ու ներքին շահակիցների հետ համագործակցության և հաշվետվողականության մշակույթի ձևավորումը, կրթության բնագավառում առաջավոր փորձի փոխանակման, միջազգային համագործակցության, կրթության բովանդակությանը և որակին ներկայացվող պահանջների ու չափանիշների ապահովումը, բարեփոխումների ու նորամուծությունների ներդրման ճանապարհով բարձրագույն կրթության առաջանցիկ զարգացումը:

ԳՊՀ-ն նախորդ հավատարմագրումից հետո մշակել է նոր ռազմավարական ծրագիր, որտեղ սահմանել է գերակայությունները, նպատակները և դրանց ուղղված խնդիրները:

Ըստ ԳՊՀ-ի 2019-2023 թթ.-ի ռազմավարական զարգացման ծրագրի սահմանվել են հետևյալ ռազմավարական նպատակները.

- ստեղծել պետական կրթական չափորոշիչներին համապատասխան կրթության հաջորդականությունն ապահովող տարբեր մակարդակի և ուղղվածության կրթական ծրագրեր,
- ստեղծել անհրաժեշտ պայմաններ՝ ուսումնառության ու դասավանդման նորագույն մեթոդների կիրառման համար,
- ընդլայնել գործատուի, աշխատաշուկայի և մասնագիտական ուսումնական հաստատության միջև եղած կապերը,
- ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի կազմման աշխատանքներում ընդգրկել արտաքին շահակիցներին՝ հաշվի առնելով նրանց կարիքները մասնագետների պատրաստման գործընթացում,
- ձևավորել բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստման ու վերապատրաստման կայուն մեխանիզմներ,
- վերհանել սոցիալ-տնտեսական և գիտատեխնիկական ընդհանուր գործոններ՝ պարզելու մասնագիտական կրթական ծրագրի իրականացման ընթացքը:

Ըստ ինքնավերլուծության՝ ԳՊՀ-ի ռազմավարական զարգացման ծրագիրը, հաշվի առնելով տարածաշրջանի առանձնահատկությունները և ժամանակի պահանջները, նկարագրում է ռազմավարական նպատակների իրագործման համար դրված խնդիրները:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ը կարևորում է ՌԾ-ով նախատեսված նպատակների իրագործումը, հատկապես առանձնացնելով որակյալ կրթության ապահովման գործընթացները, միջազգային ծրագրերի իրականացման կարևորությունը և հետազոտության զարգացմանն ուղղված քայլերը։

Հարկ է նշել որ ԳՊՀ-ի ռազմավարական զարգացման ծրագրի առանցքային գործողությունների իրականացման ժամանակացույցը լիարժեք փաստաթուղթ չէ, այն հստակ ճանապարհ չի նախագծում ՌԾ-ի նպատակների իրականացման համար, չի պարունակում գործողությունների իրականացման պատասխանատուներ, բյուջեի և ռեսուրսների բաշխում, գնահատման առանցքային ցուցիչիներ (ԳԱՑ)։

ԳՊՀ-ն ունի նաև 2020-2023 թթ.-ի ֆակուլտետների, ամբիոնների ռազմավարական միջնաժամկետ պլաններ, որոնք կառուցվածքային առումով առավել հստակ պլանավորման ձևաչափեր են, սակայն ձևակերպումները կրկին անհստակություններ են պարունակում։

Փորձագիտական այցից պարզվեց, որ ՄՈՒՀ-ը պատրաստակամ է առաջիկայում մշակել ռազմավարական ծրագրի գնահատման առանցքային ցուցիչներ, ՌԾ գործողությունների պլան՝ ըստ պատասխանատուների ու հստակ սահմանված վերջնարդյունքների, ինչպես նաև մշակել ռազմավարությունից բխող միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրերը։

ԳՊՀ-ն իրականացնում է ՀՀ որակավորումների ազգային շրջանակի նկարագիրչներին համապատասխան բակալավրիատի և մագիստրատուրայի 25 կրթական ծրագրեր: Ըստ ինքնավերլուծության և փորձագիտական այցի արդյունքների ՄՈՒՀ-ը նախատեսում է բարձրագույն կրթության երրորդ աստիճանի՝ հետազոտողի կրթական ծրագրի ներդրում։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բոլոր շահակիցներն էլ համարում են ԳՊՀ-ի դերը տարածաշրջանում անփոխարինելի և միաժամանակ գիտակցում են, որ տարածաշրջանում ստեղծված նոր իրավիճակով պայմանավորված ԳՊՀ-ի առաքելությունն ու նպատակները վերանայման կարիք ունեն՝ հստակ գնահատելով հնարավորություններն ու վտանգները և բուհի կարողությունները։

1.2. ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները։

ԳՊՀ-ի հիմնական շահակիցներն են ուսանողները, դասախոսները (այդ թվում՝ հրավիրյալ և գործատու), շրջանավարտները, գործատուները, դիմորդները։

ԳՊՀ-ի ռազմավարական ծրագիրը քննարկվում է Գիտական խորհրդում, քննարկվում և հաստատվում կառավարման խորհրդում: Ֆակուտետների և ամբիոնների միջնաժամկետ ռազմավարական զարգացման պլանները՝ համալատասխանաբար ֆակուլտետների և ամբիոնների նիստերում:

ԳՊՀ-ի կառավարման և գիտական խորհուրդներում ընդգրկված են ներքին և արտաքին շահակիցներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ շահակիցները մեծ մասամբ տեղյակ չեն ՌԾ-ով նախատեսված զարգացման շեշտադրումների վերաբերյալ:

Ֆակուլտետների խորհուրդներում ներքին շահակիցներից (ամբիոնների վարիչներ, ՊԴ կազմի ներկայացուցիչներ, ուսանողներ) բացի ներգրավել են նաև

արտաքին շահակիցներ: Փորձագիտական այցը ցույց տվեց, որ շահակիցները մոտիվացված չեն ներգրավվելու ռազմավարական զարգացման ծրագրերի մշակման գործընթացում:

Փորձագիտական այցից պարզվեց նաև, որ արտաքին շահակիցներից կան ՄՈՒՀ-ում դասավանդող դասախոսներ, որոնք միաժամանակ հանդես են գալիս որպես ներքին շահակիցներ: Համալսարանը ձեռնարկել է գործատուների շրջանում իրականացվող հարցումներ, սակայն դրանց վերլուծության գործընթացը հաջորդել է ՌԾ-ի կազմելու գործընթացին:

Հարցումներ են անցկացվել նաև ուսանողների և դասախոսների շրջանում, սակայն փորձատական այցը կրկին ցույց տվեց, որ այս հարցումները ևս ազդեցություն չեն ունեցել ՌԾ-ի ձևավորման գործընթացում:

ԳՊՀ-ում գործում է ուսանողների կարերիայի աջակցության բաժինը, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այն դեռևս փորձում է ձևավորել շրջանավարտների տվյալների հենք:

Ընդհանուր առմամբ հարկ է նշել, որ ԳՊՀ-ի զարգացման ռազմավարական ծրագրում ձևակերպումները բավականին ընդհանրական են, որոշակիորեն համապատասխանեցված ինստիտուցիոնալ ինքնավերլուծության չափանիշների և չափորոշիչների ձևակերպումներին և լիարժեքորեն չեն արտացոլում շահակիցների կարիքները:

Սակայն փորձագիտական այցից պարզվեց նաև, որ բուհի ղեկավար կազմը կարևորում է իր շահակիցների կարիքները և անուղղակի ազդակներով (հանդիպումներ, զրույցներ), թեկուզև ոչ համալիր վերլուծություններով որոշակիորեն տեղեկանում և հաշվի է առնում դրանք:

1.3. ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

ԳՊՀ-ի առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման հիմնական մեխանիզմը համարվում են ստորաբաժանումների և ռեկտորի հաշվետվությունները: Հաշվետվությունների ձևաչափերը վերանայել են՝ միտված վերլուծական բաղադրիչի ավելացմանը: Ռեկտորի տարեկան հաշվետվությունը համաձայն ԳՊՀ-ի կանոնադրության, ներառում է բոլոր ուղղություններով համալսարանի գործունեության արդյունքները, այդ թվում՝ ֆինանսատնտեսական: Ռեկտորի հաշվետվությունն ընդգրկում է բուհի գործունեության բոլոր ուղղությունները, որը գլխավորապես ընթացիկ ուստարում իրականացված գործընթացների նկարագրություն է, ներառում է նաև թվային ցուցանիշներ: Սակայն այս հաշվետվությունները ուղիղ կեպով չեն կապակցվում ռազմավարական ծրագերի հետ:

2019-2023 թթ.-ի զարգացման ռազմավարական ծրագրի առանցքային գործողությունների իրականացման ժամանակացույցում ներկայացված գործողությունները հիմնականում ընդհանրական բնույթ ունեն, այն հստակ պլանավորում չի պարունակում, չկան պատասխանատուներ, ֆինանսական հատկացումներ և գնահատման առանցքային ցուցանիշներ:

Հիմնվելով նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցի խորհրդատվությունների վրա, այն է՝ ստեղծել ռազմավարության հարցերով զբաղվող խորհուրդ կամ հանձնաժողով՝ ռազմավարության ամբողջ առաջընթացը մշտադիտարկելու, խոչընդոտների մասին տեղեկացնելու, դրանց հաղթահարման ուղիները բացահայտելու, խնդիրների վերանայման առաջարկություններ կատարելու համար, ԳՊՀ-ն 2019 թվականի նոյեմբերին ձևավորել է ՌԾ մոնիթորինգի հանձնաժողով՝ ռազմավարության առաջընթացը մշտադիտարկելու, խոչընդոտների մասին տեղեկացնելու, դրանց հաղթահարման ուղիները բացահայտելու, խնդիրների վերանայման առաջարկություններ ներկայացնելու համար: ՌԾ մոթիթորինգի հանձնաժողովի կողմից 2020 թ.-ին կազմվել է հաշվետվություն: Հաշվետվությունը նկարագրում է տվյալ ուղղությամբ կատարված ընդհանուր աշխատանքները ըստ ՌԾ-ի որոշ բաժինների և չի պարունակում վերլուծություններ:

Դատողություններ: ԳՊՀ-ն անփոխարինելի դեր ու նշանակություն ունի տարածաշրջանում և ԳՊՀ-ի շրջանավարտները առկա աշխատաշուկայում որոշակիորեն մրցակցությունից դուրս վիճակում են գտնվում: ԳՊՀ-ն կարողացել է նոր ռազմավարական ծրագրում առավել հստակեցնել համալսարանի գործունեության ուղղությունները, առավել համապատասխանեցնել ՈԱՇ-ին, սակայն ծրագիրը դեռևս լիարժեք գործառնական չէ: Փորձագիտական խումբը կարևորում է ԳՊՀ-ի որպես կրթական հաստատություն անփոխարինելի դերն ու նշանակությունը տարածաշրջանի համար, սակայն գտնում է, որ ԳՊՀ-ն պետք է իրատեսականորեն վերլուծի և գնահատի իրավիճակը՝ հստակեցնելով իր դերը և գուցե առավել նշանակալից և ազդեցիկ կանորություն ձեռք բերելով տարածաշրջանի համար՝ բխեցնելով այդ ամենը ներքին և արտաքին հնարավորություններից և հաշվի առնելով վտանգները:

Փորձագիտական խումբը կարևորում է բուհի ջանքերը և պատրաստակամությունը՝ ուղղված տարբեր մեխանիզմներով շահակիցներին ՌԾ պլանավորման գործընթացում ներգրավելու. խորհուրդներում ներգրավելով և հանձնախմբեր ստեղծելով: Սակայն նրանց ներգրավվածությունը թույլ է, և նրանք մոտիվացված չեն ներգրավվելու: Միաժամանակ բոլոր շահակիցներին ներգրավելու մեխանիզմներ դեռևս առկա չեն:

Գորիսի պետական համալսարանում ռազմավարական պլանավորման ու արդյունքների գնահատման մշակույթը դեռևս գտնվում է ներդրման փուլում: Ներքին և արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի մեխանիզմները դեռևս թերի են և բարելավման կարիք ունեն: Կարևոր է նաև, որ ռազմավարական նախնական պլանավորումները և ներդրման ընթացքում բարելավումները հիմնված լինեն SWOT վերլուծության վրա, ինչը կարող է ապահովել գործընթացների համընթաց զարգացմանը: Հարկ է նշել, որ ներքին շահակիցների կարիքների վերհանման թերի մեխանիզմները, արտաքին շահակիցների ներգրավվածության ցածր մակարդակը կարող է խոչընդոտել և դանդաղեցնել ՄՈՒՀ-ի ռազմավարական նպատակների իրագործումը:

ԳՊՀ-ն կարևորում է ռազմավարական գործընթացները ՊԻԳԲ շրջափուլի տրամաբանությամբ կազմակերպելը: Դրա վկայությունն են հաշվետվողականության մեխանիզմների բարելավմանը միտված գործողությունները: Այնուհանդերձ, պետք է նշել,

որ հաշվետվությունները նկարագրողական, տեղեկատվական բնույթ ունեն, դրանք կառուցվածքով ու բովանդակությամբ համահունչ չեն ռազմավարական ծրագրի դրույթներին, դրանցում բացակայում են ստացված արդյունքների գնահատումը և վերլուծությունները, ՄՈՒՀ-ի կառավարման ու գիտական խորհուրդներում խնդիրների վերաբերյալ քննարկումները, և այս ամենով հմարավոր չէ ապահովել ռազմավարական գործընթացները ՊԻԳԲ շրջափուլով իրականացնելը:

Եզրահանգում: Հաշվի առնելով որ ԳՊՀ-ն նախորդ հավատարմագրումից հետո վերասահմանել է իր առաքելությունը և նպատակները, ապահովել դրանց համապատասխանությունը ՈԱՇ-ին, առաջին փորձն է կատարել ռազմավարարական ծրագրի կազմման, քայլեր է ձեռնարկում շահակիցներին ներգրավելու ռազմավարության պլանավորման գործընթացում, իրականացման արդյունքների գնահատման գործընթացում ներդրել է որոշ մեխանիզմներ և որոշակիորեն բարելավել է արդեն եղածները, փորձագիտական խումբը գտնում է, որ Գորիսի պետական համալսարանը բավարարում է առաջին չափանիշի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Գորիսի պետական համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

2.1 Հաստատության կառավարման համակարգն ապահովում է, սահմանված էթիկայի կանոններին համապատասխան, որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Գորիսի պետական համալսարանի կառավարումն իրականացվում է համաձայն ՀՀ բարձրագույն կրթության համակարգը կանոնակարգող նորմատիվ ակտերի և համալսարանի կանոնադրության՝ կառավարման միանձնյա և կոլեգիալ ձևերի զուգակցմամբ: ԳՊՀ-ի կառավարման կոլեգիալ մարմիններն են կառավարման խորհուրդը, գիտական խորհուրդը: Գործադիր մարմինը ռեկտորն է: Կառավարման միջին օղակներում կառավարման մարմիններն են ֆակուլտետների խորհուրդները, դեկաններն ու ամբիոնի վարիչները, ստորաբաժանումների ղեկավարները: Ռեկտորատը գործում է որպես խորհրդատվական մարմին: ԳՊՀ-ի կառավարման մարմինների լիազորությունները սահմանված են ԳՊՀ-ի կանոնադրությամբ, որը վերջին անգամ խմբագրվել է 14.02.2013 թվականին ն և գործում է առ այսօր: Կառավարման և գիտական խորհուրդները, ռեկտորատը գործում են ըստ իրենց կանոնակարգերի, ընդ որում՝ կառավարման խորհրդի կանոնակարգը հաստատված է 2006 թ., գիտական խորհրդինը՝ 2018 թ., իսկ ռեկտորատինը՝ 2018 թ.:

Կառավարման խորհրդի և գիտական խորհրդի որոշումները չեն հրապարակվում: Կառավարման խորհրդի կազմում, բացի ներքին շահակիցներից ներգրավված են նաև ներկայացուցիչներ ՀՀ կառավարությունից, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից: Նրանք առաջադրվում են կրթության, գիտության, մշակույթի և տնտեսության տարբեր ոլորտների ճանաչված գործիչներից, ինչպես նաև ԳՊՀ-ի հետ համագործակցող գործատուներից: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ խոհրդի կազմի ներկայացուցիչները մոտիվացված չեն ակտիվ քննարկումներ ծավալելու օրակարգային հարցերի հետ կապված: Միաժամանակ փորձագիտական այցի ժամանակ պարզվեց, որ նրանք ռազմավարական նպատակները վերանայելու կարիք են տեսնում՝ պայմանավորված տարածաշրջանում կատարված փոփոխություններով, սակայն այդ հարցով դեռևս քննարկումներ չէին եղել:

Համաձայն ԳՊՀ-ի 2019-2023 թթ. ռազմավարական զարգացման ծրագրի կառավարման համակարգի ստեղծման ու զարգացման նպատակ է սահմանվել բոլոր ստորաբաժանումների գործառույթների բաշխվածությունը, որի իրականացման համար խնդիր է դրվել մշակել կառավարման համակարգի և վարչական կառույցների կանոնակարգերի ու աշխատակարգերի մշտադիտարկման, վերանայման ու բարելավման մեխանիզմներ ու ընթացակարգեր: Համալսարանը մշակել է կառավարման խորհրդի կանոնակարգ, գիտական խորհրդի կանոնակարգ, ռեկտորատի կանոնակարգ, ֆինանսների պլանավորման, տնօրինման և մշտադիտարկման քաղաքականություն, ստորաբաժանումների գործունեության կանոնակարգ, էթիկայի կանոնակարգ, ներքին աշխատանքային կանոնների կանոնակարգ, որոնցով բուհը ապահովում է կառավարման համակարգի գործունեության ինստիտուցիոնալ-նորմատիվ հենքը:

Համալսարանը, հետևելով նախորդ փորձագիտական զեկույցում ներկայացված խորհրդատվությանը, վերանայել է համալսարանի կառավարման կառուցվածքը՝ միտված ռազմավարական նպատակների ու կառավարման համակարգի համահունչության ապահովմանը: Փոփոխել է ԳՊՀ-ի կազմակերպական կառուցվածքը, դրանով իսկ իրականացնելով կառուցվածքային-կազմակերպական մի շարք փոփոխություններ, մասնավորապես օպտիմալացվել են ֆակուլտետները՝ 5-ից դառնալով 3, այնուհետև՝ 2, վերակազմավորվել է կրթության որակի ապահովման և ուսանողների կարիերայի աջակցման բաժինը: Սակայն հարկ է նշել, որ այս փոփոխությունների հիմքում չկան վերլուծություններ:

Ձևավորվել է արտաքին կապերի և համագործակցության բաժինը՝ ուղղված արտաքին կապերի և միջազգայնացման ուղղությամբ ռազմավարական նպատակների իրագործմանը: Ռազմավարությամբ նախատեսված գիտահետազոտական գործընթացների արդյունավետ համակարգման և իրականացման նպատակով ձևավորել են Գիտական կենտրոնը, որը ղեկավարում է բուհի ռեկտորը, ով նաև ղեկավարում է մաթեմատիկայի ամբիոնը: Ստեղծվել է նաև Տնտեսական գործունեության կազմակերպման բաժին այս ուղղությամբ աշխատանքներն ադյունավետորեն կազմակերպելու նպատակով:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կառուցվածքային փոփոխություններն արժանացել են ՄՈՒՀ-ի ղեկավարության ու կառավարման խորհրդի հավանությանը, սակայն համալսարանը դեռևս չունի կատարված փոփոխությունների

արդյունավետության և ԳՊՀ-ի ռազմավարական նպատակներին դրանց համապատասխանության գնահատման վերլուծություններ:

Համալսարանն ունի Հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժին, որտեղ փորձագիտական այցից պարզ դարձավ, որ աշխատակցով համալրելու անհրաժեշտություն են տեսնում:

Համալսարանն ունի Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, ով համակարգում և վերահսկում է համապատասխան գործընթացները, նա իրականացնում է նաև գիտական քարտուղարի գործառույթները:

Համալսարանում առկա է նաև Ուսումնական մաս, Աշխատակազմի կառավարման բաժին, Արխիվ, Հաշվապահության, Տնտեսական գործունեության կազմակերպման բաժին, Գրադարան և այլն, որոնց գործունեությունը կանոնակարգվում է ըստ համապատասխան կանոնակարգերի:

Համալսարանում բացակայում է ռազմավարական բյուջետավորումը, եկամուտների բազմազանեցման համալիր քաղաքականությունը և հստակ մեխանիզմները: Համալսարանի ինքնավերլուծությունում որպես համալսարանի թույլ կողմ է ներկայացված ֆինանսական ռեսուրսների սակավությունը, իսկ համալսարանի ռազմավարական զարգացման ծրագիրը չի պարունակում ֆինանսական պլանավորում և ըստ պատասխանատուների գործողությունների բաշխում:

Կառավարման համակարգի առանձին օղակների գործունեության արդյունավետության գնահատումը կատարվում է նրանց հաշվետվությունների միջոցով, սակայն դրանցում վերլուծական տարրը թույլ է արտահայտված, գլխավորապես նկարագրողական և տեղեկատվական բնույթ է կրում: Որոշ պաշտոնների համար մշակվել են պաշտոնների անձնագրեր, սակայն դա համատարած բնույթ չի կրում:

ԳՊՀ-ն 2018 թ. դեկտեմբերի 27-ին հաստատել է Էթիկայի կանոնակարգ: Գիտական խորհրդի 31.01.2020 թվականի նիստում հաստատել են ներքին կարգապահական կանոններ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ԳՊՀ-ի աշխատակիցներն ընդհանուր առմամբ բավարարարված են բուհի կողմից սահմանված էթիկայի կանոններին համապատասխան աշխատանքային պայմաններից:

2.2 ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցնել իրենց առնչվող որոշումների կայացմանը:

Ըստ ԳՊՀ-ի կանոնադրության, կառավարման խորհրդի և գիտական խորհրդի աշխատակարգերի, ֆակուլտետի օրինակելի կանոնադրության, ամբիոնի օրինակելի կանոնադրության դասախոսներին և ուսանողներին հնարավորություն է տրվում մասնակցելու իրենց առնչվող որոշումների կայացմանը:

ԳՊՀ-ի ներքին շահակիցները հնարավորություն ունեն մասնակցելու բուհի կառավարման տարբեր մակարդակներում (կառավարման խորհուրդ, գիտական խորհուրդ, ռեկտորատ, ֆակուլտետների խորհուրդներ), ինչն էլ հնարավորություն է տվել մասնակցելու որոշումների կայացման գործընթացներին հիմնականում քննարկումների և որոշումներին քվերարկությունների միջոցներով:

ԳՊՀ-ի խորհրդի 25 %-ը կազմում են պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները, 25%-ը՝ ուսանողների ներկայացուցիչները: Փորձագիտական այցից

պարզ դարձավ, որ խոհրդի կազմի ներկայացուցիչները մոտիվացված չեն ակտիվ քննարկումներ ծավալելու օրակարգային հարցերի հետ կապված:

Գիտական խորհրդում ընդգրկված են ուսանողներ, ՊԴ կազմի ներկայացուցիչներ, ղեկավար կազմի ներկայացուցչներ: Ֆակուլտետների խորհուրդների կազմում ներգրավել են նաև հեռակա համակարգի ուսանողներ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈւԽ-ն որպես կառույց բավականին պասիվ է: Տարբեր խորհուրդների կազմերում ուսանողների ընտրության գործընթացներից ուսանողների տեղեկացվածությունը բավականին ցածր է:

Դասախոսներն իրենց առնչվող որոշումների կայացմանը ներգրավվում են նաև ամբիոնի նիստերին մասնակցությամբ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հիմնականում ղեկավար կազմն է որոշումների կայացման գործընթացում ներգրավված, իսկ ուսանողներն ու ՊԴ կազմը ակտիվություն չեն դրսևորում այդ հարցում:

Համալսարանի ներքին շահակիցների՝ դասախոսների և ուսանողների, որոշումների կայացմանը մասնակցության մեխանիզմներ են նաև բուհի ռազմավարական ծրագրի մշակմանը և մշտադիտարկմանը, ինքնավերլուծության իրականացմանը մասնակցությունը, որակի ապահովման ներքին աուդիտի հանձնաժողովում ներգրավվածությունը, որոնցում մեծ ակտիվություն չեն դրսևորում:

2.3 ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան, և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

Նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցում ներկայացված թերությունների վերացման անհրաժեշտությունից ելնելով՝ համալսարանն իրականացրել է երկարաժամկետ պլանավորում՝ մշակելով 2019-2023 թթ. ԳՊՀ-ի ռազմավարական զարգացման ծրագիրը, որով սահմանվել են բուհի առաքելությունը և զարգացման նպատակները: Սա բուհի՝ ռազմավարական ծրագիր կազմելու առաջին փորձն է: Ռազմավարական ծրագիրը հաստատվել է կառավարման խորհրդի կողմից, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ շահակիցների ներգրավվածությունը ՌԾ-ի պլանավորման հարցում թույլ է եղել: Կազմել են նաև ԳՊՀ-ի ռազմավարական ծրագրի առանցքային գործողությունների իրականացման ժամանակացույց, որը սակայն չի պարունակում հստակ պլանավորման բաղադրիչներ, որոնք կապահովեն չափելիություն, կերաշխավորեն իրագործելիությունը և շտադիտարկման արդյունավետ իրականացումը: Ռազմավարական ծրագրի իրականացման գնահատման նպատակով ստեղծվել է մոնիթորինգ իրականացնող հանձնաժողով, որի արդյունքում 2020 թվականին կազմվել է հաշվետվություն: Հաշվետվությունը առավելապես նկարագրողական բնույթ ունի: Ռեկտորը յուրաքանչյուր տարի հաշվետվություն է ներկայացնում կառավարման խորհրդին, հաշվետվության ձևաչափը բարելավել է՝ ներառել են ըստ գործընթացների որոշ տվյալների ցուցանիշներ: Սակայն հաշվետվությունը ևս դեռևս գլխավորապես նկարագրական բնույթ է կրում, միաժամանակ հստակ չի արտահայտվում ռազմավարական նպատակների հետ փոխկապակցվածությունը:

Գիտական կենտրոնը, Արտաքին կապերի և համագործակցության բաժինը, ֆակուլտետներն ու ամբիոնները իստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացին ընդառաջ մշակել և հաստատել են 2020-2023 թթ. զարգացման միջնաժամկետ պլաններ, որոնք նպատակներին հասնելու համար նախատեսված յուրաքանչյուր գործողության համար ըստ կառուցվածքի պարունակում են պատասխանատուների, ռեսուրսների, ժամկետների պլանավորում, ինչպես նաև անդրադարձ կա հնարավոր խոչընդոտներին և արդյունավետության ակնկալվող գնահատման ցուցիչներին: Վերջիններս հստակ և չափելի չեն, հաճախ նույնիսկ դրանց ներքո գործողություններ են նախատեսվել: Միջնաժամկետ պլաններում արտահայտված չէ ՌԾ-ի հետ կապը:

ԳՊՀ-ի բոլոր ստորաբաժանումները կազմում են տարեկան աշխատանքային պլաններ: Որոշ ստորաբաժանումների պարագայում 2020-2021 ուստարվա պլանավորման պարագայում փորձել են նաև փոխկապակցել միջնաժամկետ պլանավորման հետ: Ստորաբաժանումները, համաձայն սահմանված կանոնակարգերի, տարեկան հաշվետվություններ են տալիս ըստ աստիճանակարգության՝ ամբիոններում, ֆակուլտետի խորհուրդներում, գիտական խորհրդում, կառավարման խորհրդում: Ստորաբաժանումները հաշվետվությունները կազմում են ըստ հաստատված բարելավված ձևաչափերի: Սակայն այս պարագայում ևս դրանք դեռևս նկարագրական բնույթ են կրում և ոչ թե վերլուծական: Հարկ է նշել, որ ֆակուլտետների վերջին հաշվետվությունները պարունակել են նաև SWOT վերլուծություններ, սակայն չեն անդրադարձել վեր հանված թույլ կողմերի բարելավմանն ուղղված գործողությունների պլանավորմանը:

Նախորդ հավատարմագրման արդյունքում բացահայտված խնդիրներից է նպատակների գնահատման ցուցիչների բացակայությունը: Ներկայումս նույնպես դրանք հստակ սահմանված չեն:

2.4 ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

ԳՊՀ-ն իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրությունը համարում է շարունակական գործընթաց: 2019-2023 թթ. ռազմավարական զարգացման ծրագրում ԳՊՀ-ն պլանավորել է ուսումնասիրել աշխատաշուկայի պահանջները և մասնագիտության կրթական ծրագրերի լավագույն փորձը: Սակայն բուհի փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դեռևս չի իրականացվել համակողմանի վերլուծություն լավագույն փորձի ներդրման ուղղությամբ:

Համալսարանը կառուցվածքային որոշ փոփոխություններ իրականացնելիս առաջնորդվել է նախորդ հավատարմագրման արդյունքում վեր հանված խնդիրներով և ներկայացված խորհրդատվություններով: Ֆակուլտետների օպտիմալացումն իրականացնելիս առաջնորդվել են ուսանողների քանակական տվյալներով, ծախսերով:

Ուսումնական պլանները վերանայելիս առաջնորդվել են համագործակցող համալսարաններում համապատասխան կրթական ծրագրերով և ԳՊՀ-ում առկա հնարավորություններով, սակայն գործընթացը լիարժեքորեն հենված չէ համալիր վերլուծությունների վրա:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ռազմավարական ծրագիր կազմելիս բուհի համար կարևոր նշանակություն է ունեցել նախորդ հավատարմագրման գործընթացը: Այդ նպատակի համար կարևորվել են նաև ֆինանսական ռեսուրսների, նյութական ռեսուրսների և հնարավորությունների դիտարկումը, չնայած այս ամենը համընդհանուր համակարգված բնույթ չի կրել, առկա չէ հստակ մեթոդաբանություն:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ համալսարանի ղեկավարությունը գործունեության վրա ազդող գործոնները բացահայտում է նաև գործատուների և դասախոսների հետ անմիջական զրույցների, ուսանողների պրակտիկաների արդյունքների քննարկումների, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կարծիքների միջոցով (որպես օրինակ առանձնացնում են պրակտիկաների ժամերի ավելացումը, որոշ դասընթացներում գործնական ժամերի ավելացումը):

ՄՈՒՀ-ի փաստաթղթերի ուսումնասիրությունից ու փորձագիտական այցից պարզվեց, որ բացակայում են վերլուծությունները կամ տեղեկությունները աշխատաշուկայի, կառավարության ծրագրերում, կառավարության կամ գերատեսչությունների հայեցակարգերում ամրագրված պետական առաջնահերթությունների հետ համադրման և համաձայնեցման վերաբերյալ: Բուհի կողմից իրականացվում են նաև որոշ հարցումներ, որոնց ազդեցությունը, սակայն, չի երևում որոշումների կայացման գործընթացի վրա:

2.5 Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

Ուսումնասիրություններն ու փորձագիտական այցը ցույց են տվել, որ որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլը դեռևս հստակ կիրառություն չի գտել: Կառավարման գործընթացներին վերաբերվող քաղաքականությունները, կանոնակարգերը և ընթացակարգերը հիմնականում մշակվել են 2019-2020 թթ., ինչի պատճառով էլ որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլը դեռ փակված չէ: Այս ժամանակաշրջանում են տեղի ունեցել նաև ԳՊՀ-ի կառուցվածքային կազմակերպական փոփոխությունները: Փորձագիտական այցի ժամանակ համալսարանի կողմից որպես ՊԻԳԲ շրջափուլի ամբողջական կիրառման խոչընդոտող հանգամանք նշվել է Covid-19 համավարակը:

Համալսարանի երկարաժամկետ ՌԾ-ն մշակվել է 5 տարվա համար, դեռևս նախատեսված ժամանակահատվածը չի լրացել, իրականացրել են ընթացիկ մշտադիտարկում, սակայն դրա հիման վրա բաելավման գործընթաց առկա չէ:

Որոշ ընթացակարգեր և կարգեր փոփոխության են ենթարկվել, սակայն դրանք ընդհանուր առմամբ հիմնված չեն նախորդ փոփոխությունների արդյունքների գնահատման վրա, առանձին դեպքերում փոփոխությունները պայմանավորվել են քննարկումներով (մասնավորապես՝ գնահատման համակարգում իրականացված փոփոխությունները ամբիոնների նիստերում քննարկման արդյունք են, ՄԿԾ-ներում որոշ փոփոխություններ իրականացվել են գործատու դասավանդողների նախաձեռնությամբ):

Համալսարանում բավականին փաստաթղթեր մշակվել և ներդրվել են հավատարմագրման գործընթացին ընդառաջ, որոնց մի մասը պայմանավորված է եղել նախորդ հավատարմագման արդյունքում փորձագիտական զեկույցում վեր հանված

խնդիրներով և տրամադրված խորհրդատվություններով, սակայն դեռևս չեն երևում դրանցով պայմանավորված արդյունքները, դրանցից որոշները լիարժեք կիրառելու ժամանակ չեն ունեցել: Փաստաթղթերի մշակման համար ստեղծել են համապատասխան հանձնախումբ:

Ինքնավերլուծությունից և փորձագիտական այցից պարզվեց, որ ներկայումս բուհի շատ գործընթացներ գտնվում են պլանավորման, իսկ որոշ դեպքերում՝ իրականացման փուլերում: Օրինակ, ներդրման փուլում է խրախուսման քաղաքականությունը, ՄԿԾ-երի գնահատումը, ՊԴ և ՈւՕ կազմերի ատեստավորման քաղաքականությունները, պլանավորում են համալրել որոշ մարդկային ռեսուրսներ:

2.6 ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:

ԳՊՀ-ի ինքնավերլուծությունից և փորձագիտական այցից պարզվեց, որ ԳՊՀ-ում մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության մասին տվյալների հավաքագրումն ու վերլուծությունն իրականացվում է հարցումների, քննարկումների, հանդիպումների միջոցով, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կարծիքների, պրակտիկաների ժամանակ գործատուների կարծիքների, ինչպես նաև համալսարանի կայքէջի միջոցով: Մի շարք հարցարաններ դեռևս նոր են մշակվել և ներդրվել: Պարբերական բնույթ են կրում ՊԴ կազմի դասավանդման որակի գնահատման հարցումները, սակայն հարցաթերթիկների գնահատման արդյունքներ առկա չեն:

Հենվելով նախորդ հավատարմագրման արդյունքում տրված խորհրդատվությունների վրա վերանայվել են հաշվետվությունների ձևաչափեր՝ նպատակ ունենալով բարելավել վերլուծական բաղադրիչը, որոնցում նաև SWOT վերլուծության պահանջ կա: Նաև այժմ հաշվետվություններում որոշ տվյալներ համադրում են ըստ տարիների և ընդլայնել են հաշվետվություններում ներկայացվող տեղեկատվությունը:

Թեև ՄԿԾ-երի որակի, մշտադիտարկման, գնահատման ու բարելավման ընթացակարգերի ու մեխանիզմների մշակումը և կիրառումը ՌԾ-ի առաջնահերթություններից է, սակայն դեռևս բացակայում է կրթական ծրագրերի մշտադիտարկման կանոնակարգը և գործընթացի իրականացումը:

ԳՊՀ-ում կարևորել են մարդկային ռեսուրսների գնահատման գործընթացը և վերանայել են մեխանիզմները, չնայած վերջիններս դեռևս չեն կիրառվել: Մասնավորապես, ներդրել են ՈւՕ և ՊԴ կազմերի ատեստավորման գործընթացներն ապահովող կարգեր, ըստ որոնց նախ գնահատում է ենթադրվում:

ԳՊՀ-ում տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող հստակ մեխանիզմներ առկա չեն:

2.7 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ:

ԳՊՀ-ի մասին տեղեկատվության տարածման միջոցներից են կայքէջը, պաշտոնական թերթը, ֆեյսբուքյան էջը, բուկլետները, որոնց միջոցով հանրությունը տեղեկանում է ՄՈՒՀ-ում իրականացվող գործընթացների մասին:

Կայքէջում տեղադրվում են ռեկտորի հաշվետվությունները, ներքին իրավական ակտեր, մասնագիտական կրթական ծրագրերը, փաստաթղթեր, գործընթացների վերաբերյալ հրապարակումներ, վերջիններս հրապարակվում են նաև ֆեյսբուքյան էջում: Կայքէջում և ֆեյսբուքյան էջում ունեն հետադարձ կապի մեխանիզմ, որը, անհրաժեշտության դեպքում, կարող է կիրառվել շահակիցների կողմից արձագանք ստանալու համար: Ուսանողների շրջանում իրականացվող հարցումներում անդրադառնում են նաև կայքէջից գոհունակությանը: Ֆեյսբուքյան էջի գործիքակազմը հնարավորություն է տալիս շահակիցներին գնահատել հրապարակումները: Սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ համալսարանը չի մշակել հրապարակումները գնահատելու հստակ քաղաքականություն և չի իրականացնում համալիր վերլուծություններ:

Դատողություններ: ԳՊՀ-ում կառավարման յուրաքանչյուր մարմնի գործունեություն կանոնակարգվում է համապատասխան փաստաթղթերի միջոցով՝ հստակ բաժանված են իրավասությունների և պատասխանատվությունների շրջանակները: Որոշումների կայացման գործընթացն իրականացվում է ԳՊՀ-ի կանոնադրությանն ու կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող փաստաթղթերին համապատասխան: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ պայմանավորված նախորդ հավատարմագրման արդյունքում տրամադրված խորհրդատվություններով և սահմանված նոր ռազմավարական նպատակներով՝ համալսարանում իրականացված կառուցվածքային փոփոխությունների արդյունքում այժմյան կառուցվածքն առավել հարմարեցվել է ռազմավարական նպատակներին: Բոլոր ստորաբաժանումներն ունեն կանոնակարգեր, որոնցով սահմանվում է նրանց գործառութային շրջանակը: Միաժամանակ ստորաբաժանումներն հիմնականում ապահովված են նյութական և մարդկային ռեսուրսներով, բացառությամբ առանձին դեպքերի, որոնց ուղղությամբ բուհը նախատեսում է քայլեր ձեռնարկել:

Միաժամանակ փորձագիտական խումբը նշում է, որ անհրաժեշտություն կա, որպեսզի բուհը փոփոխություններ իրականացնելիս առաջնորդվի համալիր և բազմակողմ վերլուծություններով:

Փորձագիտական խումբը դրական է համարում նաև այն, որ բուհը մշակել և ներդրել է Էթիկայի կանոնակարգ և ներքին կարգապահական կանոններ՝ աժնորելով դրանց համապատասխան աշխատանքային միջավայրի ձևավորումը, իսկ որոնց լիարժեք կիրառումը հետագայում կարևոր կլինի այս տեսանկյունից:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ բուհի կառավարման համակարգը (կառավարման խորհուրդ, գիտական խորհուրդ, ֆակուլտետների խորհուրդներ և այլն)՝ ըստ ձևավորման իրավական հենքի, թույլ է տալիս ուսանողներին և դասախոսներին մասնակցել իրենց վերաբերող որոշումների կայացմանը: Բուհը նաև որոշակիորեն ներգրավել է հեռակա համակարգի ուսանողներին, միաժամանակ այդ գործընթացում գործատուների ներգրավելու պատրաստակամություն է դրսևորել և մեխանիզմներ ձևավորել: Փորձագիտական խումբը կարևոր է համարում շահակիցների մոտիվացիայի բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացումը՝ նպատակ ունենալով ակտիվացնել նրանց մասնակցությունը որոշումների կայացմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ բուհը մշակել է զարգացման երկարաժամկետ ռազմավարություն՝ սահմանելով առաջնահերթություններ, նպատակներ, ընդ որում սա բուհի առաջին փորձն է այս ուղղությամբ, ոչ հստակ ձևակերպումներն ու հստակ պլանավորման բացակայությունը կարող է խոչընդոտել իրագործելիության ապահովումը, հետագայում էլ՝ արդյունավետության գնահատումը: Պլանավորման ավելի լավ փորձ է 2020-2023 թթ. միջնաժամկետ պլանների կազմումը, որն ըստ կառուցվածքի առավել բարելավված է և որոշակիորեն առավել հստակ, չնայած այստեղ էլ դեռևս խնդիրներ առկա են. հստակ չեն հատկապես ռեսուրսների պլանավորումը, արդյունավետության ակնկալվող գնահատման ցուցիչները, չի արտահայտվում ֆինանսական պլանավորման և բյուջեի պլանավորման կապը: Բուհի ստորաբաժանումներն ունեն նաև տարեկան աշխատանքային պլաններ, որոնց ձևաչափերի բարելավման ուղղությամբ կատարված աշխատանքները ևս կարևորվում է փորձագիտական խմբի կողմից: Սակայն այս պլանավորումների միմյանց հետ ոչ հստակ փոխկապակցումը խնդրահարույց է համարում փորձագիտական խումբը և գտնում է, որ այս ուղղությամբ աշխատանքներ պետք է տարվեն, միաժամանակ իրականացնելով հստակ և իրագործելի պլանավորում, ինչը կերաշխավորի դրանց իրականացումը և գնահատումը:

Դրական է այն, որ բուհը նաև ՌԾ-ի մշտադիտարկման մեխանիզմ է գործածել, որի արդյունքում հաշվետվություն է կազմվել: Ստորաբաժանումների և բուհի գործունեության արդյունավետության գնահատման մեխանիզմներ ունեն, որն արտահայտվում է հաշվետվություններով: Դրական է, որ բուհը, գիտակցելով դրանց կարևորությունը, աշխատանքներ է տարել դրանց ձևաչափերի բարելավման ուղղությամբ: Սակայն դրանցում դեռևս վերլուծական բաղադրիչը թույլ է և հստակ չի արտահայտվում միջնաժամկետ և երկարաժամկետ պլանների հետ կապը, ինչը կարող է խոչընդոտել ՌԾ-ի իրագործման գնահատումը:

Դրական է, որ բուհը գիտակցում է տարբեր աղբյուրներից տեղեկատվության հավաքագրման և շահակիցների կարծիքների կարևորությունը և անուղղակի կերպով որոշակիորեն դրանք հաշվի են առնվում, առկա են որոշ առանձին մեխանիզմներ, որոնց միջոցով ստացված տեղեկատվությունն ազդեցություն է ունենում: Սակայն բուհը չի հստակեցրել իր գործունեության վրա ազդող բոլոր գործոնները և համալիր վերլուծություններ չի իրականացրել այդ ուղղությամբ, ինչը կարող է խոչընդոտել տվյալահեն որոշումների կայացումը:

Մի շարք փաստաթղթեր դեռևս ներդրման փուլում են, մի շարք փաստաթղթերի փոփոխման և գործընթացների վերանայման հիմքում ընկած չեն նախորդների արդյունավետության վերլուծությունները: Փորձագիտական խմբի համար նկատելի է, որ համալսարանը կարևորում է ՊԻԳԲ սկզբունքը, սակայն բուհում քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունը դեռևս հենված չէ ՊԻԳԲ սկզբունքի հստակ կիրառման վրա, ինչը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ շատ գործընթացներ դեռևս նոր են պլանավորվել և անհնար է գնահատել արդյունավետությունը: Փորձագիտական խումբը կարևորում է ՊԻԳԲ սկզբունքի լիարժեք կիրառումը, քանի որ այն կնպաստի համակարգված աշխատանքին և գործընթացների համընթաց զարգացմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ հաշվետվությունների ձևաչափերի բարելավումը որոշակիորեն նպաստել է տեղեկատվության հավաքագրման և վերլուծման գործընթացի բարելավմանը: ՄԿԾ-ների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվություն ստանում են որոշ մեխանիզմներով՝ հարցումներ, պրակտիկաների օրագրեր, ատեստավորման հանձնաժողովի կարծիքներ, դասալսումներ, սակայն դրանց արդյունավետությունը գնահատող մեխանիզմներ դեռևս առկա չեն:

ԳՊՀ-ն տարբեր միջոցներ է կիրառում տեղեկատվությունը հասանելի դարձնելու համար, սակայն այդ միջոցները գնահատող հստակ մեխանիզմներ դեռևս առկա չեն: Չնայած կայքէջում և ֆեյսբուքյան էջում առկա են որոշ մեխանիզմներ, սակայն դրանց արդյունքները չեն վերլուծվում, ուստի և երաշխավորված չեն դրանցով պայմանավորված հետագա համընթաց բարելավումները:

Եզրահանգում: Հաշվի առնելով ԳՊՀ-ի կառավարման մարմինների և կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթների, իրավասությունների և պարտականությունների սահմանված լինելը, ըստ ՌԾ-ի գերակայություններին համապատասխան ստորաբաժանումների առկայությունը, ինչպես նաև դրանց խիստ անհրաժեշտ ռեսուրսներով ապահովվածությունը, նախորդ հավատարմագրման գործընթացից հետո համալսարանի կառավարման համակարգի բարելավումը, կառավարման համակարգում համապատասխան էթիկայի կանոնների սահմանումը, ինչպես նաև այն, որ դասախոսները և ուսանողները հնարավորություն ունեն մասնակցելու իրենց վերաբերող որոշումների կայացմանը, աշխատանքներ են կատարել երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորման և գնահատման մեխանիզմների բարելավման ուղղությամբ, գիտակցում են վերլուծությունների հիման վրա որոշումներ կայացնելու կարևորությունը, փորձագիտական խումբը գտնում է, որ Գորիսի պետական համալսարանը բավարարում է երկրորդ չափանիշի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Գորիսի պետական համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

3.1. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

ԳՊՀ-ն կրթական ծրագրեր է իրականացնում ՈԱՇ-ի 6-րդ (առկա 13, հեռակա 12 կրթական ծրագրերով) և 7-րդ (առկա 7 և հեռակա 5 կրթական ծրագրերով) մակարդակներում՝ առկա և հեռակա ձևերով: ԳՊՀ-ի ռազմավարական զարգացման

հիմնական ուղղություններից է նոր մասնագիտական կրթական ծրագրերի մշակումը և գործող ՄԿԾ-ների վերամշակումը, որոնք կնպաստեն աշխատաշուկայի պահանջներին առավելագույնս համապատասխան շրջանավարտներ տալուն: Համալսարանն, աշխատաշուկայի պահանջով առաջնորդվելով, վերջին տարիներին ներդրել է «Անգլերեն լեզու և գրականություն», «Զբոսաշրջության կառավարում», «Հատուկ մանկավարժություն», «Կերպարվեստ», «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտությունները: Սակայն այդ մասնագիտություններով ուսանողների թիվը մեծ չէ և որոշ կրթական ծրագրերի դեպքում նույնիսկ նվազել է:

Տարբեր տարիների մասնագիտությամբ չաշխատող շրջանավարտների թիվը բավականին շատ է, իսկ պատճառներն ուսումնասիրված չեն:

Փոքր խմբերով կրթական ծրագրերի իրականացումը ԳՊՀ-ում դիտվում է որպես պետության համար կարևոր մասնագիտությունների պահպանման խնդիր, ինչը նաև փոխկապակցվում է սահմանամերձ գյուղերի պահպանման հիմնախնդրի հետ: Այսպիսի խմբերում դասախոսների աշխատանքի վճարման այլ պայմաններ են գործում, սակայն առկա չեն երաշխիքներ այս կրթական ծրագրերի շարունակականության ապահովման համար:

2019 թ. վերամշակել են գործող ՄԿԾ-ները և առարկայական նկարագրերը՝ գլխավորապես առաջնորդվելով ՀՊՄՀ-ի հետ համագործակցության արդյունքում համապատասխան կրթական ծրագրերն ուսումնասիրելով, սակայն դեռևս գործում են 2016 թ. հաստատված դասընթացների ծրագրերը:

Կրթական ծրագրի (առկա, հեռակա) մասնագրի կառուցվածքը ներառում է մանրամասն նկարագիր ըստ ուսումնառության արդյունքների և շնորհվող որակավորումների: Առկա է տեղեկատվություն շրջանավարտների հետագա ուսման և աշխատաշուկայում մասնագիտական գործունեության հնարավորությունների վերաբերյալ, սակայն երբեմն վերջինս համապատասխանեցված է ՄԿԾ-երում ներառված գիտակարգերին և չի համապատասխանում կրթական ծրագրի վերջնարդյունքներից բխող հնարավորություններին: Հստակեցված են կրթական ծագրերի վերջնարդյունքների կապակցվածությունը ՈԱՇ-ի համապատասխան մակարդակի արդյունքների հետ: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ կրթական ծրագրերի փոփոխությունները արագ չեն արձագանքում աշխատաշուկայի պահանջներին:

2019 թ. լրամշակվել է «ԳՊՀ-ի մասնագիտական կրթական ծրագրերի մշակման ուղեցույց»-ը, սակայն վերջինս դեռևս չի կիրառվել:

Մինչ այդ գործել է 2012 թ. հաստատված կրթական ծրագրերի և մասնագիտությունների ուսումնական պլանների մշակման, հաստատման, մշտադիտարկման և գնահատման ընթացակարգը:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ կրթական ծրագրերի մշակման և վերանայման գործընթացներում թույլ է ՊԴԿ-ի և արտաքին շահակիցների ներգրավվածությունը, որն արտահայտվում է միայն առանձին որոշ դեպքերով:

Դասընթացի ծրագրում տրվում է դրա կառուցվածքը, ընդհանուր ժամաքանակը, դրա բաշխումը ըստ պարապմունքների ձևերի և ինքնուրույն աշխատանքի: Թեմատիկ պլանում ժամաքանակի բաշխումն իրականացվում է ըստ մեծ բաժինների և ներկայացվում է դրանց բովանդակությունը: Դասընթացի ծրագիրը չի պարունակում

առանձին թեմաների դասավանդման հստակ պլանավորում, դրանց դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների նկարագրեր, ինչպես նաև հանձնարարականներ՝ ըստ այդ թեմաների:

Կրթական ծրագրերում առկա են ոչ մասնագիտական կամընտրական առարկաների զույգեր, որոնցից յուրաքանչյուրը ուսումնառության պարտադիր վերջնարդյունքի ապահովման անփոխարինելի բաղադրիչ է:

Առկա են կրթական ծրագրեր, որոնցով կուրսային աշխատանք նախատեսվում է միայն մեկ կամ երկու մասնագիտական առարկաների շրջանակներում, ինչը որևէ նպատակով պայմանավորված չէ:

Հստակ արտահայտված չէ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների և աշխատաշուկայում անհրաժեշտ հետազոտությունների համապատասխանությունը, սակայն առկա են առանձին դեպքեր, երբ հետազոտության արդյունքները մասնավորապես կիրառվում են ուսանողների կողմից իրենց աշխատավայրում:

Բակալավրիատի կրթական ծրագրերում 2-րդ օտար լեզվի ուսումնառության համար նախատեսված է 6 դասընթաց, սակայն մասնավորապես անգլերեն լեզվի 1-ին և 2-րդ դասընթացների առարկայական վերջնարդյունքները լիովին համընկնում են: Բակալավրիատի կրթական ծրագրի ուսումնառության վերջնարդյունքով նախատեսվում է գործնական մակարդակով 2 օտար լեզվի տիրապետում, իսկ մագիստրատուրայի կրթական ծրագրով՝ մասնագիտական ոլորտում, գիտական և կրթական գործընթացում օտար լեզվով հաղորդակցման կարողություն:

3.2. ՄՈՒՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, ինչը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

ՄԿԾ-ների մասնագրերում (որոնք վերանայվել են նախորդ հավատարմագրման գործընթացից հետո) ներկայացված են ուսումնառության ակնկալվող արդյունքները՝ մասնագիտական գիտելիք և իմացություն, մասնագիտական գործնական կարողություններ և ընդհանրական փոխանցելի կարողություններ, հստակ տրված է կոմպետենցիաների ձևավորման քարտեզը: Մասնագրերում ներկայացված են նաև ուսուցման և դասավանդման ընդհանուր մոտեցումները, բացի այդ յուրաքանչյուր վերջնարդյունքի համար ներկայացված են ուսումնառության և դասավանդման մեթոդները: Տարբեր մակարդակների կոմպետենցիաների ձևավորման համար առկա են նաև կրկնվող դասավանդման մեթոդներ, մասնավորաբար՝ դասախոսություններ, գործնական պարապմունքներ և այլն: Գիտելիքների, կարողությունների և հմտությունների վերջնարդյունքների ուսումնառության մեթոդները ևս գլխավորապես կրկնվում են, և կրթական ծրագրերում մեծ տեղ է հատկացվում կուրսային և ավարտական աշխատանքների կատարմանը, այդ թվում՝ նաև մագիստրոսական կրթական ծրագրերում: Մինչդեռ մագիստրատուրայի կրթական ծրագրերով կուրսային աշխատանքներ նախատեսված չեն, իսկ ավարտական աշխատանքն արտահայտվում է մագիստրոսական թեզով:

Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ բակալավրիատի կրթական ծրագրով իրականացվող կուրսային և ավարտական աշխատանքները գլխավորապես ռեֆերատի բնույթ են կրում, բացառությամբ առանձին լավ օրինակների: Մագիստրոսական թեզերի պարագայում կարևորվում է ուսանողների կողմից հետազոտության իրականացումն ու համապատասխան արդյունքների ստացումը, սակայն դա ոչ միշտ է ապահովվում, և երբեմն սահմանափակվում է տեսական նյութի ուսումնասիրությամբ:

Դասընթացների ծրագրերը և առարկայական նկարագրերը չեն պարունակում տեղեկատվություն վերջինիս դասավանդման և ուսումնառության մեթոդների վերաբերյալ: Փորձագիտական այցի ժամանակ նաև պարզ դարձավ, որ ՊԴԿ-ն գլխավորապես առաջնորդվում է դասընթացի շրջանակներում իր ունեցած փորձով և հստակ չի արտահայտում դասընթացի և կրթական ծրագրի վերջնարդյունքների կապերը:

Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ հեռակա համակարգում ուսումնառության կազմակերպման առումով վերանայել են մոտեցում՝ արդյունավետության ապահովման ակնկալիքով, այն է՝ ուսումնական նյութերը ուսանողներին տրամադրում են տվյալ կիսամյակի դասընթացների կազմակերպմանը նախորդող քննական շրջանում:

ՊԴԿ-ն ազատ է ընտրելու դասավանդման և ուսումնառության մեթոդները և իրենց անձնական նախաձեռնությամբ են արդիականացնում կիրառվող մեթոդները, նաև՝ արձագանքելով ուսանողներից ստացած հետադարձ կապին: Միաժամանակ հիմնականում կուրսերն ունեն փոքրաթիվ ուսանողներ, ինչը գլխավորապես հանգեցրել է ուսանողակենտրոն ուսուցման:

Չնայած օտար լեզվի իմացության և կարողության ուղղությամբ նախատեսված վերջնարդյունքներին, փորձագիտական այցի ժամանակ պարզվեց, որ այդ վերջնարդյունքները, ընդհանուր առմամբ, չեն ապահովվում: Միայն առանձին դեպքերում, երբ ուսանողները լեզվաիմացության զարգացման լրացուցիչ դասընթացների են մասնակցում, այդ դեպքում կարողանում են օտար լեզվի գործնական կիրառության մակարդակի հասնել:

ԳՊՀ-ում գործում է բակալավրի կրթական ծրագրով մանկավարժական պրակտիկայի կազմակերպման կանոնակարգը: Առկա է նաև «Դեղագործական քիմիա մասնագիտության բակալավրի կրթական ծրագրով սովորող ուսանողների արտադրական և դեղատնային պրակտիկաների կազմակերպման և անցկացման կանոնակարգ» փաստաթուղթը: Համալսարանը համագործակցում է տարբեր գործատուների, կազմակերպությունների հետ՝ պրակտիկաների կազմակերպման համար: Չնայած պրակտիկաների համար նախատեսված ժամանակը ավելացվել է, սակայն փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ շահակիցները պրակտիկաները բավարար չեն համարում անհրաժեշտ կարողությունների ձևավորման համար: Պրակտիկաների կազմակերպման մասով խնդիրներ են առաջացել ուսուցումը հեռավար կերպով կազմակերպելու պայմաններում: Մագիստրատուրայի կրթական ծրագրով կազմակերպվող պրակտիկաները միշտ չէ, որ նպատակին են ծառայում, իսկ փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ առկա են նաև դեպքեր, երբ դրանք պասիվ բնույթ են կրում:

Համավարակի պայմաններում հեռավար կեպով ուսումնառության կազմակերպման ժամանակ դասախոսները փորձել են հարմարվել այդ պայմաններին և հիմնականում նրանց հաջողվել է կիրառել ժամանակակից տեխնոլոգիաները, տարբեր դեպքերում կիրառել են Zoom, Classroom, Viber և այլ միջոցներ: Միաժամանակ առկա են դեպքեր, երբ դասապրոցեսը կազմակերպել են հիբրիդային եղանակով՝ կիրառելով նաև համալսարանի տեխնիկական հնարավորությունները: Առկա են նաև դեպքեր, երբ այդ տեխնոլոգիաների հնարավորությունների ոչ լիարժեք տիրապետումն ու կիրառումը հանգեցրել են անարդյունավետության:

2019 թ. վերանայված կրթական ծրագրերում առկա են կարողություններին և հմտություններին վերաբերող ուսումնառության վերջնարդյունքներ, որոնք երաշխավորող դասավանդման, ուսումնառության մեթոդներ կամ մոտեցումներ առկա չեն:

Գործատուները փաստում են, որ ուսանողները սովորաբար ունենում են տեսական գիտելիքների բարձր մակարդակ, սակայն դրանց գործնական կիրառման ոչ բավարար հմտություններ:

Չնայած գործում են դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետության ուղղակի և անուղղակի գնահատման որոշ մեխանիզմներ՝ ուսանողների կողմից ՊԴԿ-ի գնահատման հարցումներ, դասալսումներ, պրակտիկանտների վերաբերյալ կարծիքներ, սակայն ուսանողների ներգրավվածությունը բավարար չէ, բացի այդ դրանք չեն հանգեցրել բարելավումների, փոփոխություններն ու բարելավումները գլխավորապես տեղի են ունենում դասախոսների անհատական մոտիվացիայի, նախաձեռնության և ուսանողի հետ ուղղակի կերպով հետադարձ կապի արդյունքում:

3.3. ՄՈՒՀ-ը ծրագրում է ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

Համալսարանում առկա է գիտելիքների գնահատման հստակ քաղաքականություն: 2013 թ.-ից գործում է «Ուսանողների գիտելիքների գնահատման և բողոքարկման կարգը»: 2016 թ. ներդրվել է «Համակարգչային թեստավորմամբ ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման ընթացակարգ»-ը, այնուհետև՝ 2020 թ. մշակվել է «ԳՊՀ-ի ուսանողների գիտելիքների գնահատման կանոնակարգ»-ը:

Կրթական ծրագրերի մասնագրերում անդրադարձ է կատարվում գնահատման գործող մոտեցումներին և մանրամասն նկարագրված է: Բացի այդ, յուրաքանչյուր ուսումնառության վերջնարդյունքի համար նշված է գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատման մեթոդներ: Դասընթացների ծրագրերում ներառված են նաև գիտելիքների ստուգման հարցաշարերը, ինքնուրույն աշխատանքների թեմաներ, սակայն առկա չեն հանձնարարականների ցուցակներ: Փաստաթղթերի (այդ թվում՝ հանձնարարականների) ուսումնասիրման արդյունքում, ինչպես նաև փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ գնահատման մոտեցումները գլխավորապես ուղղված են գիտելիքի ստուգմանը:

Դասախոսները ընթացիկ ստուգումներ և գնահատումներ են անցկացնում, մեկնաբանում գնահատականի ձևավորումը և դրանով նպաստում ձևավորող գնահատմանը, սակայն առկա են նաև դեպքեր, երբ գնահատումն իրականացվում է

առանց մեկնաբանման և ուսանողների համար այնքան էլ հիմնավոր չի լինում և թերություններն ուղղելու հնարավորություն չի տալիս:

Պրակտիկաների գնահատումը կարգավորվում է 2019 թ. լրամշակված ու հաստատված համապատասխան կանոնակարգերով: Սակայն փորձագիտական այցից պարզվեց, որ հաճախ պրակտիկաների գնահատման ժամանակ հաշվի չեն առնվում ուսանողների կարողությունների ու հմտությունների ձևավորումը:

Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գնահատման համար սահմանված են հստակ չափանիշներ: Մասնավորապես՝ մագիստրոսական թեզերի պարագայում կարևորվում է գիտական, մեթոդական կամ գործնական նորույթի առկայությունը, հստակ եզրակացությունն ու առաջարկների ներկայացումը: Ավարտական աշխատանքների պարագայում՝ դրված խնդրի տեսական և կիրառական լուծումների առաջադրումը: Սակայն ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գնահատման մոտեցումները միշտ չէ, որ կրել են այդ մոտեցումները, և ամփոփիչ ատեստավորումը հիմնականում արտահայտվել է տեսական գիտելիքի ստուգմամբ: Ամփոփիչ ատեստավորման գործընթացը կազմակերպվում է ըստ ՀՀ-ում գործող կարգի. գրառվում է ամբողջ ընթացքը, և, ըստ անհրաժեշտության, շրջանավարտները կարող են բողոքարկել գնահատականը:

Համալսարանում առկա է բողոքարկման ընթացակարգ, սակայն փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ ուսանողները գլխավորապես տեղյակ չէին դրանից և դրա անհրաժեշտությունը չեն զգացել, քանի որ խնդիրների դեպքում անմիջապես դիմում են դասախոսներին, դեկաններին:

Համալսարանում 2012 թվականից ներդրվել է «Ակադեմիական ազնվության հայեցակարգ»-ը, իսկ 2018 թվականից գործում է «ԳՊՀ-ի էթիկայի կանոնակարգ»-ը: Ըստ ռեկտորի հրամանի ստեղծվել է ակադեմիական ազնվության հանձնաժողով, առկա են նաև ակադեմիական ազնվության խախտման դեպքեր, որոնք բացահայտվել, քննարկվել են հանձնախմբում և մեղավորները հեռացվել են աշխատանքից:

Գնահատման համակարգի հետ կապված խնդիրները բացահայտվում են ամբիոնների նիստերի քննարկումների ժամանակ, ինչի արդյունքում դրանք որոշակիորեն վերանայվում են, միաժամանակ դասախոսները փոխում են իրենց մոտեցումները ուսանողների հետ անմիջական շփման արդյունքում:

3.4. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասախոսների շարժունությանը:

2019 թ. հաստատվել է «ԳՊՀ-ի բենչմարքինգի իրականացման քաղաքականություն և ընթացակարգ» փաստաթուղթը (մինչ այդ նման մեխանիզմները բացակայել են): Սակայն փաստաթուղթը դեռևս չի կիրառվել, առկա չեն ըստ դրա ՄԿԾ-ների համեմատական վերլուծության իրականացման դեպքեր: Չնայած ԳՊՀ-ի ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության մեջ նշվում է, թե տարբեր տարիների իրականացվել են առաջավոր փորձի և ՄԿԾ-ների համեմատական վերլուծություններ, սակայն նման վերլուծությունները բացակայում են, միաժամանակ առկա չէ բավարար փորձ համեմատական վերլուծություն իրականացնելու համար:

Հարկ է նշել նաև, որ ՀՊՄՀ-ի հետ համագործակցության արդյունքում ներդրվել են մանկավարժական մասնագիտությունների ուղղությամբ նոր ՄԿԾ-ներ և վերանայվել առկա ՄԿԾ-ները՝ առավել կարևորություն տալով գործնական ժամերին և պրակտիկաներին: Բացի այդ Heritag ծրագրի շրջանակում մշակվել և 2017-2018 ուստարում ներդրվել է «Զբոսաշրջության կառավարում» մագիստրոսական կրթական ծրագիրը:

Վերջին 5 տարիներին առկա չեն ուսանողների և դասախոսների փոխանակման և շարժունության օրինակներ՝ համապատասխան համաձայնագրերի արդյունքում, նաև առկա չեն եղել նման ծրագրեր: Այժմ համալսարանն այս ուղղությամբ աշխատանքներ է տանում՝ ընդլայնելով նաև համագործակցության շրջանակները:

Միաժամանակ վերջին տարիներին (հատկապես՝ ուսուցումը հեռավար կազմակերպելու պայմաններում) շատ են հրավիրյալ առաջատար մասնագետները տարբեր բուհերից և գործընկեր-կազմակերպություններից՝ ՄԿԾ-ների շրջանակում դասավանդելու նպատակով: Սակայն փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ հրավիրյալ դասախոսները մեծապես ներգրավված չեն համալսարանում իրականացվող գործընթացներում, և իրենց գործունեությունը սահմանափակվում է միայն իրենց դասընթացի անցկացմամբ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ առկա են դեպքեր, երբ դասախոսներն իրենց անձնական նախաձեռնությամբ են ուսումնասիրում համապատասխան փորձը իրենց դասընթացների շրջանակներում:

3.5. ՄՈՒՀ-ը որդեգրել է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

ՄԿԾ-ների առարկայական ծրագրերը վերանայվում են համապատասխան մասնագիտական ամբիոններում, քննարկվում և հաստատվում ֆակուլտետների խորհուրդներում: Հիմնականում գործում են 2016 թ. հաստատված առակայական ծրագրերը, չնայած, որ 2019 թ. վերանայվել են ՄԿԾ-ները, ուսումնառության արդյունքները, ինչպես նաև՝ առարկայական նկարագրերն ու դասընթացների վերջնարդյունքները:

ՄԿԾ-ների մշտադիտարկման առանձին մեխանիզմներ են հանդիսանում հարցումները ուսանողների, դասախոսների, շրջանավարտների և գործատուների շրջանում, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվություններն ու կարծիքները, պրակտիկանտների վերաբերյալ գործատուների կարծիքները: Սակայն որպես կրթական ծրագրերի կարևոր փոփոխություն նշվում է գործնական ժամերի և պրակտիկաների ավելացումը, ինչն ըստ ինքնավերլուծության գլխավորապես պայմանավորված է ՀՊՄՀ-ի ծրագրերի ուսումնասիրությամբ: Այս ուղղությամբ եղել է նաև խորհրդատվություն նախորդ հավատարմագրման գործընթացի արդյունքում:

Մշտադիտարկման կարևոր միջոց են համարվում նաև դասալսումները, սակայն դրանց արդյունավետությունը չի երևում:

Առկա չեն այս ուղղությամբ համակողմանի վերլուծություններ և դրանց վրա հիմնված բարելավումներ:

ԳՊՀ-ում 2012 թ. հաստատված կրթական ծրագրերի և մասնագիտությունների ուսումնական պլանների մշակման, հաստատման, մշտադիտարկման և գնահատման ընթացակարգի վերջինը բաժինը՝ «Ուսումնական պլանների մշտադիտարկման, գնահատման, վերանայման կարգ»-ը պարունակում է որոշ ընդհանուր նկարագրական մոտեցումներ:

Չնայած առկա առանձին մեխանիզմներին՝ կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման գործընթացը համակարգված չէ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ԳՊՀ-ում ներդրվում են տարածաշրջանում պահանջված կրթական ծրագրեր, ինչը շրջանավարտներին հնարավորություն է ընձեռում աշխատաշուկայում իրենց տեղը զբաղեցնելու համար: Սակայն ոչ իրենց մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների մեծ թիվը, ինչպես նաև նոր ներդրված մասնագիտություններով ուսանողների փոքր թիվը վկայում են այն մասին, որ կրթական ծրագրերի համապատասխանությունը աշխատաշուկայի պահանջներին այնքան էլ հստակ չէ և հենված չէ խորը վերլուծությունների վրա:

Փորձագիտական խումբը կարևորում է ԳՊՀ-ի ղեկավարության և աշխատակիցների բարձր հասարակական պատասխանատվության դրսևորումը՝ պետության համար կարևոր մասնագիտությունները նույնիսկ փոքր խմբերով պահպանելու հարցում, սակայն նշում է, որ այս հարցում պետք է նաև պետական մոտեցում լինի, իսկ բուհը պետք է նաև ինստիտուցիանալացված քաղաքականություն իրականացնի՝ այդ ծրագրերի շարունակականությունն ապահովելու համար: Դրա հետ մեկտեղ, խմբերի չափազանց փոքրաթիվ լինելը (1-2) հանգեցնում է ինչպես ուսանողների, այնպես էլ դասավանդողների մոտիվացիայի նվազեցման:

Կրթական ծրագրի նոր մշակված ձևաչափում առկա է մանրամասն նկարագիր ըստ ուսումնառության արդյունքների և շնորհվող որակավորումների: Հստակեցված են ուսումնառության արդյունքների կապակցվածությունը ՈԱՇ-ի համապատասխան մակարդակի արդյունքների հետ: Սակայն փորձագիտական խումբը կարևորում է ՄԿԾ-ների ուսումնառության արդյունքների և դասընթացների վերջնարդյունքների հստակ փոխկապակցվածությունը, ուստի մշակման և վերամշակման գործընթացներում անհրաժեշտ է արտաքին և ներքին շահակիցների ներգրավվածությունը, քանի որ հակառակ դեպքում կարող է վտանգվել կրթական ծրագրով նախատեսված վերջնարդյունքների ապահովումը:

Դասընթացների իրականացման ոչ հստակ պլանավորումը կարող է վտանգել դրա արդյունքների ապահովումը՝ միաժամանակ դժվարեցնում է գործընթացի մշտադիտարկումն ու վերահսկումը համապատասխան օղակների կողմից:

Կարևոր է կամընտրական առարկաների առկայությունը կրթական ծրագրերում՝ նաև ներքին և արտաքին շարժունության ապահովման տեսանկյունից, սակայն, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ կամընտրությունը լինի այնպիսին, որ չվտանգի կրթական վերջնարդյունքների ապահովումը՝ թեկուզ մասնակիորեն:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ կրթական ծրագրերում կարևորվում է օտար լեզվի իմացությունը՝ հատկացնելով բավականին կրեդիտներ, սակայն դեռևս չի երևում դրա արդյունավետությունը և նախատեսված վերջնարդյունքների հստակ ապահովումը:

Կրթական ծրագրերում առկա է դասավանդման և ուսումնառության մոտեցումների վերաբերյալ տեղեկատվություն՝ նաև կրթական վերջնարդյունքներին համապատասխան, նկարագրվում է կոմպետենցիաների ձևավորման ուղին, ինչը ուղղորդող է դասախոսի համար կրթական վերջնարդյունքներն ապահովելու ճանապարհին: Սակայն տպավորություն կա, որ առանձին դեպքերում ձևակերպված մոտեցումները կիրառությունից չեն բխում և շահակիցներն էլ լավատեղյակ չեն դրանցից, սա ևս վկայում է նրանց ներգրավվածության պակասի մասին: Միաժամանակ փորձագիտական խմբի կողմից կարևորվում է այն, որ դասախոսները կարող են ազատ ընտրել դասավանդման և ուսումնառության մեթոդները արդյունավետության: ապահովման համար, սակայն շրջանավարտների մոտ պրակտիկ կարողությունների և հմտությունների (այդ թվում՝ հետազոտական կիրառական) ոչ լիարժեքությունը խնդրահարույց է համարում, ուստի գտնում է, որ համալսարանն այս ուղղությամբ վարվող քաղաքականությունը պետք է վերանայի՝ այդ թվում համալսարանում առկա լավ փորձի տարածմամբ, հանձնարարականների համապատասխանեցմամբ և պրակտիկաների, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նկատմամբ առավել հետևողականությամբ, ինչպես նաև աշխատաշուկայի պահանջների հաշվառմամբ:

Դասախոսները գլխավորապես կարևորում են ուսանողների կարծիքները և դրանք հաշվի են առնում դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության ժամանակ, և այդ ազդեցությունը պայմանավորված է ոչ մեծաթիվ կուրսերով և դասախոս-ուսանող անմիջական առնչությամբ:

Փորձագիտական խումբը կարևորում է այն, որ բուհը, ձգտելով արդյունավետության, վերանայում է հեռակա համակարգում ուսումնառության կազմակերպման մոտեցումները, սակայն կարևորում է նաև դրանց արդյունքում տեղի ունեցած փոփոխությունների գնահատումն ու հիմնավորումը:

Նաև դրական է համարվում համավարակի պայմաններում հեռավար կերպով ուսումնառության կազմակերպման բուհի արձագանքը, այդ պայմաններում դասավանդման և ուսումնառության մեթոդների զարգացման մոտեցումները, առկա լավ փորձը, որոնք ապահովել են այդ պայմաններում կրթության բավականին արդյունավետ գործընթաց: Սակայն փորձագիտական խումբը կարևորում է նաև այդ լավ փորձի տարածումը և կարողությունների ու հմտությունների ձևավորման խնդիրը, ինչը այս պայմաններում, թերևս, առավել արտահայտված է դարձել:

Կարևոր է այն, որ դասախոսներն իրենց նախաձեռնությամբ զարգացնում են կիրառվող մեթոդներն ու մոտեցումները, սակայն կարևոր է նաև, որ բուհը աջակցի կամ նպաստի դասավանդողների կատարելագործմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետության գնահատման գործող և բարելավումների հանգեցնող

մեխանիզմների ներդրումը համալսարանում, ինչը կերաշխավորի համընթաց զարգացումը ինստիտուցիոնալ կերպով:

ԳՊՀ-ում առկա է հստակ քաղաքականություն և սահմանված ընթացակարգ ուսանողների գիտելիքների գնահատման և բողոքարկման գործընթացներում: Սակայն գնահատման գործընթացը այնքան էլ չի ապահովում կարողությունների և հմտությունների ստուգումը, ինչը արտահայտվում է ինչպես համապատասխան հանձնարարականների խիստ սակավությամբ, այնպես էլ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գործնականում գնահատման մոտեցումներով: Գնահատման համակարգի արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմներ առկա չեն, առկա չեն նաև վերլուծություններ այս ուղղությամբ:

Համալսարանում բավարար միջոցներ և մեխանիզմներ են ներդրվել ակադեմիական ազնվությունն ապահովելու համար, ղեկավարության կողմից առկա է կամք այս ուղղությամբ, նաև հետագայում առավել ինստիտուցիոնալացված և բարելավված համակարգ ունենալու՝ մասնավորաբար խիստ հետևողականություն դրսևորելու ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարմանը: Այս հանգամանքը ևս փորձագիտական խումբը դրական է համարում:

Մտահոգիչ է համալսարանում ուսանողների և դասախոսների շարժունության, ինչպես նաև կրթական ծրագրերի առաջավոր փորձի համեմատական վերլուծության իրականացման փորձի բացակայությունը: Սակայն կարևոր է համալսարանի՝ այս ուղղությամբ ձեռնարկած քայլերը՝ բենչմարքինգի իրականացման քաղաքականության մշակումը, համագործակցության համապատասխան շրջանակների հաստատման փորձերը:

Կարևոր է նաև առանձին դեպքերում լավ փորձի առկայությունը՝ միջազգային ծրագրի շրջանակում կրթական ծրագրի ներդրում, առանձին դասախոսների սեփական նախաձեռնությամբ առաջավոր փորձի ուսումնասիրում:

Փորձագիտական խումբը գտնում է, որ հրավիրյալ առաջատար մասնագետների ներգրավումը անուղղակի կերպով նպաստում է առաջավոր փորձի ներդրմանը ուսումնական գործընթացում, սակայն կարևորում է նաև նրանց առավել ներգրավված լինելը բուհի տարբեր գործընթացներում, այդ թվում նաև հիմնական դասախոսական կազմի հետ կապը, քանի որ վերջինս կնպաստի, որ իրենք առավել լավ ծանոթանան բուհի առանձնահատկություններին նաև կնպաստի փոխադարձաբար փորձի փոխանակմանը:
Համալսարանում առկա չէ կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման հստակ քաղաքականություն: Առկա են առանձին որոշ մեխանիզմներ, որոնք սակայն համակարգված չեն, համակողմանի վերլուծության և դրանցից բխող բարելավումների չեն հանգեցրել:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԳՊՀ-ի կրթական ծագրերը հիմնականում համահունչ են առաքելությանը, նախորդ հավատարմագրումից հետո վերանայված ՄԿԾ-ներում առկա է մանրամասն նկարագիր՝ ըստ շնորհվող որակավորումների և ակնկալվող ուսումնառության արդյունքների, բարելավվել են դասավանդման և ուսումնառության մեթոդները, բազամազանեցվել են գնահատման մեթոդները, ստեղծվել են ակադեմիական բարեվարքության ապահովման հիմքեր, կարևորվում է դասախոսների և ուսանողների

շարժունությունը, առաջավոր փորձի ուսումնասիրումն ու ներդրումը, ներդրվել են ՄԿԾ-ների մշտադիտարկման և բարելավման որոշ մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԳՊՀ-ն բավարարում է չափանիշ 3-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Գորիսի պետական համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատում է ***բավարար***:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

4.1 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

Ինքնավերլուծության համաձայն Գորիսի պետական համալսարանում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության հստակ մեխանիզմներ: Դիմորդների ներգրավման և ընդունելության ցուցանիշներն ավելացնելու նպատակով բուհի կողմից իրականացվում են ամենամյա միջոցառումներ: Մասնագիտական կողմնորոշման նպատակով կազմակերպվում են ԳՊՀ-ի աշխատակիցների այցելություններ տարածաշրջանի հանրակրթական դպրոցներ, նախապես ձևավորվում և տարվա ընթացքում հանրակրթական հաստատություններում տարածվում են տեղեկատվական նյութեր, համալսարանի մասին պատմող գովազդային տեսահոլովակներ, պարբերաբար իրականացվում են աշակերտների ճանաչողական այցեր համալսարան:

ԳՊՀ-ում դիմորդների ընդունելությունը բակալավրի կրթական ծրագրի առկա ուսուցման համակարգում իրականացվում է՝ համաձայն ՀՀ Կառավարության 26.04.2012 թվականի թիվ 597-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգի»: Ըստ այս կարգի՝ ընդունելությունն իրականացվում է հանրապետական միասնական քննությունների արդյունքում, որոնք կազմակերպվում և անցկացվում են Գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից:

Դիմորդների ընդունելությունը ԳՊՀ-ի բակալավրի կրթական ծրագրի հեռակա ուսուցման համակարգում իրականացվում է ՀՀ կրթության և գիտության նախարարի 27.07.2012 թ. թիվ 753-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բուհերի հեռակա ուսուցման ընդունելության կարգով»: Հեռակա ուսուցման ընդունելության վերաբերյալ հայտարարությունները սահմանված ժամկետներում տեղադրվում են ԳՊՀ-ի կայքէջում և հրապարակվում ԶԼՄ-ներով: Քննությունների կազմակերպումը և անցկացումը վերահսկում է ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը:

ԳՊՀ-ի մագիստրատուրայի ընդունելությունն իրականացվում է համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 06.12.2007 թ. թիվ 1193-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգի», ինչպես նաև ԳՊՀ-ի գիտական խորհրդի կողմից հաստատված կարգի:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ԳՊՀ-ում որոշ մասնագիտությունների գծով (կերպարվեստ, զբոսաշրջություն) դիմորդների թիվը բավականին քիչ է, նույնիսկ՝ 1 ուսանող: Սակայն բուհը շարունակել է այս կրթական ծրագրերի իրականացումը՝ բաշխելով այլ բաժիններից ստացված միջոցները: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ այն նպատակ ունի պահպանել տարածաշրջանի համար կարևորություն ունեցող մասնագիտությունները, ինչպես նաև ՊԴ կազմը՝ հաշվի առնելով նաև գործազրկության բարձր մակարդակը, արտագաղթը:

4.2 ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր:

Ըստ ԳՊՀ-ի ինքնավերլուծության ուսանողների կրթական կարիքների վերհանման գործընթացում ներգրավված են համալսարանի մի շարք օղակներ ու ստորաբաժանումներ: Այս նպատակով ուսանողների շրջանում անցկացվում են հարցումներ, ըստ ինքնավերլուծության կարիքների վերհանումն իրականացվում է նաև ամբիոնների կողմից: ԳՊՀ-ում ուսանողների կրթական կարիքների վերհանման գործընթացը ավելի արդյունավետ դարձնելու համար «Լրատու» թերթի խմբագրակազմը ֆակուլտետներում տեղադրել է հարցարկղեր, որոնք ուսանողներին հնարավորություն են տալիս դիմում-առաջարկներով բարձրացնել իրենց հուզող հարցերն ու խնդիրները: Փորձագիտական այցի ընթացքում նույնպես պարզ դարձավ, որ կրթական կարիքների վերհանման ուղղությամբ իրականացվում են հարցումներ՝ ամենամյա եղանակով, արդյունքներն ուղարկվում են համապատասխան ստորաբաժանումներ:

Համաձայն ինքնավերլուծության նշվում է, որ ուսանողների հարցումներին մասնակցում են առկա և հեռակա համակարգի ուսանողները, սակայն հարցումներին մասնակցության թիվը բավականին ցածր է, բացի այդ փորձագիտական այցի շրջանակում պարզվեց, որ հեռակա համակարգի ուսանողները մեծամասամբ տեղեկացված չեն հարցումներից և մասնակցության մակարդակը նունպես ցածր է:

Ուսանողների կրթական կարիքների վերհանումը Ուսանողական խորհրդի գործունեության հիմնական խնդիրներից է: Սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՈՒԽ-ի ներգրավվածությունը չկա կարիքների վերհանման գործընթացներում, ուսանողները կրթական կարիքների քննարկման համար դիմում են դեկաններին և վարչական մարմիններին:

4.3 ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

ԳՊՀ-ում ուսումնական տարվա սկզբին ուսանողները դասախոսներից ստանում են դասընթացի ամբողջական փաթեթը: Կրեդիտային համակարգի ներդրումից հետո

խորհրդատվությունների կազմակերպումը դարձել է պարտադիր պայման: Ըստ ինքնավերլուծության՝ բոլոր կուրսերին կցված են ուսումնական խորհրդատուներ, ովքեր մշտական կապի մեջ են ուսանողների հետ:

Լրացուցիչ պարապմունքների կազմակերպման հնարավորություններ կան՝ չնայած ամբիոններում հստակ ժամանակացույցի սահմանված չլինելուն: Փորձագիտական այցի ընթացքում տեղի ունեցած հանդիպումները ցույց տվեցին, որ ուսանողները, այդ թվում՝ հեռակայի, իրենց հետաքրքրող հարցերով ու առաջացած խնդիրներով կարող են դիմել ՊԴ և ՈւՕ անձնակազմին՝ ստանալով համապատասխան աջակցություն:

ԳՊՀ-ում կամրջող դասընթացները, ցածր առաջադիմություն ունեցող ուսանողների համար նախատեսված լրացուցիչ պարապմունքները բացակայում են: Հեռակա համակարգի ուսանողներն ունեն ցարծր ներգրավվածություն լրացուցիչ պարապմունքների և խորհրդատվական ծառայությունների անցակցման մեջ, որի պատճառների բացահայտման և ներգրավվածությունը բարձրացնելու համար մեխանիզմները դեռևս ներդրված չեն:

4.4 ՄՈՒՀ-ում սահմանված է ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց:

ԳՊՀ-ի ինքնավերլուծության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Գորիսի պետական համալսարանում ուսանողների վարչական աշխատակազմի կողմից օժանդակության և ուղղորդման վերաբերյալ ամբողջական փաստաթուղթ դեևս առկա չէ: Գործընթացը կարգավորվում է՝ ըստ ԳՊՀ աշխատանքային ներքին կարգապահական կանոնների:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ խնդիրների դեպքում ուսանողները կարող են դիմել ֆակուլտետների դեկաններին, ինչպես նաև ուսումնական խորհրդատուներին, անհրաժեշտության դեպքում՝ պրոռեկտորին և ռեկտորին: Ռեկտորը, պրոռեկտորը և բոլոր ուսումնական ստորաբաժանումների ղեկավարներն ունեն ուսանողների ընդունելության ժամանակացույցեր, առկա են ԳՊՀ-ի աշխատանքային ներքին կարգապահական կանոններ:

Ուսանողին տրամադրվում են նաև տեղեկություններ ֆակուլտետի դեկանատի կողմից կիսամյակի ընթացքում միջանկյալ ստուգման ձևերի, դրանց ժամկետների մասին:

Մի շարք խնդիրների լուծման համար ԳՊՀ-ում գոյություն ունեն ընթացակարգեր, որոնք հեշտացնում են այս կամ այն հարցի լուծումը՝ «ԳՊՀ-ի ուսանողների գիտելիքների գնահատման կանոնակարգ», «Ուսանողների տեղափոխման և փոխադրման կարգ», «Ակադեմիական ազնվության հայեցակարգ»: Համալսարանն ունի պաշտոնական կայք /www.gorsu.am/, ֆեյսբուքյան էջ https://www.facebook.com/GorisSU/, էլեկտրոնային հասցե info@gorsu.am, որոնք նույնպես ուսանողների համար միջոց են անհրաժեշտության դեպքում վարչական աշխատակազմին դիմելու համար: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ բուհը նախատեսում է առաջիկայում բազմազանեցնել առկա մեխանիզմները:

4.5 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

ԳՊՀ-ի փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ 2011 թ. սեպտեմբերի 1-ին ստեղծվել է Գորիսի պետական համալսարանի ուսանողների կարիերայի աջակցման կենտրոնը: 2017 թ. գիտական խորհրդի որոշմամբ վերակազմակերպվել է ԳՊՀ-ի Կրթության որակի ապահովման և միջազգային համագործակցության բաժինը և դրա հիմքի վրա ստեղծվել են երկու առանձին բաժիններ՝ Արտաքին կապերի և համագործակցության, Կրթության որակի ապահովման և ուսանողների կարիերայի աջակցման: Գիտական խորհրդի 2018 թ. հունվարի 19-ի նիստում հաստատվել է ԳՊՀ կրթության որակի ապահովման և ուսանողների կարիերայի աջակցման բաժնի կանոնակարգը:

2019 թ. բաժնի կողմից կազմվել է «Դեպի կարիերա» ուսանողի ուղեցույց, կազմակերպել են հանդիպումներ իրազեկման նպատակով: Սակայն փորձագիտական այցից պարզվեց, որ ուսանողները դեռևս թույլ են իրազեկված այդ գործընթացներից:

Ինքնավերլուծությունից պարզ է դարձել, որ առայժմ լիարժեք չէ շրջանավարտների հետ հետադարձ կապը, որի պատճառով կարիերայի կենտրոնը շրջանավարտների անձնական թերթիկների միջոցով հավաքագրում է նրանց տվյալները: Փորձագիտական այցի ընթացքում այդուհանդերձ թերթիկների մասին տեղեկացվածության մակարդակը բավական ցածր էր: Կրթության որակի ապահովման և ուսանողների կարիերայի աջակցման բաժինը խորհրդատվություն է տալիս ուսանողներին՝ աշխատանքի տեղավորման, ռեզյումե (CV) կազմելու, հարցազրույցներին նախապատրաստվելու համար:

Կենտրոնը շրջանավարտների զբաղվածության ուսումնասիրություն է իրականացրել 2019-2020 թթ. ավարտած 303 շրջանավարտների շրջանում: Վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ 2020 թ. ավարտած ուսանողներից 85-ը աշխատում է իր մասնագիտությամբ, 105-ը՝ աշխատում են ոչ իրենց մասնագիտությամբ: Չաշխատող շրջանավարտների թիվը 113-ն է: Բուհ-գործատու կապի արդյունավետության և աշխատաշուկայի ուսումնասիրության որակական հետազոտությունները սահմանափակ են:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ԳՊՀ-ն նախատեսում է պաշտոնական կայքում ստեղծել նոր ծառայություններ, որոնք ուսանողներին կօգնեն աշխատանք գտնելու, իսկ ձեռնարկություններին՝ որակյալ կադրեր ձեռք բերելու հարցերում: Գործատուներին նույնպես տրամադրվել են հարցաթերթիկներ՝ պարզելու ԳՊՀ-ի շրջանավարտների վերաբերյալ գործատուների կարծիքը, նրանց առանձնահատկությունները, բարելավման ենթակա կողմերը:

Փորձագիտական այցից պարզվեց, որ շրջանավարտներն ու ուսանողները ինքնուրույն են աշխատանք գտնում, և այս առումով աջակցելու հարցում համալսարանի դերը հիմնականում նկատելի չէր՝ բացառությամբ առանձին մասնավոր դեպքերի:

4.6 ՄՈՒՀ-ը աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

Գորիսի պետական համալսարանում ուսանողների ներգրավվածությունը գիտահետազոտական աշխատանքներում հիմնականում կատարվում է մասնագիտական

ամբիոնների և ավարտական աշխատանքների ղեկավարների հետ համատեղ հետազոտություններ իրականացնելու միջոցով: ԳՊՀ-ի ինքնավերլուծությունը փաստում է, որ այդ աշխատանքներում ավելի շատ ներգրավված են մագիստրատուրայի ուսանողները, քանի որ գիտահետազոտական աշխատանքների կատարումը մագիստրոսի կրթական ծրագրի պարտադիր բաղադրիչներից է: Ավարտական աշխատանքների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մագիստրոսական թեզերում ոչ միշտ է հետազոտական բաղադրիչը գերակա, ներկայացված տվյալները և ուսումնասիրված մասնագիտական գրականությունը հաճախ բավական հնացած է:

ԳՊՀ-ում ուսանողներին գիտահետազոտական աշխատանքներում ներգրավվելուն նպաստում է նաև 2017 թվականից ԳՊՀ-ում գործող Ուսանողական գիտական ընկերությունը: Փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բակալավրիատի ավարտական աշխատանքների պարագայում հետազոտական բաղադրիչը նույնպես բավական թույլ է արտահայտված, հաճախ կրում է տարբեր աղբյուրներից տեղեկատվության ներկայացման բնույթ: Փորձագիտական այցի ընթացքում իրականացված հանդիպումները փաստեցին, որ ԳՊՀ-ի ցուցաբերած օժանդակությունը գիտահետազոտական աշխատանքների խրախուսման ուղղությամբ խիստ սակավ է: Ընթացիկ տարում ՈւԳԸ-ն նախաձեռնել է կազմակերպել ուսանողական գիտաժողով, որին արդեն հայտ են ներկայացրել տարբեր բուհերից և բավականին մեծ թվով ուսանողներ, սակայն կազմակերպչական աշխատանքների առումով դեռևս հստակություն չկար:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ 2015 թվականի գիտահետազոտական աշխատանքներում ներգրաված են եղել բակալավրիատի 4, մագիստրատուրայի 3 ուսանող, 2016 թ՝բակալավրիատի՝ 7, մագիստրատուրայի՝ 4 ուսանող: Իսկ 2017 թվականից սկսած ոչ մի ուսանող ներգրաված չէ նման աշխատանքներում: Բուհի ինքնավերլուծության համաձայն գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների թվի նվազումը պայմանավորված է պետության կողմից ֆինանսավորվող թեմաների սակավությամբ և համալսարանում գիտական քաղաքականության մեխանիզմների ոչ լիարժեք կիրառմամբ, ինչպես նաև որոշ ամբիոնների ոչ բավարար մասնագիտական ներուժով:

ԳՊՀ-ում ՊԴ կազմի գիտահետազոտական աշխատանքներում ներգրավածությունը ևս թույլ է արտահայտված, սա նաև խոչընդոտ է դառնում ուսանողներին նման աշխատանքներում ներգրավելու համար:

4.7 ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

Գորիսի պետական համալսարանի ուսանողների իրավունքները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ («Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներ), ԳՊՀ-ի կանոնադրությամբ, ԳՊՀ-ի ներքին կարգապահական կանոններով և այլ իրավական ակտերով: ԳՊՀ-ի ուսանողների իրավունքների պաշտպանության պատասխանատու կառույցը Ուսանողական խորհուրդն է, որն իր կանոնադրության համաձայն՝ համալսարանի ուսանողական ինքնակառավարման, սովորողներին միավորող, նրանց շահերը պաշտպանող ընտրովի

ներկայացուցչական մարմին է: Ուսանողական խորհրդի լիազորություններն ու գործունեության կարգը ՀՀ օրենսդրությանը և ենթաօրենսդրական ակտերին համապատասխան սահմանվում են ԳՊՀ-ի կանոնադրությամբ և Ուսանողական խորհրդի կանոնադրությամբ: Ուսանողական խորհրդի հիմնական նպատակն է բարձրացնել ուսանողի դերն ու ակտիվությունը ուսումնական գործընթացի կազմակերպման ու որակի ապահովման մեջ և հասարակական կյանքում: Նրանք ընդգրկված են ԳՊՀ-ի Ուսանողական խորհրդի և նրա առանձին հանձնաժողովների (ուսումնագիտական, լրատվության և տեղեկատվության, մշակութային, մարզական և այլն) կազմում, սակայն փորձագիտական այցի ընթացքում տեղի ունեցած հանդիպումները փաստեցին, որ ուսանողների մոտ խորհրդի գործառույթների, դերի և որդեգրած նպատակների նկատմամբ միասնական ընկալում դեռևս ձևավորված չէ: ՈւԽ-ի դերը չի երևում հատկապես ուսանողների իրավունքներին առնչվող հարցերում: Փորձագիտական այցի ընթացքում տեղի ունեցող հանդիպումները ցույց տվեցին, որ այդուհանդերձ ուսանողներն իրավունքների ճշգրտման, պաշտպանության դեպքում դիմում են խմբերի ավագներին, դեկաններին կամ վարչական աշխատակիցներին: Դասախոսական կազմի ներկայացուցիչները նույնպես իրազեկում են ուսանողներին իրենց իրավունքների վերաբերյալ:

Ինքնավերլուծության ուսումնասիրությունից պարզ է դառնում նաև, որ ԳՊՀ-ն նախատեսում է ստեղծել ուսումնառողների իրավունքների պաշտպանության հանձնաժողով, որը կզբաղվի ուսանողների դիմում-բողոքների ընդունմամբ՝ տալով համապատասխան ընթացք և աջակցելով ուսանողների իրավունքների պաշտպանության արդյունավետ իրականացմանը, որը սակայն փորձագիտական այցի ընթացքում դեռևս ձևավորված չէր:

4.8 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

ԳՊՀ-ի ռազմավարական ծրագրի համաձայն՝ համալսարանը կարևորում է ուսանողների կրթական, խորհրդատվական ծառայությունների գնահատումը և որակի ապահովումը շարունակական բարելավմանը նպաստելու համար: Այդ նպատակով կիրառվող մեխանիզմներից մեկը բուհում անցկացվող հարցումներն են: Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումն անցկացվել է բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների շրջանում՝ 2018 թ. առաջին քննաշրջանի ավարտից հետո: Հարցմանը մասնակցել են 34 կուրսերի ուսանողներ, որից 27-ը եղել են բակալավրիատի, իսկ 7-ը՝ մագիստրատուրայի ուսանողներ: Հարցման արդյունքում վեր հանված կողմերը վերաբերում են մասնագիտական դասաժամերի և պրակտիկաների ավելացմանը, մասնագիտական գրականության համալրմանը, գնահատման համակարգի հստակությանը, շենքային պայմանների և ջեռուցման համակարգի բարելավմանը, ինչպես նաև ՀՀ այլ բուհերի հետ փորձի փոխանակման հնարավորությունների ընձեռնմանը: Ինչպես նախորդ փորձագիտական այցի, այնպես էլ այս փորձագիտական այցի ընթացքում վեր հանված խնդիրներից է հեռակա կրթաձևի ուսանողների ներգրավումը որակի ապահովման գործընթացներում:

Բուհը որպես կարիքների վերհանման մեխանիզմ է դիտարկում իրենց ունեցած խնդիրների վերաբերյալ համապատասխան մարմիններին դիմելու հասանելիությունը, ինչպես նաև ռեկտորի, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների, ֆակուլտետների դեկանների և այլ ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվությունները:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ԳՊՀ-ում առկա են ուսանողների հավաքագրման և ընդունելության հստակ մեխանիզմներ, որոնք համապատասխանում են ներպետական օրենսդրությանը և ԳՊՀ-ի 2019-2023 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի դրույթներից բխող հստակ մեխանիզմների կիրառմանը, որը հանգեցնում է գործընթացի թափանցիկության, օբյեկտիվության պահպանմանը: Այդուհանդերձ, որոշ մասնագիտությունների դեպքում (դեղագործական քիմիա, կենսաբանություն, մաթեմատիկա) դիմորդների թիվը գնալով նվազում է: ՀՀ-ի համար այս մասնագիտությունների կարևորությունը հաշվի առնելը և երբեմն շատ փոքր խմբերով դրանց իրականացումը կարևոր է տարածաշրջանի կարիքներից ելնելով, սակայն այս ուղղությամբ ուսանողների հավաքագրման մեխանիզմների կատարելոգործումը և իրազեկումը հնարավորություն կտան ավելի շատ ուսանողներ ներգրավելու:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում նաև, որն ԳՊՀ-ում գործում են ուսանողների կարիքների վերհանման որոշ մեխանիզմներ: Այդուհանդերձ, իրականացվող հարցումներին առավել մեծ ներկայացուցչականության ապահովումը, հեռակա ուսանողների ավելի ակտիվ ներգրավումը թույլ կտա ստանալ համակողմանի պատկեր ուսանողների կարիքների վերաբերյալ, իսկ դրանց պարբերական իրականացումը կնպաստի ուսանողների՝ իրենց ստացած կրթությունից և մատուցվող այլ ծառայություններից բավարարվածության աճին: Կարիքների բացահայտման գործիքակազմի բազմազանեցումը (ֆոկուս խմբային քննարկումներ, շրջանավարտների հետ հետադարձ կապի ապահովում) լրացուցիչ խթան կհանդիսանան կրթական միջավայրի գրավչության բարձրացման և ուսանողակենտրոն միջավայրի ձևավորման համար:

Կրեդիտային համակարգի ներդրումից հետո խորհրդատվությունների կազմակերպումը դարձել է պարտադիր պայման: Բոլոր կուրսերին կցված են ուսումնական խորհրդատուներ, ովքեր մշտական կապի մեջ են ուսանողների հետ: Կարևոր է նաև, որ ուսանողները կաշկանդված չեն իրենց հուզող հարցերի, խնդիրների և առաջարկությունների դեպքում դիմել ՊԴ կազմին և ուսումնական խորհրդատուներին ինքնին դրական փաստ է:

Չնայած, որ ԳՊՀ-ում վարչական անձնակազմին դիմելու հստակ ժամանակացույց առկա չէ, ուսանողներն իրենց խնդիրներով և հարցերով դիմում են դեկաններին, ամբիոնի վարիչներին և վարչական այլ աշխատողներին: Փորձագիտական խումբը գտնում է, որ գործընթացը կանոնակարգման, հստակեցման և հեռակա համակարգի ուսանողների համար մատչելի մեխանիզմներով հարստացման կարիք ունի, ինչը կնպաստի ուսանող-վարչական աշխատող կապի սերտացմանը, ուսանողների կարիքների վերհանմանը և ուսումնական գործընթացի արդյունավետ պլանավորմանը:

Գիտական խորհրդի 2018 թ. հունվարի 19-ի նիստում հաստատվել է ԳՊՀ-ի կրթության որակի ապահովման և ուսանողների կարիերայի աջակցման բաժնի կանոնակարգը, սակայն այժմ լիարժեք չէ շրջանավարտների հետ հետադարձ կապը, ինչի պատճառով բուհի շրջանավարտների մասին տեղեկատվության թարմացումը դեռևս պարբերական բնույթ չի կրում: Կենտրոնը վերջին տարիների ընթացքում չի իրականացրել հետազոտություններ բուհի շրջանավարտների զբաղվածության, բուհ-գործատու կապի արդյունավետության, շրջանավարտների բավարարվածության և աշխատաշուկայի վերաբերյալ, որը նաև մարդկային ռեսուրսների պակասի հետևանք է: Նման հետազոտությունների իրականացումը, մասնագիտական կենտրոնների հետ համագործակցությունը և շրջանավարտների կարիքների վերհանումը կնպաստեն կրթական ծրագրերի վերջնարդյունքների հստակեցմանը և առավել պահանջված շրջանավարտների թողարկմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ուսանողներն ունեն համապատասխան հմտություններ՝ աշխատաշուկայում որոնելու և գտնելու իրենց համապատասխան աշխատանք: Միաժամանակ դրական է, որ բուհը մշակել է ուսանողների կարիերային նպաստող ուղեցույց և աշխատանքներ է իրականացնում այս ուղղությամբ: Սակայն այս առումով կարևոր է բուհի դերի մեծացումը, շրջանավարտ-բուհ-գործատու ամուր կապի և համագործակցության շրջանակի ձևավորումն, ինչպես նաև ուսանողների կարիերային նպաստող համակարգված գործընթացների իրականացումն ու զարգացումը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ ԳՊՀ-ում ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմները ևս կանոնակարգման կարիք ունեն: Փորձագիտական այցի ընթացքում բացահայտված խնդիրներից է նաև ուսանողների՝ գիտահետազոտական աշխատանքներում խրախուսման մեխանիզմներրի սակավությունը: Այս մեխանիզմների առկայությունը, Ուսանողական գիտական ընկերության ակտիվացումը կնպաստեն ուսանողների մոտ հետազոտական աշխատանքներով զբաղվելու մոտիվացիայի բարձրացմանը, ինչը ուսումնառության հետագա աստիճանին նախապատրաստվելու հիմք կհանդիսանա: Ուսանողների իրավունքների մասին իրազեկվածության բարձրացման գործում փորձագիտական խումբը կարևորում է ՈւԽ-ի դերի հստակեցումը, ՈւԽ-ի կանոնադրությունից բխող հիմնական նպատակների իրականացումը (բարձրացնել ուսանողի դերն ու ակտիվությունը ուսումնական գործընթացի կազմակերպման ու որակի ապահովման մեջ և հասարակական կյանքում):

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԳՊՀ-ում առկա են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության հստակ մեխանիզմներ, գործում են ընդունելության վերաբերյալ տեղեկատվության տարածման մի շարք մեխանիզմներ, ինչպես նաև առկա են ուսանողներին խորհրդատվություն տրամադրելու և վարչական անձնակազմին դիմելու հնարավորություններ, ուսանողների կարիերային նպաստելու ծառայություններ, բուհի կողմից ուսանողներին տրամադրվում է աջակցություն կրթական միջավայրի բարելավման նպատակով, փորձագիտական խումբը գտնում է, որ ԳՊՀ-ն բավարարում է չափանիշ 4-ի պահանջներին:

Եզրակացություն: ԳՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

5.1 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

ԳՊՀ-ում առկա է ՊԴ կազմի ձևավորման և պաշտոնի տեղակալման կանոնակարգ, որը հաստատվել է 2019 թվականին: Ըստ այս կարգի սահմանվում են դասավանդողների համար հնարավոր պաշտոնները, դրանց տեղակալման համար ներկայացվող չափանիշները, ինչպես նաև մրցութային և ոչ մրցութային կարգերով տեղակալման ընթացակարգերը: Ամբիոններում դասախոսական կազմի համալրման անհրաժեշտությունը ներկայացվում է ուսումնական տարվա ավարտին՝ ամբիոնների կողմից:

Մինչև այժմ դեռևս ՊԴ կազմի պաշտոնների տեղակալումն իրականացվել է ոչ մրցութային կարգով՝ ռեկտորի նշանակմամբ: Վերջին տարիներին ՊԴ կազմի համալրման ուղղությամբ վարվող քաղաքականություն է այն համալրել հանրապետության տարբեր բուհերի առաջատար մասնագետներով: Նրանց համար ստեղծվում են իրենց աշխատավայրերին համարժեք պայմաններ, որպեսզի հնարավոր լինի ներգրավել ԳՊՀ-ում դասավանդման գործընթացում: Սակայն չկա հստակ մոտեցում կամ քաղաքականություն, թե ներգրավվող դասախոսները ինչպիսի չափանիշների պետք է բավարարեն:

Միաժամանակ բուհում կարևորում են գործնական փորձառությամբ մասնագետների, գործատուների և բուհի շրջանավարտների ներգրավումը դասավանդման գործընթացում՝ խրախուսելով վերջիններիս հետագա շարունակական կրթությունը:

2018 թ. ներդրվել է ԳՊՀ-ի ՊԴ կազմի վերապատրաստման և որակավորման բարձրացման ծրագիր, ըստ որի ՊԴ կազմը գնահատվում է ըստ կրթական և հետազոտական-մեթոդական կառուցամասերի: Կարգի ներդրման արդյունքում բուհը ակնկալել է ունենալ մրցունակ դասախոսական կազմ, որը կկարողանա մասնակցել նաև փոխանակման ծրագրերին, վարել օտար լեզուներով դասընթացներ: Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ նախքան կարգը ներդնելը նախնական հետազոտություն չի իրականացվել և այժմ երբ անդրադարձ են կատարում, նկատում են, որ մինչ 5-ամյա ժամկետի ավարտը ատեստավորման գործընթացը չհաղթահարողները մեծ տոկոս կկազմեն:

ԳՊՀ-ում առկա է ՈւՕ կազմի աշխատանքի ընդունման և ազատման ընթացակարգ՝ հաստատված 2019 թվականին, ըստ որի ՈւՕ կազմի ընդունումն իրականացվում է առանց

մրցույթի՝ փորձաշրջանի սահմանմամբ: 2020 թ. հունվարին հաստատվել է ՌԻՕ կազմի վերապատրաստման և ատեստավորման կարգ, և բուհը ակնկալում է, որ այս գործընթացի արդյունքում պետք է կարողանա ապահովել համապատասխան կոմպետենցիաներով ՌԻՕ կազմ:

2019 թ. դեկտեմբերին հաստատել են ՌԻՕ և վարչական կազմերի որոշ (ֆակուլտետի գործավար-օպերատոր, ամբիոնի լաբորատորիայի պատասխանատու, գրադարանի համակարգչային կաբինետի պատասխանատու, ֆակուլտետի համակարգչային լսարան-կաբինետի պատասխանատու, կրթության որակի ապահովման և ուսանողների կարիերայի աջակցման բաժնի որակի մասնագետ, կրթության որակի ապահովման և ուսանողների կարիերայի աջակցման բաժնի մասնագետ, ուսանողների կարիերայի աջակցման մասնագետ, կրթության որակի ապահովման և ուսանողների կարիերայի աջակցման բաժնի ղեկավար) հաստիքների պաշտոնների անձնագրեր:

ԳՊՀ-ում առկա է ամբիոնի վարիչի ընտրության կարգ, որը հաստատվել է դեռևս 2009 թ.-ին:

Համալսարանի ամբիոններում, պայմանավորված տարբեր ՄԿԾ-ների առկայությամբ, նշանակվել են կրթական ծրագրերի պատասխանատուներ: Փորձագիտական այցից պարզվեց, որ կրթական ծրագրի պատասխանատուից ակնկալում են անմիջապես տվյալ կրթական ծրագրերին առնչվող հարցերի շրջանակի (ՄԿԾ-ի փոփոխություններ, դասավանդման, գնահատման և ուսումնառության մեթոդներին վերաբերող հարցեր և այլն) կարգավորում: Սակայն նրանց պաշտոնների տեղակալման գործընթացը կարգավորող որևէ հստակ քաղաքականություն, մեխանիզմ կամ սահմանված ընթացակարգ առկա չէ:

5.2 ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

ՊԴ կազմին ներկայացվող պահանջները արտահայտվում են ԳՊՀ-ի ՊԴ կազմի ձևավորման և պաշտոնի տեղակալման կանոնակարգով: Ըստ այդ փաստաթղթի սահմանվում են պրոֆեսորի, դոցենտի, ասիստենտի և դասախոսի գործառույթների հիմնական շրջանակները: Բուհում առկա չեն հստակ սահմանված ծանրաբեռնվածության ձևավորման նորմեր և հստակ սահմանված չեն ըստ առանձին կրթական ծրագրերի դասավանդողների մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներ: Ամբիոնում առկա ժամերը բաշխելիս ամբիոնների վարիչները հիմնականում առաջնորդվում են վերոնշյալ կանոնակարգով, ինչպես նաև նկատի են առնում հիմնային կրթության ոլորտը, մասնագիտական և հետազոտական գործունեության ոլորտները և դասավանդման փորձը:

Վերջին տարիներին կարևորում են գործնական ժամերի իրականացման համար գործնական փորձառությամբ աշխատողների, գործատուների ներգրավումը՝ նրանց փորձը դասավանդման գործընթացում ներդնելու համար: Տարբեր բուհերի առաջատար մասնագետների ներգրավման ժամանակ առաջնորդվում են նեղ մասնագիտական կարողություններով և դասավանդման փորձով: Միաժամանակ փաստաթղթերի

ուսումնասիրման արդյունքում պարզ դարձավ, որ կան դասախոսներ, ովքեր դասավանդում են նեղ մասնագիտական բավական թվով առարկաներ (7 և ավելի):

Միաժամանակ փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ այլ բուհերից ներգրավված դասախոսները տեղյակ չեն և ներգրավված չեն ԳՊՀ-ում տեղի ունեցող որակի ապահովման, կրթական ծրագրերի մշակման, բարելավման և այլ գործընթացներում:

5.3 ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

2019 թ. հաստատվել է ԳՊՀ-ի դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կանոնակարգը, որը կանոնակարգում է ՊԴ կազմի դասավանդման որակի և արդյունավետության գնահատման հարցումների անցկացման և արդյունքների կիրառման գործընթացները: Ըստ ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության բուհը կարևորում է այդ հարցումների արդյունքների քննարկումը և դրանց հիմքով տեղի ունեցող փոխոխություններն ու առաջարկները՝ մասնավորաբար հեռակա ուսանողների շրջանում հարցումների անցկացման անհրաժեշտության խնդիրը բուհը համարում է այդ քննարկումների կարևոր արդյունք, որի հետ կապված նաև խորհրդատվություն է տրվել նախորդ հավատարմագրման գործընթացում:

Ենթադրվում է, որ այդ հարցումների արդյունքները պետք է կիրառվեն մրցույթների կազմակերպման ժամանակ, սակայն փորձագիտական այցի ժամանակ պարզվեց, որ դեռևս մրցույթներ չեն անցկացվել:

Համալսարանում ամբիոնների վարիչներն անցկացնում են դասալսումներ ըստ նախապես կազմված ժամանակացույցի:

Ըստ ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության բուհը վերոնշյալ երկու մեխանիզմներն է դիտում որպես ՊԴ կազմի գնահատման գործող մոտեցումներ:

Համալսարանում ներդրվել է ԳՊՀ-ի ՊԴ կազմի վերապատրաստման և որակավորման բարձրացման ծրագիր, որը սակայն դեռևս չի տարել գնահատումների և դրանցով պայմանավորված բարելավումների:

Միաժամանակ, այցի ժամանակ հաստատվեց, որ ուսանողները հիմնականում գոհ են դասախոսներից և համարում են համալսարանի ուժեղ կողմը:

5.4 Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում, բացահայտված կարիքներին համապատասխան, ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

ԳՊՀ-ն իր ռազմավարական ծրագրում կարևորել է ՊԴ կազմի մասնագիտական որակների բարձրացումը: Այս առումով ներդրել է վերջինս խրախուսող մեխանիզմ ըստ 2018 թ. հաստատված ՊԴ կազմի վերապատրաստման և որակավորման բարձրացման ծրագիր փաստաթղթի պահանջների:

2018 թվականից ԳՊՀ-ում կազմակերպվել են դասընթացներ անգլերենի լեզվաիմացության զարգացման ուղղությամբ, որին մասնակցել են նաև որոշ դասախոսներ, նրանցից ոմանք սկսել են լեզվաիմացության նախնական մակարդակից:

Առանձին դեպքերում դրանք նպաստ են բերել և օգնել են դասախոսներին նաև առաջավոր փորձի ուսումնասիրման առումով:

ԳՊՀ-ի կենսաբանության և քիմիայի ամբիոնի աշխատակիցների համար 2018-2019 ուստարում ԳՊՀ-ում կազմակերպվել են մասնագիտական վերապատրաստման դասընթացներ՝ «Կենսահակաօքսիդներ» և «Կենսաֆիզիկական քիմիա» թեմաներով, դասընթացների ինը մասնակիցներ ստացել են համապատասխան կրեդիտներ:

Համավարակի պայմաններում ուսուցումը հեռավար կազմակերպելու պայմաններում ԳՊՀ-ում վերապատրաստումներ են անցկացվել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հմտությունների զարգացմանն ուղղված:

2018 թ. հաստատվել է ԳՊՀ-ի աշխատողների գիտահետազոտական, ուսումնամեթոդական և կազմակերպական աշխատանքների խրախուսման կարգը, որը նպատակ ունի խրախուսելու ԳՊՀ-ի աշխատակիցների գիտահետազոտական, ուսումնամեթոդական և կազմակերպական որոշ տեսակի աշխատանքները:

ԳՊՀ-ում առկա չէ ՊԴ կազմի կարիքների բացահայտման և դրանց արդյունքում կատարելագործմանը միտված աշխատանքների իրականացման հստակ մեխանիզմներ, ինչպես նաև կազմակերպված որոշ միջոցառումներից հետո դրանք գնահատելու մեխանիզմներ:

Ըստ ԳՊՀ-ի ինքնավերլուծության միջազգային փորձի թերի ուսումնասիրությունն ու ՊԴ կազմի վերապատրաստումների անբավարարությունը բուհի թույլ կողմերից է:

5.5 ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

ՊԴ կազմի շուրջ 75%-ը հիմնական աշխատակիցներ են, մնացածը՝ համատեղողներ: Համալսարանը չի իրականացնում ՊԴ կազմի տարիքային բաշխվածության վերլուծություններ՝ ըստ ամբիոնների:

ՊԴ կազմի կայունության ապահովման կարևոր քաղաքականություն է համարվում աշխատավարձի բաձրացման քաղաքականությունը, ըստ այդմ՝ 2018 թ.-ին աշխատավարձը բարձրացվել է 11%-ով: Բուհը նախատեսել էր աշխատավարձները բարձրացնել նաև 2020 թվականին, սակայն, արտակարգ և ռազմական իրավիճակով պայմանավորված, նպատակին հասնել չի հաջողվել:

Բուհը կարևորում է նաև պարգևավճարների մեխանիզմը: Վերջին երեք տարիներին ԳՊՀ-ի աշխատակազմին յուրաքանչյուր տարվա վերջում տրվել է պարգևավճար (վերջին երկու տարում՝ մեկ ամսվա աշխատավարձի չափով): Որոշ դասավանդողների պարգևավճար է տրամադրվել նաև այլ պարագաներում, սակայն փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ դեռևս առկա չեն այլ պարգևավճարների տրման համար սահմանված չափանիշներ, որոնց իրազեկ լինեին նաև դասավանդողները:

Ամբիոններում տարբեր տարիների մագիստրատուրայում աչքի ընկած ուսանողների նկատմամբ ուշադրություն են դրսևորել՝ դասախոսական կազմի սերնդափոխությունն ապահովելու տեսանկյունից: Այժմ բուհում կան դասախոսներ, ովքեր եղել են բուհի ուսանողներ, նաև նրանցից ոմանք այլ բուհերում շարունակել են

իրենց կրթությունը հետազոտողի կրթական ծրագրով՝ պաշտպանելով թեկնածուական ատենախոսություն:

2018 թվականից գործածության մեջ է դրվել ԳՊՀ-ի աշխատողների գիտահետազոտական, ուսումնամեթոդական և կազմակերպական աշխատանքների խրախուսման կարգը՝ գիտահետազոտական և գիտամեթոդական գործունեության զարգացումը խթանելու նպատակով: Սակայն փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ դեռևս սակավաթիվ դասախոսներ էին ներկայացվելու ամբիոններից՝ ըստ այս կարգի խրախուսման համար, և գործընթացը դեռևս համակարգված բնույթ չի կրում:

Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ վերջին տարիներին ՄԿԾ-ների իրականացումն ապահովելու համար տարբեր բուհերից առաջատար մասնագետների ներգրավումը ևս կարևոր մեխանիզմ է համապատասխան ՊԴ կազմով ապահովվածությունը երաշխավորելու տեսանկյունից:

5.6 ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

Համալսարանում ՊԴ կազմի մասնագիտական առաջընթացի մեխանիզմները սահմանվում են ԳՊՀ-ի ՊԴ կազմի ձևավորման և պաշտոնի տեղակալման կանոնակարգով: Վերջինիս մեջ սահմանվում են դասախոսի, ասիստենտի, դոցենտի, պրոֆեսորի տարակարգերը և այդ պաշտոնները տեղակալելու համար ներկայացվող պահանջները: Սակայն վերոնշյալ պաշտոնների տեղակալումը դեռևս իրականացվել է միայն ռեկտորի նշանակմամբ, առանց մրցույթի անցկացման:

Համալսարանում մենթորության հստակ քաղաքականություն առկա չէ, սակայն փորձագիտական այցի ժամանակ պարզվեց, որ կան դեպքեր, երբ փորձառու դասախոսները օգնում և աջակցում են երիտասարդ սկսնակ դասախոսներին՝ հիմնվելով իրենց փորձառության վրա:

Փորձագիտական այցից պարզվեց, որ ներգրավված առաջատար մասնագետների հանգամանքը դիտվում է նաև որպես տեղի մասնագետների շահադրդման միջոց, որը կնպաստի մրցակցության ձևավորմանը:

Բացի այդ, որպես առաջընթացի մեխանիզմ է դիտվում նաև այն, որ բուհի ղեկավարությունը բարձր պատասխանատվություն դրսևորած աշխատակիցներին ներգրավում է տարբեր միջազգային ծրագրերում կամ առաջադրում վարչական պաշտոններում: Սակայն այս գործընթացը ինստիտուցիոնալացնող հստակ մեխանիզմներ առկա չեն, ինչպես նաև սահմանված չեն չափանիշներ:

5.7 ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար:

ԳՊՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումներն ունեն կանոնակարգեր, որտեղ բերված է գործառույթների հիմնական շրջանակը: Ինչպես արդեն նշվել է, վարչական և ՈւՕ կազմերի միայն որոշ հաստիքների համար են առկա պաշտոնների նկարագրեր: Կառուցվածքային փոփոխության արդյունքում որոշ նոր ստորաբաժանումներ (Գիտական կենտրոն, Տնտեսական գործունեության կազմակերպման բաժին) են ստեղծել՝ միտված

ռազմավարական ծրագրի իրականացմանը: Սակայն ռազմավարական երկարաժամկետ և միջնաժամկետ պլանները չեն պարունակում պատասխանատուների բաշխում:

Համալսարանը չունի հստակ մեխանիզմներ վարչական և ՈւՕ կազմերի գործունեության գնահատման համար, ինչպես նաև այդ գնահատման հիման վրա խրախուսման մեխանիզմներ առկա չեն:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ վարչական ստորաբաժանումները հիմնականում մարդկային ռեսուրսների կարիք չեն զգում, սակայն առանձին դեպքերում նման անհրաժեշտություն նկատելի է, մասնավորաբար՝ Արտաքին կապերի և համագործակցության բաժնում, Հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժնում համապատասխան մասնագետով համալրելու կարիք են տեսնում, քանի որ այս պարագայում տուժում էին որոշ գործընթացներ: Կան ամբիոններ, որտեղ լաբորանտի/ների անհրաժեշտություն է զգացվում:

Համալսարանը խիստ անհրաժեշտություն է տեսնում զարգացնելու ՈւՕ կազմի կարողությունները, այդ նպատակով է 2020 թ.-ին մշակել ՈւՕ կազմի վերապատրաստման և ատեստավորման կարգ, ինչով նախատեսվող գործընթացները դեռևս իրականացվելու են:

Կրթական ծագրերի պատասխանատուների գործառութային շրջանակը հստակեցված և կանոնակարգված չէ, միաժամանակ առկա չէ հաշվետվողականության մեխանիզմ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ բուհը կանոնակագրել է դասախոսական կազմի ընտրության և ընդունելության մեխանիզմները: Համալսարանում առկա է ՊԴ կազմի պաշտոնների տեղակալման քաղաքականություն և գործընթացը կարգավորող փաստաթղթային հենք, սակայն փորձագիտական խումբը կարևորում է, որ իրականացվի նաև ՊԴ կազմի մրցութային կարգով պաշտոնների տեղակալման գործընթացը, ինչը կապահովի գործընթացի առավել թափանցիկություն և հնարավոր մասնագետների ներգրավում, ինչպես նաև հիմնական դասախոսական կազմի առավել կայուն լինելու երաշխիք կլինի:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ համալսարանը համավարակի պայմաններում ներդրված ուսումնառության հեռավար կազմակերպման հանգամանքը կիրառել է որպես հնարավորություն և ներգրավել տարբեր բուհերի (տարբեր մարզերի) առաջատար մասնագետների, սակայն միաժամանակ գտնում է, որ գործընթացը կանոնակարգելու կարիք ունի, որպեսզի ներգրավումը պայմանավորված չլինի անձնական ծանոթության շրջանակներով, այլ բխեցվի կրթական ծրագրերի իրականացման համար մարդկային ռեսուրսների պահանջով և որպես մեխանիզմ գործի նաև հետագայում: Միաժամանակ այս տեսանկյունից բուհը կարող է ըստ հնարավորության ընդլայնել համագործակցության աշխարհագրությունը՝ դուրս գալով ՀՀ սահմաններից:

Փորձագիտական խումբը դրական է համարում գործնական փորձառությամբ դասավանդողների, գործատուների ներգրավումը ուսումնական գործընթացում, քանի որ դա կարող է նպաստել ուսանողների գործնական կարողությունների ձևավորմանը և դրանց՝ աշխատաշուկային համապատասխանեցմանը: Միաժամանակ փորձագիտական

խումբը կարևորում է, որ բուհը գործատուների կարողությունների և նյութական ռեսուրսների հնարավորությունները կարողանա կիրառել հիմնական ՊԴ կազմի կատարելագործման համար:

Դրական է այն, որ բուհը կարևորում է մրցունակ դասախոսական կազմ ունենալը և այդ նպատակով մշակել է ՊԴ կազմի վերապատրաստման և որակավորման բարձրացման ծրագիր, սակայն փորձագիտական խումբը նշում է, որ նմանատիպ մեխանիզմների ներդրման ժամանակ օգտակար է հենվել նախնական գնահատումների և հետազոտությունների վրա, որպեսզի դրանց ներդրումը չհանգեցնի չնախատեսված իրավիճակների և ռիսկերի:

ՈւՕ կազմի պաշտոնների տեղակալման գործընթացը կանոնակարգվում է համապատասխան ընթացակարգով, որոշ հաստիքների համար առկա են նաև պաշտոնների անձնագրեր, բացի այդ բուհը կարևորում է նաև նրանց կոմպետենցիաների զարգացումը՝ ներդնելով ատեստավորման մեխանիզմ: Սակայն կոմպետենիցաների զարգացմանը միտված վերապատրաստումների հնարավորությունները սահմանափակվել են անգլերենի դասընթացներով:

Համալսարանում ներդրվել է կրթական ծրագրերի պատասխանատուների ինստիտուտ, սակայն նրանց պաշտոնների տեղակալման գործընթացի չկարգավորվածությունը, ինչպես նաև գործառույթների ու հաշվետվողականության բացակայությունը թույլ չի տալիս հասկանալ ներդրված մեխանիզմից ակնկալիքները և գնահատել արդյունավետությունը:

Ըստ ՄԿԾ-ների դասավանդողների մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ առկա չեն, չնայած դրան բուհում կա որոշակի քաղաքականություն, որի արդյունքում համալսարանը կարողանում է ձևավորել համապատասխան մասնագիտական որակներով ՊԴ կազմ, սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ փորձի հիման վրա ըստ կրթական ծրագրերի ՊԴ կազմին ներկայացվող պահանջների հստակեցումը կարող է ապահովել գործընթացի թափանցիկություն և երաշխավորել համապատասխան դասախոսական կազմի առկայությունը՝ անկախ ղեկավարներից և նրանց մոտեցումներից:

Համալսարանն ունի ՊԴ կազմի գնահատման որոշ մեխանիզմներ՝ հարցումներ, դասալսումներ, որոնց ազդեցությունը բարելավումների առումով դեռևս նկատելի չէ: Ներդրված ԳՊՀ-ի ՊԴ կազմի վերապատրաստման և որակավորման բարձրացման ծրագրով էլ դեռևս գնահատում չի իրականացվել: Այս գործընթացի ոչ լիարժեք համակարգվածությունը կարող է խոչընդոտել ՊԴ կազմի համընթաց կատարելագործման ապահովումը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ բուհը կարևորում է ՊԴ կազմի մասնագիտական և մեթոդական որակների բարձրացումը և դրան միտված քաղաքականություն է մշակել, բացի այդ որոշ միջոցառումներ է կազմակերպում այս ուղղությամբ: Սակայն կարևորում է, որ այդ միջոցառումների կազմակերպումը կրի համակագված և նպատակային բնույթ, բխի ռազմավարական նպատակներից և հենված լինի կարիքների վրա, ինչպես նաև հանգեցնի ուսումնական գործընթացի աստիճանական զարգացման: Ուստի կարևոր է նաև, որ համալսարանն ունենա կազմակերպված միջոցառումների արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Բացի այդ, ՊԴ կազմի փորձի փոխանակման տեսանկյունից կարող է նպաստավոր լինել հրավիրյալ դասախոսների և գործատու դասավանդողների բուհի գործընթացներին լիարժեք ներգրավման պարագայում:

Համալսարանի կողմից գործածվող բազմազան մեխանիզմների համադրումը հիմնականում երաշխավորում է համապատասխան ՊԴ կազմով ապահովվածության կայունությունը, դրա հետ մեկտեղ փորձագիտական խումբը կարևորում է, որ բուհում պարգևատրման, խրախուսման գործընթացները լինեն թափանցիկ, հենված լինեն շահակիցներին նախապես հայտնի չափանիշների վրա, որոնք իրենց հերթին բխեն ՌԾ-ի առաջնահերթություններից: Փորձագիտական խումբը գտնում է նաև, որ ամբիոններում ՊԴ կազմի տարիքային բաշխվածության վերլուծությունների և սերնդափոխության ապահովման երաշխավորված մոտեցումների կարիք կա:

ԳՊՀ-ում ՊԴ կազմի համար առկա են տարբեր տարակարգեր, որոնց համար սահմանված են տարբեր աշխատավարձեր, սա ՊԴ կազմի առաջընթացի ապահովման կարևոր մեխանիզմ է: Փորձագիտական խումբը դրական է համարում նաև այն, որ բուհի ղեկավարությունը իր պատասխանատու աշխատակիցների առաջընթացն ապահովում է նաև տարբեր վարչական պաշտոններում և միջազգային ծրագրերում ներգրավելով, սակայն կրկին կարևորում ենք այդ գործընթացների ինստիտուցիոնալացված լինելը, որպեսզի գործընթացները չվտանգվեն անձերով պայմանավորված: Նաև համալսարանի համար հետագա որոշումների կայացման առումով օգտակար կլինեին գործող մեխանիզմների արդյունավետության վերլուծությունների իրականացումը:

Կարևոր է նաև, որ ավագ սերունդը պատրաստակամ է աջակցելու և փորձը փոխանցելու հարցում, սակայն գործընթացը կրկին համընդհանուր համակարգման անհրաժեշտություն ունի:

Համալսարանը հիմնականում ունի անհրաժեշտ վարչական և ՈւՕ կազմ, սակայն կարևոր է ունենալ նաև համապատասխան գնահատման մեխանիզմներ՝ վեր հանելու կարիքները (այդ թվում՝ մարդկային ռեսուրսների) և այդ գնահատումներով պայմանավորեցնել համալրումներն ու օպտիմալացումները:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ բուհում գործում են պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ձևավորման մեխանիզմներ, առկա է ըստ ՄԿԾ-ների ՊԴ կազմին ներայացվող պահանջների համապատասխան քաղաքականություն, առկա են դասախոսական կազմի գործունեության գնահատման որոշ մեխանիզմներ, ներդրված են փորձի փոխանակման հնարավորություններ, ինչպես նաև առկա են դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման և կատարելագործման որոշ մեխանիզմներ, հիմնականում ապահովված է համապատասխան վարչական և ՈւՕ կազմերով, ներգրավում է պրակտիկ փորձառությամբ մասնագետների՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԳՊՀ-ն բավարարում է չափանիշ 5-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Գորիսի պետական համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատում է ***բավարար:***

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

6.1 ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

Ըստ ԳՊՀ-ի 2019-2023 թթ. ռազմավարական զարգացման ծրագրի «Հետազոտություն և զարգացում» բաժնի՝ նախատեսել են իրականացնել, հետևյալ խնդիրները. ա) հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով հետազոտությունների իրականացում և զարգացում, բ) գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար նյութատեխնիկական և ֆինանսական միջոցների ապահովում, գ) հետազոտական աշխատանքների միջազգայնացման խթանում, դ) հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի արդյունավետ փոխկապակցվածության ապահովում: Այնուհետև, ըստ 2019-2023 թթ. ՌԾ-ի առանցքային գործողությունների իրականացման ժամանակացույցի, նախատեսել են 5 գործողություն, որոնք սակայն հստակ և չափելի չեն (մասնավորաբար՝ հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի արդյունավետ փոխկապակցվածության ապահովում, գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար նյութատեխնիկական և ֆինանսական միջոցների ապահովում):

Համալսարանը մշակել և 26.11.2019 թ. ԳԽ նիստով հաստատել է «Հետազոտության զարգացման 2019-2033 թթ. գերակայություններ» փաստաթուղթը, որտեղ որպես գերակայություններ առանձնացնում է հայագիտական և բնագիտական հետազոտությունները՝ նշելով, որ դրանց սահմանման հիմքում ընկած են ԳՊՀ-ում հետազոտության առկա վիճակի, գիտահետազոտական ներուժի և միջազգային փորձի վերլուծությունը, սակայն նման վերլուծություններ առկա չեն: Նույն փաստաթղթով անդրադարձ է կատարված ակնկալվող արդյունքներին, որոնք սակայն խնդիրների տեսք ունեն, չափելի չեն և հստակ պատկերացում չեն տալիս բուհի հետազոտության ոլորտում հավակնությունների և հետազոտության ոլորտում բուհի պլանավորած առաջընթացի մասին:

Միաժամանակ հարկ է նշել, որ բուհում 2010 թվականից սկսած «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» բյուջետային ֆինանսավորմամբ իրականացվում է «Սյունիքի նյութական և հոգևոր (ոչ նյութական) ժառանգությունը» թեմայով դրամաշնորհային գիտական ծրագիրը հայագիտական հետազոտությունների ուղղությամբ:

25.12.2019 թ.- ԳԽ նիստով հաստատվել է ԳՊՀ-ի Գիտական կենտրոնի 2020-2023 թթ. ռազմավարական զարգացման գործողությունների միջնաժամկետ պլանը, ըստ որի սահմանվում է կենտրոնի տեսլականը. «2023 թ. համալսարանը հիմնարար և կիրառական գիտական հետազոտությունների, մշակումների և ստարտափերի մակարդակով մրցունակ համալսարան ստեղծելն է, որը խթանում է գերազանցությունը հիմնարար և կիրառական գիտական հետազոտություններում և նպաստում տարածաշրջանի տնտեսության մրցունակության բարձրացմանը, անվտանգության ապահովմանը և սոցիալական ու մշակութային առաջընթաց զարգացմանը»: Սակայն

փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ այս տեսլականը հասանելի դարձնող քայլեր և արդյունքներ դեռևս առկա չեն։

6.2 ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

Համալսարանում դեռևս հետազոտական ոլորտի երկարաժամկետ ռազմավարական պլանավորում չի իրականացվում, որը ըստ ԳՊՀ-ի ինքնավերլուծության, պայմանավորված է եղել համակարգող օղակի բացակայությամբ։ Միայն համալսարանի 2019-2023 թթ. զարգացման ռազմավարական ծրագիրն ու ՌԾ-ի առանցքային գործողությունների իրականացման ժամանակացույցն են պարունակում անդրադարձ համալսարանում հետազոտության ոլորտում հավակնություններին, սակայն այդ փաստաթղթերը հստակ ծրագրերի չեն վերածվել, ձևակերպումները ընդհանրական են, առկա չեն գործողությունների իրականացման պատասխանատուներ, արդյունքների ցուցիչներ, հատկացվող բյուջե։

2019 թ.- Գիտական կենտրոնի ձևավորումից հետո բուհի կողմից մշակվել և հաստատվել է «Գիտական կենտրոնի 2020-2023 թթ. ռազմավարական զարգացման գործողությունների միջնաժամկետ պլանը», որը պարունակում է գործողությունների իրականացման համար նշված ժամկետներ, պատասխանատուներ, ռեսուրսներ, որոնք սակայն որոշակիացված չեն, արդյունավետության ակնկալվող գնահատման ցուցիչներ, որոնք սակայն չափելի չեն։ Չնայած փաստաթուղթը հաստատվել է 2019 թ. դեկտեմբերի 25-ին և Գիտական կենտրոնի միջնաժամկետ ռազմավարական ծրագիրն է, սակայն պլանը պարունակում է գործողություններ նաև 2019 թ.հունվարից մինչև դեկտեմբեր ժամանակահատվածի համար, այդ թվում՝ կենտրոնի ստեղծումը։ Փորձագիտական այցից պարզվեց, որ դեռևս իրականացված են միայն այն գործողությունները, որոնք նախորդել են միջնաժամկետ պլանի հաստատմանը և դրանք արտահայտվում են որոշակի փաստաթղթային հենքի ստեղծմամբ, և դեռևս առկա չեն ՌԾ-ով սահմանված գիտահետազոտական ոլորտի նպատակների ու խնդիրների իրականացումը հաստատող տեսանելի արդյունքներ։

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» բյուջետային ֆինանսավորմամբ իրականացվող «Սյունիքի նյութական և հոգևոր (ոչ նյութական) ժառանգությունը» թեմայով դրամաշնորհային գիտական ծրագրի իրականացման համար ՀՀ ԿԳՄՄՆ Գիտության կոմիտեի կողմից ներկայացվող պարտադիր պահանջին համապատասխան կազմվում են միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրեր, և ըստ կարճաժամկետ պլանի ներկայացվում է հաշվետվություն՝ ԳԽ և Գիտության կոմիտե։

ԳՊՀ-ի ֆակուլտետների և ամբիոնների 2020-2023 թթ. ռազմավարական զարգացման գործողությունների միջնաժամկետ պլաններում ևս առկա են գործողություններ՝ ուղղված գիտահետազոտական գործընթացներին։ Ֆակուլտետների պլաններով նախատեսված գործողություններին համապատասխան արդյունավետության ակնկալվող գնահատման ցուցիչներում կան առավել չափելիները (մասնավորաբար՝ հետազոտական ծրագրերում դասախոսական կազմի ներգրավվածության աճ նախորդ

տարվա համեմատ 10 %-ով, հետազոտական ծրագրերում ուսանողների ներգրավվածության աճ նախորդ տարվա համեմատ 5 %-ով, ՈւԳԸ գիտաժողովներում մասնակիցների թվի աճ և այլն): Սակայն կրկին դեռևս նկատելի չեն շոշափելի արդյունքներ, և առկա չեն այս ուղղությամբ հաշվետվություններ: Ամբիոնների և ֆակուլտետների տարեկան աշխատանքային պլաններում առկա են գիտական գործունեության ուղղությամբ գործընթացներ. մասնավորաբար՝ գիտական սեմինարների կազմակերպում, ՈւԳԸ նստաշրջանի կազմակերպում, գիտական հոդվածների ժողովածուների հրատարակում:

6.3 ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

Գիտահետազոտական գործունեությունը համակարգելու, հետազոտական հնարավորությունները կենտրոնացնելու նպատակով նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրով պլանավորվել է ունենալ գիտության հարցերով պատասխանատու կամ համակարգող և ԳՊՀ-ի գիտական խորհրդի 2019 թվականի հոկտեմբերի 11-ի նիստի N2 որոշմամբ ստեղծվել է ԳՊՀ-ի գիտական կենտրոն: 2019 թվականի դեկտեմբերի 26-ին հաստատվել է կենտրոնի կանոնակարգը, ըստ որի կենտրոնի նպատակն է կազմակերպել, համակարգել և օժանդակել ԳՊՀ-ի ստորաբաժանումների և գիտական խմբերի կողմից իրականացվող գիտահետազոտական գործունեությունը: Ըստ նույն փաստաթղթի՝ կենտրոնը պետք է մասնավորաբար համագործակցության շրջանակներ հաստատի հետազոտական ոլորտում, իրականացնի ֆինանսական պլանավորում, սակայն փորձագիտական այցից պարզվեց, որ այս գործընթացները դեռևս տեղի չեն ունեցել: Կենտրոնը ներկայացրել է 2019-2020 ուստարվա գործունեության հաշվետվություն, որը, ըստ ձևաչափի, հենված է նաև համագործակցող բուհերի փորձի վրա: Արդյունքները գլխավորապես արտահայտվում են փաստաթղթային հենքի ստեղծմամբ և տվյալների հենքի ստեղծման գործընթացի սկզբով: Հաշվետվության մեջ ներկայացվել են որոշ ցուցանիշներ (մասնավորաբար՝ գիտական աշխատանքների թիվ, գիտական աշխատանքների թիվ՝ ըստ վարկանիշավորման սանդղակի, գիտական աշխատանկներ չունեցող դասավանդողներ), սակայն առկա չէ համեմատական վերլուծություն և չի երևում վերջիններիս փոփոխելիությունը՝ ըստ տարբեր տարիների:

2017 թ. հոկտեմբերի 19-20-ը համալսարանում կազմակերպվել է «Սյունիքը կրթության և մշակույթի օջախ» խորագրով հանրապետական գիտաժողով՝ նվիրված Գորիսի պետական համալսարանի հիմնադրման 50-ամյակին: Գիտաժողովի նյութերի ժողովածուն լույս է տեսել 2019 թ.:

2018 թ. դեկտեմբերի 27-ին հաստատված «ԳՊՀ-ի աշխատողների գիտահետազոտական, ուսումնամեթոդական և կազմակերպական աշխատանքների խրախուսման կարգ»-ով սահմանվում են ԳՊՀ-ի աշխատողների գիտահետազոտական, ուսումնամեթոդական և կազմակերպական որոշ տեսակի աշխատանքների խրախուսման չափանիշները և պայմանները: Սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գործընթացը դեռևս ներդրման փուլում է, համակարգային, համընդհանուր բնույթ չի

կրում, և դեռևս չի երևում ազդեցությունը ցուցանիշների փոփոխման կամ գործընթացների բարելավման առումով:

2018 թ. հունվարի 19-ին հաստատվել է Գորիսի պետական համալսարանի ՊԴ կազմի վերապատրաստման և որակավորման բարձրացման ծրագիր (կառուցվածք և բովանդակություն) փաստաթուղթը, որի հետազոտական-մեթոդական կառուցամասում դասախոսի կրեդիտային պարտադիր բեռնվածության մեջ առկա են հրատարակումներ և գիտաժողովում զեկուցումներ բաղադրիչները: Սակայն փաստաթուղթը դեռևս չի կիրառվել և, ինչպես պարզվեց փորձագիտական այցից, փաստաթուղթը ներդնելիս նախնական հետազոտություն չի իրականացվել՝ գնահատելու եղած ռեսուրսները, հնարավորությունները և վերջինիս ներդրմամբ առաջացող վտանգները:

Ինչպես հանրապետական, այնպես էլ միջազգային ամսագրերում և գիտաժողովի ժողովածուներում տպագրված գիտահետազոտական աշխատանքների ցուցանիշները շատ ցածր են, չեն աճել և նույնիսկ նվազել են: Միաժամանակ գիտահետազոտական արդյունքներում ներգրավված ՊԴ կազմի ցուցանիշը կազմում է շուրջ 40%:

Գիտության ծախսերը կազմում են բյուջեի շուրջ 0.5%-ը: Առկա չեն հետազոտական աշխատանքի առևտրայնացման օրինակներ և դրանցով պայմանավորված եկամուտներ, չնայած որ ըստ Հետազոտության զարգացման 2019-2023 թթ. գերակայությունները փաստաթղթի նման արդյունք ակնկալել են:

ԳՊՀ-ն չունի համատեղ գիտահետազոտական ծրագրեր, դրամաշնորհներ հայաստանյան բուհերի և գիտահետազոտական կազմակերպությունների հետ, սակայն որոշ բուհերի և ինստիտուտների հետ համագործակցության շրջանակում գիտահետազոտական աշխատանքների գրախոսման գործընթաց են կազմակերպում, մասնակցում կազմակերպվող գիտաժողովներին:

Գիտական սեմինարների կազմակերպումը ամբիոններում համակարգված բնույթ չի կրում, առկա չեն ժամանակացույցեր, պլաններ և հաշվետվություններ:

ՊԴ կազմը լրացնում է դասախոսի տարեկան աշխատանքային ծրագիրը յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում: Այն ներառում է գիտահետազոտական գործունեություն մաս, որտեղ ներկայացնում է այդ ուղղությամբ իր պլանավորումը:

6.4 ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

Ըստ ինքնավերլուծության համալսարանը դեռևս չունի հետազոտական գործունեության միջազգայնացման քաղաքականություն:

ԳՊՀ-ի 2019-2023 թթ.-ի ռազմավարական զարգացման ծրագրում սահմանված է «հետազոտական աշխատանքների միջազգայնացման խթանում» խնդիրը: Ըստ «ԳՊՀ-ի աշխատողների գիտահետազոտական, ուսումնամեթոդական և կազմակերպական աշխատանքների խրախուսման կարգ»-ի միջազգային գիտական ամսագրերում տպագրված հոդվածների համար սահմանված է համապատասխան միավոր, սակայն, ինչպես նշված է զեկույցում, այս կարգի ներդրման ազդեցությունը դեռևս նկատելի չէ:

ԳՊՀ-ն որոշ քայլեր է ձեռնարկում միջազգային գիտաժողովներ կազմակերպելու, ԱՊՀ և օտարերկրյա ամսագրերում հրատարակումներ իրականացնելու համար: Մասնավորապես, 2018 թ. համալսարանը հանդիսացել է «Դեֆորմացվող միջավայրերի փոխազդեցության դինամիկայի պրոբլեմները» խորագրով 9-րդ միջազգային գիտաժողովի

համակազմակերպիչ: 2015-2019 թթ. համալսարանի դասախոսների կողմից ԱՊՀ և օտարերկրյա ամսագրերում հրատարկված հոդվածները 16-ն են, ընդ որում օտարերկյա ազդեցության գործակիցներով (SCOPUS, РИНЦ) ամսագրերում՝ 11 հոդված:

Առկա չեն միջազգային բուհերի հետազոտողների հետ համատեղ գիտական հրատարակություններ: ԳՊՀ-ն չունի համատեղ գիտահետազոտական ծրագրեր, դրամաշնորհներ արտասահմանյան բուհերի և գիտահետազոտական կազմակերպությունների հետ:

Համալսարանը հետազոտական գործունեության միջազգայնացման խոչընդոտ է համարում ՊԴ կազմի օտար լեզվի, մասնավորապես, միջազգային գիտական լեզվի՝ անգլերենի, տիրապետման ոչ բավարար մակարդակը, ուստի դասախոսների համար սկսել է կազմակերպել անգլերեն լեզվի ուսուցման վերապատրաստումներ: Սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դա չի հանգեցրել միջազգային ամսագրերում տպագրվող հոդվածների թվի ավելացման կամ ՊԴ կազմի այդ գորընթացում ներգրավվածության ընդլայնման:

6.5 ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

Որպես ԳՊՀ-ի ռազմավարական խնդիր առանձնացվում է հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի արդյունավետ փոխկապակցվածության ապահովումը, միաժամանակ նախատեսել են դրան ուղղված հետևյալ գործողությունները.

1. մագիստրոսական և բակալավրական ավարտական աշխատանքները դարձնել առավել արդիական ու գիտագործնական՝ թեմաները բխեցնելով տարածաշրջանի կարիքներից,

2. բուհում ներդնել հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ՝ ապահովելով հետազոտական գործունեության արդյունքների կիրառումն ուսումնական գործընթացում:

Գործողությունները ձևակերպված են ընդհանրական, հստակ չափելի չեն, միաժամանակ համալսարանը չի պլանավորել դրանց իրագործմանն ուղղված հստակ քայլեր:

ԳՊՀ-ի բակալավրիական և մագիստրոսական կրթական ծրագերը պարունակում են հետազոտական կառուցամաս, որում ներառված են նաև բոլոր պրակտիկաները, սակայն փորձագիտական այցի ժամանակ պարզվեց, որ առկա չեն դեպքեր, երբ պրակտիկայի ժամանակ ուսանողները հետազոտություն իրականացնեն և արդյունքներ ստանան՝ կիրառելով նաև գործատուների ռեսուրսները:

ԳՊՀ-ում 12.04.2019 թ. ներդրվել է «Մագիստրոսական թեզի կատարման և պաշտպանության կարգ», «Բակալավրի ավարտական աշխատանքի կատարման և պաշտպանության կարգ» փաստաթղթերը, որոնց համաձայն սահմանված են այդ աշխատանքներին ներկայացվող պահանջները: Սակայն փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ավարտական աշխատանքները հիմնականում տեսական նյութի ուսումնասիրություն և ներկայացում են, խիստ թույլ է արտահայտված վերջինիս հետազոտական կողմը: Մագիստրոսական

թեզերի պարագայում փորձում են առավել հետազոտական բնույթ հաղորդել, սակայն այս դեպքում էլ չի երևում հետազոտական աշխատանքների թեմաների և տարածաշրջանի կարիքների կապը, թույլ է արտահայտված հետազոտական, վերլուծական, կիրառական կողմը, այդ թվում նաև չի ուսումնասիրվում և կարևորվում ուսումնական գործընթացում արդյունքների կիրառումը, նորարության մակարդակը ցածր է:

Այս ամենի հետ մեկտեղ պետք է նշել, որ առանձին դեպքերում առկա է լավ փորձ. «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» բյուջետային ֆինանսավորմամբ իրականացվող «Սյունիքի նյութական և հոգևոր (ոչ նյութական) ժառանգությունը» թեմայով դրամաշնորհային գիտական ծրագրի արդյունքում 2017-2019 թթ. պաշտպանել են 9 բակալավրիական ավարտական աշխատանքներ և 11 մագիստրոսական թեզեր:

Համալսարանը գնահատման առանձին բաղադրիչով գնահատում է ուսանողների անհատական աշխատանքները, որոնք ըստ բուհի պարունակում են հետազոտական բաղադրիչ: Սակայն հստակ սահմանված չեն անհատական աշխատանքի գնահատման մեխանիզմները, ինչպես նաև պարտադիր չէ անհատական աշխատանքի կատարումը:

ԳՊՀ-ի դասախոսների կողմից տպագրվում են ուսումնամեթոդական ձեռնակներ, աշխատանքներ, որոնց վերաբերյալ վիճակագրական տվյալներ և դրանք հետագայում ուսումնական գոծընթացում կիրառման և վերջիններիս արդյունքների վերաբերյալ հետազոտություններ չի իրականացվում համալսարանում: Սակայն փորձագիտական այցի ժամանակ պարզվեց, որ նման նախադեպեր առկա են և որոշ դասախոսներ հավաստեցին, որ իրենց հետազոտության արդյունքները կիրառում են ուսումնական գործընթացում:

Ուսանողական գիտաժողովները հնարավորություն են ստեղծում մոտիվացնելու ուսանողներին հետազոտական աշխատանքներ կատարելու ուղղությամբ: ԳՊՀ-ում կազակերպվում են ուսանողական գիտաժողովներ, սակայն դրանք հստակ համակարգված և պարբերական բնույթ չեն կրում, միաժամանակ ուսանողների հետազոտական գործունեության համար խրախուսման մոտեցումներ չկան: ԳՊՀ-ի ուսանողները առանձին դեպքերում մասնակցում են նաև այլ բուհերի կողմից կազմակերպված ուսանողական գիտաժողովների:

Ուսումնական և հետազոտական գործընթացների փոխկապակցումից գոհունակության հարցումներից պարզվել է, որ դժգոհության ցուցանիշը բավականին բարձր է թե՛ ուսանողների, թե՛ դասախոսների շրջանում:

Համալսարանը հետազոտական լաբորատորիաների անհրաժեշտություն է տեսնում հետազոտությունների իրականացման համար, ինչը նաև հաստատվեց փորձագիտական այցի ժամանակ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ ԳՊՀ-ն կարևորում է համալսարանում գիտահետազոտական ուղղության զարգացումը, ունի այդ ուղղությամբ ձևավորված գերակայություններ և բավականին հավակնոտ նպատակներ: Սակայն գերակայությունների սահմանումը չի հանգեցրել այդ ուղղությամբ բուհի գործընթացների փոփոխության: Հայագիտության ուղղությամբ գիտահետազոտական աշխատանքներն իրականացվում են դեռևս 2010 թվականից «Գիտական և

գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» բյուջետային ֆինանսավորմամբ իրականացվում է «Սյունիքի նյութական և հոգևոր (ոչ նյութական) ժառանգությունը» թեմայով դրամաշնորհային գիտական ծրագրի շրջանակներում, որը շարունակվում է մինչև այժմ: Բնագիտության ուղղությամբ հետազոտությունների իրականացման համար համալսարանը համալիր քայլեր չի ձեռնարկել, որոշակի արդյունքները պայմանավորված են առանձին դասախոսների նախաձեռնությամբ իրականացվող հետազոտություններով:

Գիտական գործունեության գործընթացների պլանավորումն արտահայտվում է ռազմավարական միջնաժամկետ և կարճաժամկետ պլաններով: Սակայն, դեռևս առկա չեն ըստ այդ ծրագրերի հաշվետվություններ և փորձագիտական այցից էլ պարզ է դարձել, որ արդյունքները մեծապես արտահայտվում են փաստաթղթային հենքի ստեղծմամբ, փաստաթղթերում սահմանված նպատակների իրականացման համար համակարգված քայլեր դեռևս ձեռնարկված չեն, և չի երևում ստեղծված փաստաթղթերի ազդեցությունը արդյունքների և ձեռքբերումների վրա: Միաժամանակ չի երևում այդ պլաններով նախատեսված գործընթացների և բյուջեի պլանավորման կապը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ Գիտական կենտրոնի միջնաժամկետ զարգացման պլանով սահմանված հավակնոտ տեսլականի հասանելիությունը երաշխավորող քայլեր դեռևս առկա չեն, իրականացված գործընթացները գլխավորապես սահմանափակվում են փաստաթղթային հենքի ստեղծմամբ: Միաժամանակ այդ տեսլականին հասնելու համար բուհի կողմից նախանշված ուղին հստակ չէ: Այս առումով դեռևս չի երևում Գիտական կոնտրոնի՝ որպես ստեղծված ռեսուրսի ազդեցությունը գործընթացների վրա և հստակ դիրքավորումն ու դերակատարությունը գիտահետազոտական գործընթացների զարգացման առումով:

Փորձագիտական խումբը նշում է նաև, որ հստակ չէ համալսարանի երկարաժամկետ ՌԾ-ով նախատեսված հետազոտական գործընթացների նպատակների և Գիտական կենտրոնի զարգացման միջնաժամկետ պլանով նախատեսված տեսլականի միջև կապը, դրանց փոխկապակցումը: Միաժամանակ ՌԾ-ով սահմանված գիտահետազոտական ոլորտի նպատակների ու խնդիրների իրականացումը հաստատող տեսանելի արդյունքների դեռևս առկա չլինելը վտանգում է դրա նախատեսված ժամկետներում իրագործումը, առավել ևս որ դրանց պլանավորման ուղին էլ բավարար հստակ չէ և թույլ չի տալիս գնահատել և մշտադիտարկում իրականացնել:

Գիտական սեմինարների, գիտաժողովների կազմակերպումը փորձի փոխանակման և համագործակցության հնարավորություններ է ստեղծում ՊԴ կազմի համար, սակայն ԳՊՀ-ի կողմից կազմակերպված գիտաժողովները ՊԴ կազմի միայն նեղ շրջանակի համար է նման հնարավորություն ընձեռել՝ պայմանավորված դրանց նեղ ուղղվածությամբ: Գիտական սեմինարները ևս չեն նպաստել նոր համագործակցության, նոր հետազոտությունների իրականացման կամ գիտական միջավայրի զարգացման: Միաժամանակ այս միջոցառումները չեն հանգեցրել գիտահետազոտական գործունեություն ծավալող ՊԴ կազմի քանակի ավելացմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ Գիտական կենտրոնը ձեռնարկել է ստեղծել տվյալների համընդհանուր հենք և կատարել վերլուծություններ, սակայն այս գործընթացը կարևոր կլիներ նախքան գերակայությունների սահմանելն ու

քաղաքականության մշակելը, որպեսզի հնարավոր լիներ հենվել վերլուծության արդյունքների վրա:

Փորձագիտական խումբը դրական է համարում նաև, որ համալսարանում առկա է հետազոտությունների արդյունքների խրախուսումը կարգավորող որոշակի նորմատիվային հենք, դրան զուգահեռ մտահոգիչ է համարում, որ դա դեռևս համակարգված չի կիրառվել և ազդեցություն չի ունեցել տպագրված գիտական հոդվածների և այլ աշխատանքների ցուցանիշների բարելավման տեսանկյունից, միաժամանակ այդ ցուցանիշները չեն աճել, նույնիսկ նվազել են:

ԳՊՀ-ն դեռևս չի ընդլայնել համագործակցության շրջանակները գիտահետազոտական ոլորտում՝ ծառայեցնելու իր նպատակների իրագործմանը, առկա չեն համատեղ գիտահետազոտական ծրագրեր կամ համատեղ հետազոտություններ: Սակայն կարևոր է ավանդաբար միջազգային գիտաժողովի համակազմակեպումը ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտի հետ:

Դրական է այն հանգամանքը, որ համալսարանը գիտակցում է հետազոտությունների միջազգայնացման կարևորությունը (միջազգային գիտաժողովի կազմակերպմամբ, միջազգային ամսագրերում տպագրված գիտական հոդվածների խրախուսման մեխանիզմների ներդրմամբ), սակայն այս ուղղությամբ դեռևս չունի հստակ քաղաքականություն, առկա չեն առարկայական քայլեր և արդյունքներ:

Բուհն ունի հետազոտական և ուսումնական գործընթացի փոխկապակցվածությունն ապահովելու հավակնություններ: Այս տեսանկյունից կարևոր է բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերում հետազոտության համար նախատեսված կառուցամասերի առկայությունը: Սակայն ավարտական աշխատանքներում և մագիստրոսական թեզերում հետազոտական, կիրառական և վերլուծական բաղադրիչի թույլ լինելը փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում և նշում է, որ այս ուղղությամբ պետք է իրականացնել հստակ աշխատանքներ՝ ապահովելու ՌԾ-ով և կարգերով նախատեսված նպատակները: Միաժամանակ փորձագիտական խումբը դրական է համարում այս ուղղությամբ դրական փորձի առկայությունը, այդ թվում՝ դրամաշնորհային ծրագրի շրջանակում աշխատանքների իրականացումը, և նշում է, որ օգտակար կլինի այդ փորձի տարածումը: Փորձագիտական խումբը գտնում է նաև, որ պրակտիկաների շրջանակում հետազոտությունների իրականացումը կարևոր կարող է լինել հետազոտական ուղղության զարգացման համար, ինչը սակայն դեռևս առկա չէ:

ՈւԳԸ գործունեությունը կարևոր է ուսանողների գիտահետազոտական գործընթացներում ներգրավելը մոտիվացնելու տեսանկյունից, մինչդեռ համալսարանում այս մասով ձևավորված հստակ պարբերական գործընթացներ առկա չեն, իսկ խրախուսման մեխանիզմները՝ բացակայում են: Սակայն դրական է, որ ԳՊՀ-ի ուսանողները, առանձին դեպքերում, իրենց նախաձեռնությամբ մասնակցում են նաև այլ բուհերի կողմից կազմակերպված ուսանողական գիտաժողովների, բայցի այդ ընթացիկ ուստարում նախատեսել են կազմակերպել ուսանողական գիտաժողով:

Փորձագիտական խումբը նաև ՊԴ կազմին մոտիվացնելու անհրաժեշտություն է տեսնում՝ ուղղված նրանց կողմից ուսանողներին գիտահետազոտական գործընթացներում ներգրավելուն, ինչը նաև գործընթացների շարունակականության երաշխիք կարող է լինել:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում դասընթացի գնահատման համակարգում առանձին հետազոտական բաղադրիչ պարունակող անհատական աշխատանքների առկայությունը, ինչի նպատակային ու համակարգված կիրառումը կնպաստի հետազոտության և ուսումնառության կապի ամրապնդմանը: Միաժամանակ, դասախոսների մենագրությունների ու ուսումնական ձեռնարկների սակավությունը, ուսանողների հետազոտական գործունեության մեխանիզմների թերությունները, բուհի հետազոտական ծրագրերում ուսանողների ներգրավված չլինելը, կուրսային, ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի կատարման ու գնահատման գործընթացների խնդրահարույց կողմերը չեն ապահովում ուսումնառության հետազոտական բաղադրիչի գործառնությունը, ինչն էլ վտանգում է ուսումնական և հետազոտական գործընթացների արդյունավետ փոխկապակցումը: Բացի այդ հետազոտական արդյունքները ՄԿԾ-ներում ներդնելու գործընթացը համակարգված չէ և չի գնահատվում արդյունվետությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ համալսարանը չունի հետազոտական զարգացման հստակ գործառնական քաղաքականություն, չի իրականացվում ոլորտում հստակ ռազմավարական կառավարում, ցածր են հետազոտության արդյունքների ցուցանիշները, բացակայում է հետազոտության ոլորտում միջազգայնացման քաղաքականությունը, առկա չեն համագործակցությամբ պայմանավորված շոշափելի արդյունքներ, թույլ է ուսումնառության և հետազոտության փոխկապակցման մեխանիզմների արդյունավետությունը, փորձագիտական խումբը գտնում է, որ ԳՊՀ-ն չի բավարարում չափանիշ 6-ի պահանջներին:

Եզրահակացություն: Գորիսի պետական համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատվում է **անբավարար**:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

7.1 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:

Գորիսի պետական համալսարանը 2019-2023 թթ. ռազմավարական զարգացման ծրագրում իր մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման համար կարևորել է ուսումնական միջավայրի ապահովումը և բարելավումը՝ անհրաժեշտ որակներ ունեցող ՊԴ և ՈւՕ կազմի (5-րդ նպատակ) և ենթակառուցվածքների ու ռեսուրսների (7-րդ նպատակ) առկայությունը: Կրթական ծրագրերի իրականացման համար համալսարանն ունի 3 ուսումնական մասնաշենք, գրադարանի, ճաշարանի մասնաշենքեր, հանրակացարան, ընդ որում ուսումնական մասնաշենքերից մեկը դեռևս չի շահագործվում: Իսկ ինքնավերլուծության համաձայն՝ վերջին ժամանակաշրջանում 2019 թ. ՀՀ Կառավարության որոշմամբ համալսարանի հարակից տարածքում գտնվող

«Գորիսի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ից ԳՊՀ-ին հատկացվել է 988 քառ. մ ընդհանուր մակերեսով անշարժ գույք՝ 0,2264 հեկտար մակերեսով սպասարկման հողատարածք:

Առաջին մասնաշենքում գտնվում են համալսարանի արխիվը, բուժկետը, հաշվապահությունը, գիտական կենտրոնը, սպորտային դահլիճը, ռեկտորի, պրոռեկտորի աշխատասենյակները, հասարակայնության հետ կապերի բաժինը, ուսումնական մասը, տնտեսական մասը, հումանիտար և հասարակագիտական մասնագիտությունների ֆակուլտետը, լսարաններ ու համակարգչային լսարաններ՝ առկա և առցանց դասերի կազմակերպման, իրականացման համար:

Երկրորդ մասնաշենքում են գտնվում բնագիտական, ճարտարագիտական մասնագիտությունների ֆակուլտետը, բոլոր լաբորատորիաները, մաթեմատիկայի և ֆիզիկայի, կենսաբանության և քիմիայի, օտար լեզուների, տնտեսագիտության և կառավարման ամբիոնները, արտաքին կապերի և միջազգայնացման, ԿՈԱ և ՈՒԿԱ բաժինները, դասախոսների աշխատասենյակները, հանդիսությունների դահլիճը, լսարաններ ու համակարգչային լսարաններ՝ առկա և առցանց դասերի կազմակերպման և իրականացման համար: Առանձնացված են նաև ուսումնական լսարաններ՝ կերպարվեստի պարապմունքների համար: Երկու մասնաշենքերում էլ բավականին վերանորոգման աշխատանքներ են իրականացվել, բարեկարգվել են նաև բակային տարածքները, մասնակիորեն վերանորոգվել է նաև հանրակացարանի սենյակները:

Համալսարանի գրադարանի մասնաշենքն առանձին է՝ 5 գրապահոցով՝ 43340 կտոր մասնագիտական և գեղարվեստական գրքերով, որոնցից 3365-ը նվիրատվություն է: Առկա գրականությունից 16653-ը՝ հայատառ է, 23568-ը ռուսատառ, 805-ը՝ այլ օտար լեզուներով: Նախորդ հավատարմագրման տվյալների համեմատությամբ (68956 միավոր ընդհանուր ֆոնդ) գրականության քանակը նվազել է, որը պայմանավորված է 2018թ. նոյեմբերից գրադարանում կատարված գույքագրման աշխատանքներով, ինչի արդյունքում դուրս է բերվել հնացած, արդիականությունը կորցրած գրականությունը: ԳՊՀ-ի գրադարանի գործունեության բարելավման ուղղությամբ կատարվել են մի շարք աշխատանքներ, որոնք շարունակական բնույթ են կրում: Թեև, ըստ ինքնավերլուծության, վերջին երկու տարվա ընթացքում ձեռք է բերվել անհրաժեշտ մասնագիտական գրականություն, սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ դեռևս առկա են խնդիրներ մասնագիտական գրականության ապահովվածության հետ կապված: Գրադարանից օգտվողների հաճախականության վերաբերյալ վերլուծությունները բացակայում են:

ԳՊՀ-ն ունի նաև ընթերցասրահ, էլեկտրոնային գրադարան (8 համակարգիչ, տպիչ, էլեկտրոնային գրատախտակ) և փորձում է առկա դասագրքերը թվայնացնել ուսանողներին հասանելի դարձնելու նպատակով, սակայն դրանց թիվը դեռևս քիչ է (428 միավոր): Գրադարանը բաժանորդագրված չէ որևէ միջազգային ամսագրի: Համագործակցության շրջանակում ուսանողներն օգտվում են Հայաստանի ազգային գրադարանից և Գորիսի քաղաքային գրադարանից: Համալսարանը նախատեսում է միանալ գրադարանային ասոցացիային և գրադարանային ցանցերին: Գրադարանային ԿՕՀԱ համակարգը համալսարանում ներդրման փուլում է:

Ընթերցասրահը Erasmus + LNSS ծրագրի շրջանակներում համալրվել է մի շարք սարքավորումներով՝ համակարգիչներ, բազմաֆունկցիոնալ տպիչ, սկանավորման սարք և էլեկտրոնային գրատախտակ, ապահովված է նաև ինտերնետ կապով: Չնայած ուսանողների շրջանում անցկացվող հարցումների արդյունքներով՝ ուսումնական գործընթացն ապահովող ռեսուրսների ապահովվածությունից բավարարվածությունը տոկոսային բարձր ցուցանիշ ունի (ըստ ինքնավերլուծության շուրջ 80%), այնուամենայնիվ փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ դրանց հասանելիությունն ուսանողներին բավարար չէ:

Համալսարանն իր մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման համար համակարգչային լսարաններից և լաբորատորիաներից բացի ունի նաև կենսաբանության, քիմիայի, ֆիզիկայի, բնագիտության և ճարտարագիտության, էլեկտրաէներգիայի լաբորատորիաներ, որոնց վերազինման ուղղությամբ ևս համալսարանն իրականացրել է որոշակի աշխատանքներ, սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ դեռևս անելիքներ կան հատկապես քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության մասնագիտությունների ուղղությամբ: Որոշ մասնագիտությունների շրջանակում ուսումնասիրվող առարկաների դեպքում համալսարանն ապահովված չէ անհրաժեշտ լաբորատորիաներով (օրինակ՝ կրիմինալիստիկայի), որի բացը չի լրացվում այլ մեխանիզմներով:

Համավարակի և ռազմական դրության պայմաններում ԳՊՀ-ն ապահովել է համապատասխան կրթական միջավայր՝ ուսումնառությունը կազմակերպելու համար: Մասնավորաբար, ըստ անհրաժեշտության, հատկացրել է լսարաններ, համապատասխան տեխնիկական միջոցներ, համավարակի պայմաններում կարողացել է ապահովել համապատասխան սանիտարահիգիենիկ պայմաններ և այլն:

7.2 ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

Համալսարանն ունի ֆինանսական ռեսուրսների կառավարման քաղաքականություն: ԳՊՀ-ն ֆինանսավորվում է պետական բյուջեից և արտաբյուջետային միջոցների հաշվին: Ըստ ֆինանսական ռեսուրսների կառավարման՝ պետական բյուջեից մուտքերի ենթատեսակներն են՝ պետպատվերով սովորող ուսանողների ծախսերի համար կատարված հատուցումները, ընթացիկ և կապիտալ դրամաշնորհները: Պետական բյուջեից ֆինանսավորվող ընթացիկ դրամաշնորհներն իրենց մեջ ներառում են ուսման վարձ, կրթաթոշակ, գիտական թեմաների ֆինանսավորում: Արտաբյուջետային մուտքերի ենթատեսակներն են հիմնականում ուսանողների վարձավճարները (բուհի եկամուտների ընդհանուր կառուցվածքում կազմում են շուրջ 87.1%-ը) և այլ աղբյուրներից ստացվող միջոցները, այդ թվում նաև միջազգային կազմակերպություններից ստացվող դրամաշնորհներ, վերջիններս շատ փոքր թիվ են կազմում հատկապես վերջին երկու տարիներին: Ֆինանսական հոսքերի կառավարումն ու վերահսկողությունն իրականացնելու նպատակով կազմում են բյուջետային մուտքերի և ելքերի տարեկան նախահաշիվներ: Բուհն այլ կայուն ֆինանսական հոսքեր չունի: Ֆինանսական ռեսուրսների

բազմազանեցման ուղղությամբ կատարել է որոշակի աշխատանքներ՝ հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների ղեկավարման իրավունք ստանալու հավակնություն ունեցող անձանց համար վերապատրաստումներ կազմակերպելու միջոցով, որը սակայն շատ փոքր ցուցանիշ է կազմում: Ըստ ֆինանսական ռեսուրսների կառավարման (2020 թ.)՝ ծախսերի հիմնական տեսակը դասախոսների, վարչական, ուսումնական, տեխնիկական աշխատակազմի աշխատավարձերն են (67,73%), փոքր թիվ են կազմում նաև պետական բյուջե վճարումները (1.90 %), կրթաթոշակները (1,20 %), անհատույց օգնության ծախսերը (0,37%), պրակտիկաների կազմակերպման ծախսերը (0,22 %), ուսումնական սարքավորումների և գույքի ձեռքբերման ծախսերը (0.44 %), գրադարանային ծախսերը (0,03 %), որակի ապահովման գործընթացների ծախսերը (0.56 %), դասախոսների մասնագիտական զարգացման ծախսերը (0,01 %), գործուղման (0,14), ներկայացուցչական (0.09 %), գիտության ծախսերը՝ լաբորատոր սարքավորումների և նյութերի ձեռքբերում, հրատարակումներ, գիտական գործուղումներ և կոնֆերանսների մասնակցություն (0,19 %), տնտեսական ծախսերը՝ կոմունալ, գրասենյակային և տնտեսական, տրանսպորտային, վառելիք, ընդհանուր և կապիտալ վերանորոգումներ (7,23 %), այլ ծառայությունների և ապրանքների ձեռքբերման ծախսեր (0,45 %), ռեսուրսների պահպանման ծախսեր (0,51 %), զարգացման ծախսեր (3,38), պարգևատրության ծախսեր (3,43 %), կայունացման ֆոնդին ուղղվող միջոցներ (12,62%): Ծախսերի գծով բյուջեն բաշխված է՝ հաշվի առնելով նաև պարտադիր կատարման ենթակա ծախսերը, կայունացման ֆոնդին ուղղվող միջոցները: Չնայած տարբեր ուղղություններով բյուջեի բաշխմանը, փորձագիտական այցի ընթացքում խումբը արձանագրեց, որ բյուջեի բաշխումը հստակորեն չի կապակցվում ռազմավարական ուղղությունների հետ, քանի որ ՌԾ-ն չի պարունակում գործողությունների իրականաման համար համապատասխան ֆինանսական միջոցների հատկացում:

Համալսարանում 2018 թ. միջինում 11%-ով բարձրացվել են աշխատավարձերը, իսկ տարվա վերջում նրանց տրվել է 1 ամսվա աշխատավարձի չափով հավելյալ աշխատավարձ: Հավելյալ աշխատավարձ տրվել է նաև 2019 թվականին:

Վերջին անգամ 2018 թ.- LNSS և HERITAG դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում հիմնականում կատարվել է բուհի ռեսուրսային բազայի հարստացումը, ենթակառուցվածքների բարելավումը: 2019 թ. սեփական միջոցներով աստիճանական լուծում է տրվել ենթակառուցվածքի պահպանմանն ու բարելավմանը՝ ուսումնական մասնաշենքերի աստիճանական վերանորոգումների միջոցով:

Համալսարանի ֆինանսական հոսքերը ենթարկվել են աուդիտի, որի արդյունքում աուդիտի հանձնաժողովը ներկայացրել է առաջարկություններ, սակայն կատարողականների արդյունավետության վերլուծություններ իրականացված չեն:

Հարկ է նշել, որ ֆինանսական միջոցների սղությունը բուհը թույլ կողմ է համարում:

7.3 ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

Համալսարանն ունի ֆինանսների պլանավորման, կառավարման, մշտադիտարկման մշակված քաղաքականություն, որը հաստատվել է գիտական խորհրդի

2019 թ. հոկտեմբերի 11-ի թիվ 5 նիստի որոշմամբ: Այն ընդգրկում է կանոնադրական և ռազմավարական խնդիրների իրականացման համար ֆինանսների տնօրինման, կազմակերպման և օգտագործման գծով գործառույթների, կանոնների, սկզբունքների ամբողջությունը, որն ուղղված է ֆինանսական միջոցների հավաքագրմանը, բաշխման գործընթացների կարգավորմանը, ֆինանսական կայունության ապահովմանը:

Համալսարանի տարեկան բյուջեի նախահաշվի նախագիծը կազմվում է՝ հաշվի առնելով բոլոր ստորաբաժանումների կարիքները նախապես ներկայացված հայտերի միջոցով: Համալսարանի տարեկան բյուջեի նախագիծը քննարկվում է ԳՊՀ-ի խորհրդի նիստում և հավանության արժանանալու դեպքում ներկայացվում ԳՊՀ-ի Խորհրդի հաստատմանը, իսկ դասախոսի աշխատավարձի չափը որոշվում է ըստ ուսումնական բեռնվածության, գիտական աստիճանի, կոչման և պաշտոնի: ՊԴ և ՈւՕ անձնակազմերի հաստիքացուցակները հաստատվում են գիտական խորհրդում, ընթացիկ ֆինանսական հարցերը հաստատվում են ռեկտորատի նիստում:

Համալսարանն ունի պայմանագիր ԿԳՄՍ նախարարության հետ հետևյալ ուղղություններով՝ ուսանողական նպաստ, կրթաթոշակ, ինչպես նաև գիտական թեմաների ֆինանսավորում: Միջոցները ծախսվում են ՄՈՒՀ-ի ռեկտորի կողմից տրված հրամաններին համապատասխան: Միջազգային կազմակերպություններից ֆինանսավորումները ստացվում են կոնկրետ դրամաշնորհային ծրագրերին համապատասխան, հրամանագրվում են և նպատակային ծախսվում: Չնայած ներկայացված մեխանիզմներին՝ փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ ֆինանսական միջոցների բաշխման գործընթացում շահակիցները ներգրավվածությունը թույլ է:

Համալսարանը ՄԿԾ-ների համար ֆինանսական բաշխումը կատարում է համամասնորեն՝ տարբեր կրթական ծրագրերից ստացված եկամուտները դիտարկվում են մեկ համընդհանուր բյուջեում, որի ծախսերը պլանավորվում են բոլոր ՄԿԾ-ների համար ըստ առաջնահերթությունների: ԳՊՀ-ում կան ՄԿԾ-ներ, որոնց կրթության կազմակերպումը չի ինքնածախսածածկվում (առկա են նույնիսկ մինչև 5 ուսանողից բաղկացած խմբեր) և վերջիններիս իրականացումը կատարվում է այլ ՄԿԾ-ներից ապահովվող եկամուտներով: Սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դրանց շարունակականությունը երաշխավորող հստակ քաղաքականություն և հիմքեր չկան և բուհը գլխավորապես առաջնորդվում է հասարակական պատասխանատվությամբ՝ տարածաշրջանի համար այդ մասնագետների խիստ կարևորությամբ, ինչպես նաև ՊԴ կազմի աշխատանքային զբաղածության խնդրի կարգավորմամբ: Միաժամանակ փոքր խմբերի պարագայում ՊԴ կազմի վճարումը, ըստ փոխադարձ պայմանավորվածության, իրականացվում է սակավ ժամերի համար:

Յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում հաշվարկվում է հաջորդ ուսումնական տարվա ծավալը, ամբիոններում իրականացվում են դասախոսների ծանրաբեռնվածությունների բաշխումները, որոնց հիման վրա իրականացվում է ՊԴ կազմի աշխատավարձային ֆոնդի նախնական հաշվարկը, ինչը բյուջեի ծախսերի հիմնական մասն է կազմում: Բուհը հատկացումներ է կատարում նաև պրակտիկաների կազմակերպման և անցկացման համար:

7.4 ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

Ռեսուրսները ներկայացնող տեսանյութն ու փաստաթղթերն ուսումնասիրելու և դասալսումների արդյունքում փորձագիտական խումբը պարզեց, որ ԳՊՀ-ն ունի լսարաններ, լաբորատորիաներ, պրոյեկտորով ապահովված լսարաններ, համակարգչային լսարաններ, որոշ լաբորատորիաներ բարելավման անհրաժեշտություն ունեն: Ամբիոնների, ֆակուլտետների և վարչական ստորաբաժանումների համար հատկացված են առանձին աշխատասենյակներ, որոնք հագեցած են համակարգչային տեխնիկայով և այլ անհրաժեշտ միջոցներով:

Գրադարանն հագեցած է մասնագիտական գրականությամբ, սակայն փորձագիտական այցից պարզվեց, որ այն համալրելու անհրաժեշտություն կա նաև, չնայած որ բուհը այս ուղղությամբ շարունակական աշխատանք է տանում: Այցից պարզվեց նաև, որ գրականության կարիքները գնահատելու և ըստ առաջնահերթության գնումները պլանավորելու հստակ մեխանիզմներ առկա չեն:

Համավարակի պայմաններում ուսուցումը հեռավար կազմակերպելու համար համալսարանը հնարավորություն է ընձեռել դասախոսներին, անհրաժեշտության դեպքում, համալսարանի լսարաններից հեռավար դասընթաց անցկացնելու:

ԳՊՀ-ի ՌԾ-ն չի պարունակում գործողությունների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների պլանավորում, սակայն նախատեսված մի շարք գործողություններ հավելյալ ռեսուրսներ չեն պահանջում: ՌԾ-ի ընթացիկ մոնիթորինգի հաշվետվությունն էլ չի պարունակում ռեսուրսների խնդիրներ:

ՄԿԾ-ի և ռեսուրսների բազայի համապատասխանության համընդհանուր ուսումնասիրություններ և վերլուծություններ իրականացված չեն համալսարանում: Ըստ ինքնավերլուծության՝ ռեսուրսներից բավարարվածության վերաբերյալ հարցումներ են անցկացվել դասախոսների և ուսանողների շրջանում և նրանք հիմնականում բավարարված են, սակայն արդյունքում վեր հանված խնդիրների ուղղությամբ չեն իրականացվել աշխատանքներ, բացակայում են բարելավման պլանները, ավելին՝ փորձագիտական խմբի այցի ընթացքում պարզվեց, որ դեռևս առկա է մասնագիտական գրականության, որոշ լաբորատորիաների, ռեսուրսների հասանելիության խնդիրներ: Դրամաշնորհային ծրագրերի միջոցով համալսարանը բավականին հարստացրել է իր նյութատեխնիկական բազան, իսկ իր միջոցներից բավականին վերանորոգման աշխատանքներ է իրականացրել տարբեր մասնաշենքերում: Համալսարանն իր բյուջեում և ծրագրում առանձնացրել է նյութատեխնիկական բազայի անընդհատ համալրման, շենքային պայմանների, լաբորատորիաների բարելավման խնդիր:

7.5 ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:

Փաստաթղթաշրջանառությունը համալսարանում կանոնակարգվում է ԳՊՀ-ի գործավարության կարգով, որը հաստատվել է գիտական խորհրդի 2019 թվականի դեկտեմբերի 26-ի նիստում, ըստ որի գործավարությունն իրականացնում է աշխատակազմի կառավարման բաժինը հիմնականում էլեկտրոնային տարբերակով,

մինչդեռ, ըստ ինքնավերլուծության՝ նաև թղթային տարբերակով: ԳՊՀ-ում հասանելի է ինտերնետ կապ, գործում է համակարգչային ներքին ցանց, և ԳՊՀ-ն օգտվում է նաև MULBERRY համակարգից՝ ԿԳՄՄՆ-ի հետ փաստաթղթաշրջանառության իրականացմման ժամանակ: Այցի ժամանակ փորձագիտական խումբն արձանագրեց, որ էլեկտրոնային եղանակով ներքին փաստաթղթաշրջանառության գործընթացը կատարվում է էլեկտրոնային փոստի միջոցով:

Ինքնավերլուծության համաձայն՝ համալսարանը ֆինանսական միջոցների կառավարումն իրականացնում է համապատասխան ծրագրերի միջոցով: 2019 թ. բուհում ներդրվել և գործարկվել է ՀԾ-Ձեռնարկություն հաշվապահական ծրագիրը, որը կապված է CLIENT TREASURY գանձապետական ծրագրի հետ, ինչը հաստատվեց նաև փորձագիտական այցի ժամանակ:

Համալսարանն ունի պաշտոնական կայք (www.gorsu.am), ֆեյսբուքյան էջ, պաշտոնաթերթ, որոնց միջոցով տարածում է տեղեկատվություն:

ԳՊՀ-ի տարբեր ստորաբաժանումների գործունեության վերաբերյալ փաստաթղթերը արխիվացվում են արխիվավարիկողմից:

Տեղեկատվության և փաստաթղթավորման գործընթացների արդյունավետության գնահատում դեռևս չի իրականացվել:

7.6 ՄՈՒՀ-ն ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

ԳՊՀ-ում, ինքնավերլուծության համաձայն՝ առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված աշխատանքները կոորդինացվում և իրականացվում են համալսարանի տնտեսական գործունեության կազմակերպման բաժնի կողմից: Համալսարանն ունի բուժկետ, որն ապահովում է առաջին բուժօգնությունը, բուժկետն ապահովված է անհրաժեշտ բոլոր պարագաներով: Համալսարանում յուրաքանչյուր տարի աշխատակիցներն անցնում են բժշկական ստուգումներ Գորիս քաղաքի Ա. Ամիրյանի անվան պոլիկլինիկայի հետ համագործակցության շրջանակում:

Համալսարանն համագործակցում է նաև Սյունիքի մարզային փորձագիտական կենտրոն «ՊՈԱԿ Գորիսի մանաճյուղի» հետ COVID-19 համավարակից խուսափելու նպատակով:

Համալսարանում առողջապահական տեսանկյունից կարևորվում է նաև ֆիզիկական դաստիարակությունը, ըստ այդմ դասախոսների կողմից պարբերաբար կազմակերպվում են սպորտային զանգվածային միջոցառումներ:

Ինքնավերլուծության համաձայն՝ ԳՊՀ-ում դեռևս ուսանողների և աշխատակիցների հանգստի և առողջության վերականգման գործընթացներ չեն իրականացվում անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով:

Համալսարանն ունի նաև հանրակացարան, որի 8 սենյակներում կատարվել են մասնակի վերանորոգման աշխատանքներ, դրանցից օգտվում են ինչպես կարիքավոր ուսանողները, այնպես էլ աշխատակիցները:

ԳՊՀ–ն ունի անվտանգության գծով ճարտարագետ, ում կողմից յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբից աշխատակիցները և ուսանողները ծանուցվում են

անվտանգության կանոններին, և հրահանգավորման մատյանում կատարվում են համապատասխան գրառումներ:

ԳՊՀ-ի քաղաքացիական պաշտպանության շտաբն իրականացնում է արտակարգ իրավիճակներում ուսանողների և աշխատակիցների պաշտպանության ուսուցողական գործընթացներ:

Հաշմանդամություն /հենաշարժային խնդիր/ ունեցող ուսանողների համար վերանորոգվել է թիվ 1 մասնաշենքի թեքահարթակը, թիվ 2 մասնաշենքում նույնպես կառուցվել է թեքահարթակ: Ըստ ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարում ներկայացրած տվյալների՝ հատուկ կարիքներ ունեցող ուսանողներ ունեցել են մինչ 2019-2020 ուստարին, իսկ այդուհետ դեռևս չեն ունեցել ու չունեն: Այդ պատճառով դեռևս չի գործում թիվ 1 մասնաշենքի հարմարեցված լսարանը՝ չնայած սարքավորումների առկայությանը:Այն ստեղծվելէ TEMPUS “ASPIRE” «Հատուկ կարիքներով մարդկանց հասանելությունը հասարակությանը» նախագծի շրջանակներում: Նույնատիպ լսարան նախատեսված է կահավորել թիվ 2 մասնաշենքում:

Մասնաշենքերում տեղադրված են հակահրդեհային պաշտպանության սարքավորումներ, յուրաքանչյուր հարկում կան տարահանման սխեմաներ: Համալսարանն ունի հրդեհաշիջման պլան, սակայն ֆինանսական միջոցների բացակայության պատճառով չեն տեղադրվել հրդեհ ազդարարող ինքնաշխատ համակարգեր:

Վերջին հինգ տարիների կտրվածքով առողջության պահպանման ուղղությամբ (շահակիցների բժշկական ստուգումներ և դեղորայք) ծախսվել է 1163500 դրամ:

Համավարակի պայմաններում բուհը ստեղծել է անհրաժեշտ պայմաններ՝ ուղղված աշխատակիցների և ուսանողների առողջության ապահովմանը:

Փորձագիտական այցից պարզվեց, որ պատերազմից հետո ստեղծված իրավիճակում բուհը անվտանգությանն ուղղված հավելյալ մոտեցումներ մշակելու և ներդնելու կարիք է տեսնում, այդ թվում՝ ուսանողներին և աշխատակիցներին լրացուցիչ պատրաստելու:

7.7 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Ուսանողներին և դասախոսներին տրամադրվող ռեսուրսների և ծառայությունների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներից են ԳՊՀ-ի ուսանողների և ՊԴ կազմի ուսումնական միջավայրից բավարարվածության վերաբերյալ հարցումները, սակայն դրանք չեն կրում պարբերական բնույթ, և դեռևս ազդեցություն չեն ունեցել բարելավումներ իրականացնելու առումով: Իրականացված հարցումների արդյունքում վերհանված խնդիրների լուծման ուղղությամբ բացակայում են բարեկավման պլանները, արդյունքի գնահատման հաշվետվությունները: Ուսանողները տարբեր խնդիրներ, այդ թվում՝ ռեսուրսների վերաբերյալ, կարող են բարձրացնել նաև ուսումնական խորհրդատուների հետ հանդիպման ժամանակ: Հեռավար ուսումնառության պայմաններում կարիքների գնահատում չի իրականացվել:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ԳՊՀ-ն արժևորում է անհրաժեշտ ռեսուրսներով ապահովումը համալսարանի առաքելության և զարգացման ռազմավարական ծրագրի նպատակների, այդ թվում՝ կրթական ծրագրերի իրականացման համար: ԳՊՀ-ն կարողացել է ստեղծել համապատասխան ուսումնական միջավայր՝ ապահովելով ուսումնական գործընթացի կազմակերպման և վարչական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ հիմնական աշխատանքային պայմաններ:

Բուհի ֆինանսական միջոցները լսարանային, լաբորատոր պայմանների, գրադարանային ֆոնդի և այլ ենթակառուցվածքների համալրման, բարելավման, արդիականացման և ընդլայնման համար սահմանափակ են, ռեսուրսային բազայի հարստացումը եղել է հիմնականում միջազգային դրամաշնորհային ծրագրերի շրջանակում, որը վերջին տարիներին պասիվ բնույթ է կրել: Սակայն այնուամենայնիվ բուհը բաշխումն այնպես է կատարում, որ կարողանում հատկացումներ կատարել բարելավումների համար:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ համալսարանը մշտապես աշխատանքներ է իրականացնում շենքային պայմանների բարելավման ուղղությամբ՝ բյուջեի նախագծում տրամադրելով համապատասխան հատկացումներ, նաև որոշակի աշխատանքներ՝ լաբորատորիաների վերազինման, գրադարանային ֆոնդի, համալրման ուղղությամբ, սակայն դրանք դեռևս ունեն բարելավման անհրաժեշտություն՝ սովորողների և ՄԿԾ-ների արդյունավետ իրականացման կարիքներին համապատասխան:

ԳՊՀ-ի հիմնական ֆինանսական մուտքերը ապահովում են վարձավճարները, սակայն կարևորում ենք դրանց բազմազանեցումը, ինչը նաև կարևորվում է բուհի կողմից:

Մասնագիտական գրականության պակասը մտահոգիչ է կրթական ծրագրերի իրականացման տեսանկյունից: Գրականության ապահովումը, նաև՝ առցանց գրադարանային ցանցերին անդամակցության պարագայում կարող է նպաստել բազմաթիվ թարմ աղբյուներից, օտարալեզու գրականությունից օգտվելու հնարավորությունների մեծացմանը:

Մարզական գույքի անհրաժեշտություն ունի նաև մարզադահլիճը, որը կարևոր դեր ունի ուսանողների ֆիզիկական դատիարակության գործում:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ համալսարանն ունի ֆինանսների կառավարման քաղաքականություն, տարեկան բյուջեում տարբեր նպատակների համար ուղղված ծախսեր, սակայն դրանք հստակեցված չեն՝ ըստ ռազմավարական ծրագրի նպատակների և կրթական ծրագրերի, իսկ ֆինանսական հոսքերի բացակայությունը կարող է խոչընդոտել ռազմավարական նպատակների իրականացմանը և կայունության ապահովմանը: Համալսարանի ռազմավարական պլանավորման մեջ ռեսուրսների (այդ թվում՝ ֆինանսական) հստակ հատկացումների բացակայությունը կարող է վտանգել դրանց իրականացումը, հատկապես որ որոշ ռազմավարական ուղղություններով ֆինանսական նախատեսումները բյուջեում բավականին ցածր ցուցանիշ են կազմում:

Չնայած բուհի ֆինանսական ռեսուրսների սահմանափակությանը, ԳՊՀ-ն կարողանում է ֆինանսներն արդյունավետ կառավարել ֆինանսների խնայողության և

ֆինանսների՝ ըստ առաջնահերթության բաշխման շնորհիվ: Փորձագիտական խումբը ֆինանսների բաշխման քաղաքականությունում դրական է համարում կայունացման միջոցների ֆոնդի առկայությունը, ըստ որի համալսարանը կարողացել է ՄԿԾ-ների արդյունավետ իրականացման նպատակով ընդունել հրավիրյալ դասախոսներ՝ առցանց դասավանդման ձևաչափով: Ֆինանսների բաշխման գործընթացում բոլոր շահակիցների ներգրավվածության բացակայությունը կարող է խոչընդոտել ֆինանսների կառավարման թափանցիկության ապահովումը:

Ըստ փորձագիտական խմբի՝ համալսարանի ռեսուրսների բազան թեև հարուստ չէ, սակայն բավարար է ՄԿԾ-ի իրականացման համար: Այնուհանդերձ, ՄԿԾ-ների և ռեսուրսների համապատասխանության վերաբերյալ ուսումնասիրությունների ու վերլուծությունների բացակայությունները կարող է կրթական ծրագրերի ապահովումը դարձնել անիրատեսական: Դրական է այն փաստը, որ համալսարանը պարբերաբար, փուլ առ փուլ իրականացնում է շենքային պայմանների բարելավման, տարածքի բարեկարգման, լաբորատորիաների վերազինման աշխատանքներ, ինչը վկայում է, որ համալսարանը պարբերաբար հետևում է որակի շարունակական բարելավմանը: Միաժամանակ բուհը մտահոգիչ է համարում որոշ կրթական ծրագրերի շարունակականության երաշխիքների բացակայությունը:

ԳՊՀ-ն տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման ոլորտում որոշակի ձեռքբերումներին զուգընթաց ունի առկա համակարգերի, մեխանիզմների արդյունավետության գնահատման անհարժեշտություն, որը փաստեցին նաև շահակիցները պաշտոնական կայքի մասով:

Դրական է այն, որ համալսարանն առանձնակի ուշադրություն է դարձնում անվտանգության և առողջապահության ապահովման հարցերին՝ ապահովելով համապատասխան միջոցներ և կազմակերպելով միջոցառումներ: Միաժամանակ փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ համալսարանը, առաջնային դիտելով այս հարցը՝ նախատեսում է բարելավումներ իրականացնել տարածաշրջանում կատարված փոփոխությունների արդյունքում ստեղծված իրավիճակին համապատասխան:

Ուսանողներին և դասախոսներին տրամադրվող ռեսուրսների և ծառայությունների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմների անկատարությունը կարող է խոչընդոտել դրանց շարունակական կատարելագործումը՝ ներքին շահակիցների կարիքներին համապատասխան:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ համալսարանը կարողացել է ստեղծել համապատասխան ուսումնական միջավայր, ունի ֆինանսների կառավարման հստակ քաղաքականություն, իրականացնում է ֆինանսների արդյունավետ բաշխում և կառավարում սահմանափակ բյուջեի պայմաններում, նախորդ հավատարմագրումից հետո կատարվել են ներդրումներ ուսումնական միջավայրի բարելավման նպատակով, կրթական ծրագրերի նպատակների իրագործման համար բարելավվել է ռեսուրսային բազան, շարունակական քայլեր են կատարվում անվտանգ միջավայրի ապահովման ուղղությամբ, ապահովում է փաստաթղթաշրջանառության գործընթացը, գործածում է

տեղեկատվության կառավարման որոշ մեխանիզմներ, ներդրել են կիրառվող ռեսուրսների արդյունավետության գնահատմանն ուղղված որոշ մեխանիզմներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԳՊՀ-ն բավարարում է չափանիշ 7-ի պահանջներին:

Եզրակացություն: Գորիսի պետական համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատվում է ***բավարար:***

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

8.1 ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:

Գորիսի պետական համալսարանն ունի հաշվետվողականության հստակ մեխանիզմ: Բուհը հաշվետու է հասարակությանը և ՀՀ կառավարությանը՝ որպես հիմնադրի: Համալսարանում հաշվետվողականության գործընթացը կանոնակարգվում է «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության», «Կրթության», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների» մասին օրենքներով, ՀՀ կառավարության մի շարք որոշումներով, ինչպես նաև ԳՊՀ-ի կանոնադրությամբ: Հաշվետվողականության համար հիմք է ծառայում նաև հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժնի կանոնակարգը: Համալսարանի տարեկան գործունեությունն ամփոփվում է ռեկտորի տարեկան հաշվետվություններում, որոնք հրապարակվում են համալսարանի կայքում և տպագրվում տվյալ ուսումնական տարվա գործունեությունը ներկայացնող գրքույկում: Ռեկտորի հաշվետվությունները գնահատում և հաստատում է Խորհուրդը, սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ Խորհուրդը ընդգրկուն քննարկումներ չի ծավալում:

Ռեկտորի հաշվետվությունները ներառում են համալսարանի գործունեության վերաբերյալ քանակական և որակական տվյալներ, տեղեկատվություն համալսարանի տարբեր ոլորտների գործունեության վերաբերյալ, սակայն դրանք վերլուծական բնույթ չունեն: Հաշվետվություններում անդրադարձ չի կատարվել նաև հիմնախնդիրներին հետագայում դրանց լուծում տալու նպատակով: Բացակայում են նաև համեմատական վերլուծություններն ըստ տարիների: Ֆակուլտետների և մյուս ստորաբաժանումների տարեկան հաշվետվություններում ևս վերլուծական մասը թույլ է: ՌԾ-ի իրականացման վերաբերյալ համապատասխան հանձնախմբի մոնիթորինգի արդյունքները հրապարակվել են կայքում, որոնք սակայն կրկին վերլուծություններ չեն պարունակում: Փորձագիտական այցից պարզվեց, որ շահակիցները վերջինիս վերաբերյալ լավատեղյակ չէին:

ԳՊՀ-ի Խորհրդին ներկայացվող հաշվետվություններից բացի՝ ԳՊՀ-ն տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով հաշվետվություններ է ներկայացնում ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը, Գիտության կոմիտեին, Պետեկամուտների կոմիտեին, Վիճակագրական վարչությանն ու այլ պետական գերատեսչությունների:

Համալսարանը հաշվետվողականության մեխանիզմների ուղղությամբ մշակել է ԳՊՀ-ի ներքին և արտաքին շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման քաղաքականություն և ընթացակարգ (հաստատվել է ԳԽ-ի 2020 թ. հունվարի 13-ի նիստում), որն ընդգրկում է ԳՊՀ-ի շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման ուղղությամբ իրականացվելիք գործողություններն ու արդյունավետության մեխանիզմները, սակայն դրանց արդյունավետության գնահատում իրականացված չէ:

8.2 ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելությունը հասարակությանը:

Հասարակայնության հետ կապերի և լրատվության զարգացումը ԳՊՀ-ի ռազմավարական ուղղություններից մեկն է: Համալսարանն իր գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը հասարակությանը փոխանցում է տարբեր մեխանիզմների միջոցով, որոնք ամրագրված են «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում, ԳՊՀ-ի 2019-2023 թթ. զարգացման ռազմավարական ծրագրում, ԳՊՀ-ի հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժնի կանոնակարգում և մի շարք այլ նորմատիվ փաստաթղթերում: Թեև համալսարանը տեղեկատվության համար որպես մեխանիզմներ նշել է մի շարք ավանդական և էլեկտրոնային միջոցներ, սակայն դրանց արդյունավետության գնահատում իրականացված չէ:

Համալսարանի կայքը համարվում է տեղեկատվության փոխանցման մեխանիզմներից մեկը: Միաժամանակ ինչպես փաստաթղթերի և պաշտոնական կայքէջի ուսումնասիրությունների, այնպես էլ փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ չնայած կայքի բարելավման ուղղությամբ 2018 թ. դեկտեմբերից սկսած կատարվել է զգալի աշխատանք, սակայն կայքը դեռևս ունի բարելավման կարիք: Պատասխանատուները հստակ պատկերացում ունեն կայքի խնդիրների վերաբերյալ, սակայն դրանք հիմնականում պայմանավորված մասնագետի բացակայությամբ և նախատեսում են բարելավմանը միտված աշխատանքներ, համապատասխան որակավորում ունեցող մասնագետի ներգրավում:

Կայքը եռալեզու է, սակայն նյութերը տեղադրված են երկու՝ հայերեն և անգլերեն լեզուներով, ընդ որում անգլերեն լեզվով նյութերի ընտրությունը նպատակային և համակարգված բնույթ չի կրում: Կախված դրանից բացակայում են վերլուծությունները կայքի այցելությունների վերաբերյալ: Չնայած հարցումներից ակնհայտ է, որ ուսանողները և ՊԴ կազմը բավարարված են կայքի կառուցվածքից, նորությունների լուսաբանումից, հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժնի գործունեության թափանցիկությունից ու հասանելիությունից, ֆեյսբուքյան պաշտոնական էջում հրապարակումների որակից ու մատչելիությունից, տեղեկատվությունը ստանալու հարմարավետությունից, սակայն կայքի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այն դեռևս նյութերով հարստացնելու կարիք ունի, ստեղծված մի շարք բաժիններ դատարկ են, իսկ որոշներն էլ՝ խիստ սակավ տեղեկատվությամբ:

Մասնավորապես՝ կայքում տեղադրված են ներքին իրավական ակտերը և համալսարանի գործունեության վերաբերյալ տեղեկատվություն, որոնք հասանելի են ներքին և արտաքին շահակիցների համար, սակայն դրանք ամբողջական պատկերացում

չեն տալիս համալսարանում իրականացվող գործընթացների վերաբերյալ: Համալսարանի ֆեյսբուքյան էջում ևս անդրադարձ է կատարվում համալսարանի գործունեությանը, սակայն ավելի շատ են համընդհանուր կրթության վերաբերյալ տեղեկությունները: Ֆեյսբուքյան էջի հետևորդների քանակը չի գերազանցում 4000-ը, որը փոքր ցուցանիշ է, այն պարագայում, երբ վերջինս դիտվում է որպես տեղեկատվության հաղորդման կարևոր միջոց, իսկ բուհի ուսանողների թիվը կազմում է շուրջ 1200: Բացակայում են հետևորդների թվի փոփոխության վերաբերյալ պարբերական վերլուծությունները:

Համալսարանը հասարակության շրջանում իր գործընթացների վերաբերյալ տեղեկատվության հասանելիության ապահովման նպատակով համագործակցում է նաև տարբեր կազմակերպությունների հետ՝ կազմակերպելով միջոցառումներ, որոնցից, մասնավորապես՝ «Գործընկերություն և ուսուցում» ՀԿ-ի, համալսարանում գործող «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի հետ պարբերաբար կազմակերպում են բուհում իրականացվող տարբեր գործընթացների վերաբերյալ քննարկումներ՝ վեր հանելով գործընթացների թույլ և ուժեղ կողմերը, վերլուծելով ԳՊՀ-ի կողմից տեղեկատվության տարածման գործընթացի արդյունավետությունը, սակայն համագործակցությունների արդյունավետության վերաբերյալ վերլուծությունները ևս բացակայում են և արտաքին շահակիցների, մասնավորապես՝ գործատուների ներգրավվածությունը դեռևս բավարար չէ:

8.3 ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

Համալսարանը հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապ ապահովում է՝ համաձայն ԳՊՀ-ի ռազմավարական զարգացման ծրագրում և ԳՊՀ-ի հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժնի կանոնակարգում ձևակերպված խնդիրների: Ելնելով նախորդ հավատարմագրման ընթացքում փորձագիտական զեկույցում նշված խորհրդատվություններից, համալսարանը փորձել է բարելավել հետադարձ կապի մեխանիզմներն ու գործիքները՝ ներդնելով ԳՊՀ-ի ներքին և արտաքին շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման քաղաքականություն և ընթացակարգ, որով պետք է հստակեցվի ԳՊՀ-ի շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման ուղղությամբ իրականացվելիք գործողություններն ու մեխանիզմները:

Որպես հասարակության հետ կապերի ձևավորման մեխանիզմներ ինքնավերլուծությունում նշված են՝ ԳՊՀ-ի պաշտոնական կայքը (www.gorsu.am), ֆեյսբուքյան էջը, «Լրատու Գորիսի պետական համալսարանի» պաշտոնաթերթը, ԶԼՄ-ները, մեդիահարթակները (Զանգեզուրն այսօր, Սյունիք 24), հանդեսները և մարզային թերթերը («Մաշտոց» հասարակական, կրթամշակութային, հայագիտական հանդես, «ARMENIAN VIP BUSINESS» ամսագիր, «Հայաստանի Հանրապետություն» թերթ, «Գործընթաց» տեղեկատվավերլուծական անկախ թերթ, «Սյունյաց երկիր» թերթ), Հանրային հեռուստաընկերությունը, Գորիսի մամուլի ակումբը, ԳՊՀ-ում տեղի ունեցող գործընթացները լուսաբանող բուկլետներն ու տեղեկատվական թերթիկները, տեսանյութերը (նկարահանված TVADSTUDIO-ի կողմից), Արցախի երիտասարդ

գիտնականների և մասնագետների միավորում ՀԿ-ի պաշտոնական կայքէջը (http://aegmm.org/), Ակսել Բակունցի տուն-թանգարանին կից կազմավորված «Միրհավ» գրական ակումբի պաշտոնական էջը (http://mirhav.blogspot.com/p/blog-page.html), Slaq.am, Lurer.com մեդիահարթակները: ԳՊՀ-ի հասարակական վարկանիշի և դրական կերպարի տեսանելիության բարձրացման համար իրականացվում են նաև հանդիպումներ դպրոցների հետ, EXPO ցուցահանդեսներ: Բացի այդ կիրառվում է նաև էլեկտրոնային փոստը: Չնայած բազմազանությանը՝ մի շարք մեխանիզմների կիրառությունը պարբերական բնույթ չի կրում, դրանք համակարգված չեն ըստ նպատակների և խնդիրների: Բացակայում են վերլուծություններն այն մասին, թե հասարակության անդամները ինչ հիմնական հարցերով են դիմում համալսարանին:

Չնայած համալսարանում ներդրված է հարցումների մեխանիզմ ներքին և արտաքին շահակիցների շրջանում, սակայն հարցումների արդյունքում վերհանված խնդիրների լուծման համար քայլեր չեն ձեռնարկվում, իսկ բարելավմանը միտված աշխատանքները հենված չեն հարցումների արդյունքների վրա:

8.4 ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

Ըստ ԳՊՀ-ի կանոնադրության հասարակության շրջանում գիտելիքների տարածումը, նրա կրթական և գիտամշակութային մակարդակի բարձրացումը համալսարանի հիմնական խնդիրներից մեկն է, սակայն ՌԾ-ի նպատակներում այդ խնդիրն արտացոլված չէ: Համալսարանը որպես հասարակությանը գիտելիքների փոխանցման մեխանիզմ համարում է ՀՀ կրթության և գիտության նախարարության երաշխավորությամբ (ՀՀ ԿԳ նախարարի 29.04.2019 թ., հմ.422-Ա/2 հրաման) հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք ստանալ ցանկացողների համար վերապատրաստման դասընթացների կազմակերպումը, որի ծրագրի մոդուլները կազմում է համալսարանի թիմը ԿԳՄՄՆ-ի կողմից տրված հարցաշարին համապատասխան: Թեև նշվում է, որ վերապատրաստման ընթացքում յուրաքանչյուր մոդուլի ավարտին ունկնդիրների շրջանում անցկացվել են որակի գնահատմանն ուղղված անանուն հարցումներ, սակայն դրանց արդյունքների արդյունավետության գնահատման վերլուծությունները բացակայում են:

Համասարանը որպես հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցման մեխանիզմ նշել է նաև ՀՀ պետական բյուջեի միջոցներով ֆինանսավորվող ՀՀ կրթության և գիտության պետական կոմիտեի հայտարարած «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի շրջանակներում ԳՊՀ-ում 2010 թվականից գործող «Սյունիքի հայագիտական հետազոտությունների կենտրոն», իսկ 2017 թվականից՝ «Սյունիքի հոգևոր և նյութական ժառանգությունը» գիտական ծրագրի շրջանակում պարբերաբար կազմակերպվող գիտաժողովները, բանախոսությունները, հանդիպում-քննարկումները, գրական ընթերցումները և ուսումնաճանաչողական մրցույթները, որոնց մասնակցում են ոչ միայն ԳՊՀ-ի ՊԴ և ուսանողական կազմերը, այլև Հայաստանի և Արցախի Հանրապետությունների գիտական ոլորտների ներկայացուցիչները, տարածաշրջանի հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչներն ու աշակերտները,

համայնքի մտավորականությունը: Նշված մեխանիզմների արդյունավետության գնահատում համալսարանը դեռ չի իրականացրել, մեխանիզմները համակարգված չեն՝ ըստ նպատակների:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ համալսարանը կարևորում է ներքին ու արտաքին շահակիցների համար բուհի գործունեության թափանցիկությունը, հաշվետվողականության ապահովումը, կայքում ռեկտորի տարեկան հաշվետվությունների հրապարակումը, սակայն դրանցում մասնակի վերլուծական մասի ապահովումը և նախորդ տարիների խնդիրներին անդրադարձի բացակայությունը կարող է խոչընդոտել շահակիցներին լիարժեք պատկերացում կազմել բուհում իրականացվող գործընթացների վերաբերյալ: Բացի այդ, ռեկտորի հաշվետվություններում հստակ չի երևում կապը՝ համալսարանի ՌԾ-ի ուղղությունների և խնդիրների հետ: ՌԾ-ի իրականացման վերաբերյալ տեղեկատվությունը սահմանափակվում է մոնիթորինգի արդյունքներով: Համալսարանի Խորհրդի կողմից ընդգրկուն քննարկումների կարող են էապես ազդել համալսարանի՝ տարբեր ոլորտներում առաջընթացի ապահովմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ իր գործունեության թափանցիկության և հասարակությանը հասանելի դարձնելու համար համալսարանը կիրառում է տարբեր մեխանիզմներ, սակայն դրանց արդյունավետության գնահատման բացակայությունը, համալսարանի պաշտոնական կայքին առնչվող խնդիրները կարող են բացասական ազդել համալսարանի վերաբերյալ տեղեկատվությունների տարածման, դիմորդների հավաքագրման և այլ գործընթացների արդյունավետ իրականացման վրա:

Դրական է կայքում հետադարձ կապի հնարավորությունը, սակայն հաղորդագրությունների, համալսարանին հաճախ տրվող հարցերի, մեկնաբանությունների վերաբերյալ հաշվետվությունների ու վերլուծությունների բացակայությունը հնարավորություն չի ընձեռում վեր հանել տարածաշրջանում հասարակության հետաքրքրությունները, կարիքները, ակնկալիքները բուհից և պլանավորել դրանց համապատասխան գործընթացները:

Գնահատելի է նաև համալսարանի համագործակցությունը տարբեր կազմակերպությունների հետ համալսարանի գործունեությունը հասարակությանը հասանելիության նպատակով, սակայն բացակայում են նաև համագործակցային տարբեր մեխանիզմների արդյունավետության վերաբերյալ վերլուծությունները, որոնք կարող են նոր համագործակցությունների դեպքում ուղենիշ լինել՝ ի շահ համալսարանի ռազմավարական նպատակների իրականացման և ուսանողների առաջընթացի ապահովման: Գնահատելի է, որ համալսարանը վերապատրաստման դասընթացներ է կազմակերպում ԿԳՄՄՆ-ի երաշխավորությամբ, սակայն միայն դա բավարար չէ հասարակությանը արժեքների փոխանցման համար: Համալսարանն ունի ռեսուրսներ և կարող է ընդլայնել իր գործունեությունը առանձին հեղինակային դասընթացների կամ ծրագրերի իրականացման համար՝ նպաստելով թե՛ տարածաշրջանի զարգացմանը, թե՛ համալսարանի ֆինանսական հոսքերի ապահովմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ համալսարանն ունի հաշվետվողականության հստակ սահմանված քաղաքականություն, ներքին և արտաքին շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման մեխանիզմներ, ընթացակարգ, նախորդ հավատարմագրումից հետո ձեռնարկել է քայլեր իր գործունեության թափանցիկության և հասանելիության, կայուն հետադարձ կապի ապահովման մեխանիզմների բարելավման ուղղությամբ, կան նաև հասարակությանը գիտելիքի փոխանցման որոշ մեխանիզմներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԳՊՀ-ն բավարարում է չափանիշ 8-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Գորիսի պետական համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

9.1 Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

ԳՊՀ-ն 2019-2023 թթ. ռազմավարական զարգացման ծրագրում արտաքին կապերը և միջազգայնացումը դիտարկել է իր ուղղություններից մեկը և տարբեր նպատակների, այդ թվում՝ փորձի փոխանակման, զարգացման և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով առաջադրել է խնդիրներ, սակայն դրանք հստակ և որոշակի չեն: Համալսարանում արտաքին կապերի և միջազգայնացման զարգացմանն ուղղված գործընթացները կարգավորվում են ԳՊՀ-ի կանոնադրությամբ, զարգացման ռազմավարական ծրագրով, արտաքին կապերի և համագործակցության բաժնի կանոնակարգով: Արտաքին կապերի և համագործակցության բաժինը մշակել է նաև 2020-2023 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի գործողությունների միջնաժամկետ պլան, որում համալսարանի նպատակներին և գործողություններին համահունչ սահմանված են նաև գնահատման առաջընթացի ցուցիչներ, սակայն դրանք հստակ և չափելի չեն (օրինակ, օտար լեզվի դասընթացներին մասնակցած, լեզվի որոշակի մակարդակների տիրապետող ուսումնառողների և դասավանդողների թիվը, լրացուցիչ դասընթացների մասնակիցների հանձնած թեստերի արդյունքները, արտաքին շահակիցների ազդեցությունը կրթական ծրագրերի մշակման և վերանայման վրա և այլն): Իսկ մինչ միջնաժամկետ պլանի մշակումը առաջնորդվել են տարեկան պլաններով, որոնցում բացակայում են գործողությունների վերջնարդյունքները և գնահատման ցուցիչները: Փաստաթղթերի, մասնավորապես՝ Արտաքին կապերի և համագործակցության բաժնի տարեկան հաշվետվություններից պարզ դարձավ, որ պլանավորված գործողությունների մի մասն է իրականացվել:

Թեև համալսարանն իր ինքնավերլուծության զեկույցում նշել է, որ մշտապես ուսումնասիրում է առաջատար հաստատությունների փորձը միջազգայնացման ուղղությամբ, փաստաթղթերի ուսումնասիրության և փորձագիտական այցի ընթացքում արձանագրվեց, որ առկա է միջազգայնացման քաղաքականության առաջավոր փորձի ուսումնասիրության մեկ օրինակ, որը վերաբերում է շարժունության, կարողությունների զարգացման ծրագրերի և միջբուհական համագործակցության ոլորտներին, որոնց համար ուսումնասիրվել են հիմնականում հայաստանյան մի քանի բուհեր և Դրեզդենի տեխնիկական համալսարանը, սակայն արդյունքների ներդրման ու գնահատման վերաբերյալ վերլուծությունները բացակայում են:

Չնայած միջազգայնացման աշխատանքները համակարգող ստորաբաժանումն ունի գործողությունների միջնաժամկետ պլան, սակայն դրանում հստակ արտացոլված չեն շարժունությանը նպաստող քայլերը և արդյունքների գնահատման չափանիշները:

Չնայած համալսարանը 2019 թ. ներդրել է գիտահետազոտական, ուսումնամեթոդական և կազմակերպական խրախուսման կարգ, որը հաստատվել է դեռևս 2018 թ. դեկտեմբերի 27-ի ԳԽ-ի նիստում, ըստ որի խրախուսվում են միջազգային գիտաժողովի ժողովածուներում և արտասահմանյան գիտական հանդեսներում, մասնավորապես՝ «Web of Science» կամ «Scopus» շտեմարաններում ընդգրկված հանդեսներում հոդված տպագրելու, թեզիսներ տպագրելու, միջազգային գիտաժողով կազմակերպելու համար, սակայն կարգը դեռևս հստակ չի ներդրվել և դեռևս արդյունքներ առկա չեն:

Համալսարանը չունի արտաքին կապերի հաստատումը, շարժունությունը խրախուսող ամրագրված հստակ մեխանիզմներ:

Միջազգայնացումը և արտաքին կապերը ՌԾ-ում նշված է որպես զարգացման ենթակա առանձին ուղղություն, իսկ ինքնավերլուծության զեկույցում ներկայացված է որպես առաջնահերթություն, սակայն բյուջեում դրան ուղղված ծախսեր նախատեսված չեն:

ԳՊՀ-ն շարժունության ծրագրերին ներքին շահակիցների մասնակցությունը խթանելու համար քայլեր է ձեռնարկել նաև աշխատակիցների օտար լեզուների իմացության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ: Գործուղումները կարևոր են համալսարանի համար, սակայն վերջին ժամանակներում դրանք չեն իրականացվել:

Համալսարանում ուսանողների և դասախոսների շարժունության դեպքեր վերջին տարիներին առկա չեն, բացակայում են նաև ծրագրերը, որի հիմնական պատճառներից մեկը համալսարանը համարում է անգլերեն լեզվի իմացության ցածր մակարդակը: Համալսարանում ուսանողների շարժունության վերջին օրինակը եղել է 2015 թ., Էրազմուս+ ծրագրի շրջանակում ուսանողները սովորել են Չեխիայի Մասարիկի համալսարանում:

Ըստ ինքնավերլուծության «Գորիսի ֆրանսախոսների մշակութային կենտրոն» ՀԿ-ի հետ համագործակցության շնորհիվ քաղաքացիական ծառայության ծրագրի շրջանակում 2019-2020 ուստարվա ընթացքում համալսարանից երկու ուսանողներ մեկնել են քաղաք Վիեն: Սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ վերջինս գլխավորապես ուսանողների նախաձեռնողականությամբ է պայմանավորված:

Համալսարանն ունի ՈԱ ձեռնարկ, որի բովանդակությունը հստակ չի արտացոլում այն, որ միջազգայնացման մակարդակն ու բնույթը պետք է համապատասխանեն բուհի համատեքստին (աշխարհագրական, աշխարհաքաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային):

Փորձագիտական այցի ժամանակ պարզվեց նաև, որ համավարակի պայմաններում բուհը դեռևս չի կիրառել «միջազգայնացում տեղում» քաղաքականության մոտեցումներ՝ օգտագործելով առցանց միջավայրի ընձեռած հնարավորությունները և խնայելով ճանապարհածախսի համար պահանջվող ֆինանսական ռեսուրսները:

9.2 ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:

ԳՊՀ-ում գործում է արտաքին կապերի և միջազգայնացման համար պատասխանատու ստորաբաժանում, որը վերակազմավորվել է 2017 թ. օգոստոսին: Ստորաբաժանման գործունեությունը կարգավորվում է կանոնակարգով, որը սահմանում է բաժնի գործառույթները, գործունեության ուղղությունները, իրավասությունն ու կառավարումը: Բաժինն ունի տարեկան աշխատանքային պլաններ, ինչը որոշակիորեն պլանավորում է գործընթացները, սակայն դրանցում նշված չեն գործողության կատարման հստակ ժամանակահատվածը և վերջնարդյունքները, իսկ հաշվետվություններն ավելի շատ կրում են նկարագրական, տեղեկատվական բնույթ, ոչ թե վերլուծական, դրանք մասամբ են համապատասխանում պլաններին, չեն ներառում չկատարված ու թերի կատարված գործողությունները և դրանց պատճառները հետագայում դրանց լուծում տալու նպատակով: Ենթակառուցվածքի գործունեության որակի ապահովման հստակ քաղաքականություն և ընթացակարգեր մշակված չեն:

Արտաքին կապերի և համագործակցության բաժինը հատկապես ակտիվ գործունեություն է ծավալել 2017-2018 թթ. ավարտին հասցնելով դրամաշնորհային ծրագրերի իրականացումը և ձեռք բերելով կազմակերպությունների հետ համագործակցության մի շարք պայմանագրեր, որոնց շրջանակում ծավալած գործունեության արդյունավետության գնահատում իրականացված չէ:

Նախորդ հավատարմագրման արդյունքում տրված խորհրդատվության շրջանակում համալսարանը որոշակի քայլեր է իրականացրել պաշտոնական կայքի որոշ նյութեր օտար լեզվով, ընդ որում՝ միայն անգլերենով թարգմանելու ուղղությամբ (այս գործընթացն ամեն անգամ առկա է ստորաբաժանման աշխատանքային պլանում), սակայն այցի ընթացքում պարզվեց, որ այդ նյութերի ընտրությունը թիրախավորված և համակարգված չէ, միաժամանակ չի պլանավորվում աշխատանքի ծավալը և նույնիսկ իրականացումից հետո հստակ տեղեկատվություն առկա չէ այդ մասին: Կայքում ռուսերեն լեզվով նյութերը բացակայում են, չնայած որ կայքը եռալեզու է:

Թեև համալսարանն արտաքին կապերի և համագործակցության գործունեության արդյունավետության համար կարևորում է գործուղումները, որոնց համար բյուջեում ևս նախատեսված են ծախսեր, սակայն դրանց արդյունավետության վերաբերյալ վերլուծությունները բացակայում են, կատարողականների գնահատում չի իրականացվում:

Բաժինն ունի ղեկավար, որն աշխատում է 0.5 դրույք ծանրաբեռնվածությամբ և մասնագետ՝ 1 դրույք ծանրաբեռնվածությամբ, սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ բաժնի գործառույթների լիարժեք իրականացման համար բաժինն ունի համալրման անհրաժեշտություն, հատկապես կայքի նյութերի թարգմանության ուղղությամբ: Նաև հարկ է նշել, որ բաժնում չի իրականացվում աշխատողների կատարողականների գնահատում:

9.3 ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ

Համալսարանն ունի մի շարք տեղական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցելու պայմանագրեր, հուշագրեր, սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ գործնականում քչերն են կիրառվում կամ արդյունք ապահովում, համագործակցության շրջանակում իրականացված գործընթացները պարբերական բնույթ չեն կրում: Որպես օրինակ, հրավիրյալ դասախոսների ներգրավումը նեղ մասնագիտական առարկաների դասավանդման նպատակով, որոնց կարիքն ունի ԳՊՀ-ն, սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ նաև, որ հրավիրյալ դասախոսների ներգրավումը ինստիտուցիոնալ համագործակցության արդյունք չէ:

Միջազգային համալսարանների հետ համագործակցությունների շրջանակի հաստատման հիմքում ընկած չեն լեզվահմացության տեսանկյունից ԳՊՀ-ի ներուժի ուսումնասիրությունները, օրինակ՝ բացակայում են ռուսաստանյան բուհերի հետ համագործակցությունը կամ կախված ՊԴ կազմի և սովորողների ֆրանսերենի իմացության մակարդակի հետ՝ ֆրանսիական համալսարանների հետ համագործակցությունը:

Համալսարանն իր ՌԾ շրջանակներում, հաշվի առնելով նախորդ հավատարմագրման արդյունքները, փորձել է բավականին ընդլայնել իր համագործակցությունները: Հատկապես ակտիվ գործունեություն է իրականացրել և շոշափելի արդյունք գրանցել 2018 թ.-ին՝ հաջողությամբ շարունակելով և ավարտին հասցնելով միջազգային երկու ծրագրերը՝ Էրազմուս+ LNSS-ը (Գրադարանային ցանցի աջակցության ծառայություններ. Գրադարանների արդիականացում Հայաստանում, Մոլդովայում և Բելառուսում՝ գրադարանների անձնակազմի զարգացման և գրադարանային ծառայությունների բարեփոխումների միջոցով) և HERITAG-ը (Բարձրագույն կրթության միջառարկայական բարեփոխումներ զբոսաշրջության կառավարման և կիրառական երկրատեղեկատվության ոլորտների ուսումնական ծրագրերում): Նշված ծրագրերի շրջանակներում համալսարանը համագործակցել է մի շարք տեղական և միջազգային բուհերի ու կազմակերպությունների հետ, իրականացրել տարբեր աշխատանքներ: 2019 թ. համալսարանն ակտիվություն է դրսևորել հատկապես համագործակցության պայմանագրերի, համաձայնագրերի, փոխըմբռնման հուշագրերի ստորագրմամբ, սակայն համագործակցությունների արդյունքների գնահատում իրականացված չէ: Համալսարանն ակտիվորեն համագործակցել է նաև ՀՀ տարբեր կազմակերպությունների հետ, իսկ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունների աղյունքում չեն իրականացվել միջոցառումներ հատկապես վերջին տարիներին:

Ըստ ինքնավերլուծության ԳՊՀ-ն 2017-2018 ուսումնական տարվանից համագործակցել է ԱրՊՀ-ի հետ՝ մասնավորապես նշելով, որ իրականացրել են համեմատական վերլուծություն, սակայն դրանց վերլուծություններն առկա չեն: 2020 թ. հունվարի 23-ին ԳՊՀ-ի և ԱրՊՀ-ի միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր՝ ուղղված ակադեմիական շարժունության, կրթական ծրագրերի և դասընթացների համատեղ մշակման, մասնագիտական վերապատրաստումների, ուսանողների գիտահետազոտական, գիտամանկավարժական, ուսումնական արտադրական պրակտիկաների փոխադարձ կազմակերպման, համատեղ գիտաժողովների կազմակերպման և այլ գործընթացներին: Փորձագիտական այցի ժամանակ պարզվեց, որ այս ուղղություններով դեռևս արդյունքներ չեն գրանցվել:

Ըստ ինքնավերլուծության՝ ԳՊՀ-ն համագործակցում է նաև հայաստանյան բուհերի հետ (ՀՊՄՀ, ՀՀ ՊԿԱ, ՃՇՀԱՀ), ինչի արդյունքում մշակել են մանկավարժական մասնագիտությունների գծով նոր ՄԿԾ-եր «Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա», «Հայոց լեզու և գրականություն», «Պատմություն», «Կենսաբանություն», «Քիմիա», «Ֆիզիկա» մասնագիտությունների համար, «Զբոսաշրջության կառավարում» ՄԿԾ-ի ուսումնական պլան և նոր դասընթացներ (Երկրատեղեկատվական համակարգերի հիմունքներ, տվյալների հավաքագրում և քարտեզագրում, նախագծի կառավարում), կարողությունների զարգացման նոր ծրագիր-առաջարկներ, սակայն այս ուղղությամբ առկա չեն վերլուծություններ, թե ինչ ուսումնասիրություններ են եղել և ինչպես են դրանք հանգեցրել ՄԿԾ-ի առկա կառուցվածքին ու բովանդակությանը:

Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ համալսարանը ներգրավվել է նաև նոր միջազգային ծրագրերում և սա համարում է նախկին ծրագրերում որպես վստահելի գործընկեր հանդես գալը: Ծրագրերը հնարավորություն կընձեռեն ԿԾ-ների միջազգայնացման, կարողությունների զարգացման և ռեսուրսների համալրման տեսանկյունից: Համալսարանը կարևորում է միջազգային շարժունության ծրագրերում ընդգրկվելը, սակայն այս ուղղությամբ գարծադրած ջանքերը դեռևս արդյունք չեն տվել:

ԳՊՀ-ն նախատեսել է 2020 թվականից մշակել և ներդնել միջազգային գիտական համագործակցության զարգացման ծրագրեր, սակայն փորձագիտական այցի ժամանակ պարզվեց, որ այս ուղղությամբ դեռևս ստեղծված նախադրյալներ առկա չեն:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ԳՊՀ-ի շահակիցների միայն նեղ շրջանակ է իրազեկ իրականացվող ծրագրերի վերաբերյալ:

9.4 ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

Համասարանն իր ռազմավարական զարգացման ծրագրում միջազգայնացման ուղղության զարգացման նպատակով կարևորել է ներքին շահակիցների օտար լեզվի իմացությունը: Ելնելով դրանից՝ իրականացվել է դասավանդողների և սովորողների օտար լեզվի (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն) իմացության գնահատում, ըստ որի թե՛ դասավանդողների, թե՛ սովորողների շրջանում համալսարանում բարձր է եղել ֆրանսերենի իմացության մակարդակը: Սակայն բուհը չի կիրառում ֆրանսերենի իմացության հանգամանքը և չունի նաև համապատասխան համագործակցության

շրջանակ կամ ծրագրեր: Այնուամենայնիվ, կախված գնահատման արդյունքներից, կազմակերպվել և իրականացվել են դասընթացներ դասավանդողների և վարչական աշխատողների համար միայն անգլերենից, որոնք կարճատև են եղել: Մասնակիցները ստացել են կրեդիտներ, սակայն գործնականում արդյունավետության գնահատում չի իրականացվել դասընթացների կազմակեպման նպատակի տեսանկյունից: Փաստաթղթերի ուսումնասիրության և փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ տվյալ ուսումնական տարում, պայմանավորված մի շարք հանգամանքներով, դեռևս չեն իրականացվել դասընթացներ, սակայն համալսարանը նախատեսել է ապահովել դասընթացի շարունակականությունը: Միաժամանակ պարզվեց, որ դասընթացների մասնակիցները թիրախավորված չեն, կազմակերպվել են դասընթացներ տարբեր մակարդկաների համար, սակայն դա հիմնականում չի նպատել միջազգային ծրագրերում ներգրավվածությանը կամ շարժունությանը:

Ուսանողների շրջանում առանձին անգլերենի դասընթացներ չեն իրականացվել, սակայն ՄԿԾ-երում անգլերենի ժամաքանակը ավելացվել է՝ նպատակ ունենալով ապահովել համապատասխան վերջնարդյունքներ, սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ սահմանված նպատակին դեռևս չեն կարողանում հասնել: Միաժամանակ փաստաթղթերի ուսումնասիրությունը և այցը հնարավորություն տվեցին պարզել, որ անգլերենի ժամաքանակի ավելացումը չի նպաստել սովորողների և դասավանդողների շարժունությանը, ինչպես նաև դասախոսների կողմից միջազգային ամսագրերում հոդվածների տպագրմանը, որի պատճառը համալսարանը համարում է օտար լեզուների իմացության ցածր մակարդակը:

Դատողություններ: Չնայած Գորիսի պետական համալսարանը փորձի փոխանակմանը, զարգացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով զարգացման ռազմավարական ծրագրում սահմանել է խնդիրներ, սակայն գործողությունների հստակ ժամանակացույցի և գնահատման ցուցիչների բացակայությունը կարող է խոչընդոտել նպատակների արդյունավետ իրականացմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ արտաքին կապերի և համագործակցության բաժինը մշակել է 2020-2023 թթ. գործողությունների միջնաժամկետ ծրագիր, սակայն դա գործառնական և աղյունավետ կարող է լինել, եթե հենված է սեփական կարիքների և հնարավորությունների վրա, իսկ ԳՊՀ-ն նման վերլուծություններ չի իրականացրել: Միաժամանակ հստակ ցուցիչների բացակայությունը հնարավորություն չի տա հետագայում գնահատել գործողությունների արդյունավետությունը կամ իրականացնել մշտադիտարկում, հետևաբար նաև՝ բարելավում;:

Ընդհանուր առմամբ ԳՊՀ-ի միջազգայնացման ռազմավարությունը հիմնված չէ այն պայմանների համապատասխան վերլուծության վրա, որոնց շրջանակում բուհն իրականացնում է իր գործունեությունը, հաշվի չեն առնվում Սյունիքի մարզում ԳՊՀ-ի աշխարհագրական, աշխարհաքաղաքական և տնտեսական վիճակը: Այս տեսանկյունից փորձագիտական խումբը կարևորում է նաև առցանց միջավայրի ընձեռած հնարավորությունների կիրառումը՝ միջազգային համագործակցության շրջանակը ընդլայնելու, առաջավոր փորձի ուսումնասիրման և բուհի զարգացման նպատակով:

Միաժամանակ միջազգային և տեղի առաջավոր փորձի ուսումնասիրումը և տեղայնացումը լավ հնարավորություն է զարգացման ապահովման համար, սակայն այս ուղղությամբ բուհը համալիր գործողություններ չի իրականացրել, սահմանափակվել է միայն որոշ փորձի ուսումնասիմամբ, որը գործառնություն չի ստացել: Փորձագիտական խումբը դրական է համարում բենչմարքինգի իրականացման քաղաքականության մշակումը և նշում է, որ վերջինիս արդյունավետ կիրառումը կարող է նպաստել առաջավոր փորձի ներդրմանը:

Այն որ ՌԾ-ն չի պարունակում բյուջեի և ռեսուրսների հստակ բաշխում անորոշ է դարձնում արտաքին կապերից և միջազգային ծրագրերից բուհի ակնկալիքները, իսկ միջազգայնացմանը որպես առաջնահերթություն բյուջեով ֆինանսներ չտրամադրելը կարող է վտանգել այդ ուղղության զարգացումը:

Փորձագիտական խումբը խնդրահարույց է համարում, որ բուհում առկա չեն փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը ուղղված արտաքին կապերի հաստատումը խրախուսող հստակ քաղաքականություն, և գտնում է, որ խրախուսման արդյունավետ մեխանիզմների ներդրումը կարող է նպաստավոր լինել արտաքին կապերի հաստատմանն՝ ուղղված ըստ զարգացման ՌԾ-ի տարբեր խնդիրների լուծմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ համալսարանն ունի ենթակառուցվածք, որի գործունեությունը կանոնակարգված է և աշխատակիցները փորձառություն ունեն տվյալ ոլորտում: Փորձագիտական խումբը կարևորում է նաև գործող հաշվետվողականությունը, սակայն միաժամանակ նշում է, որ հաշվետվությունները պետք է հնարավորություն տան գնահատելու գործընթացների արդյունավետությունը՝ ըստ գրանցված արդյունքների, կատարված աշխատանքի ծավալի, գնահատեն բացերը, որը թույլ կտա բարելավումներ կատարել:

Կարևոր է նաև, որ գործողությունները առավել թիրախավորված և նպատակային պլանավորվեն, մասնավորաբար օտար լեզվով նյութերի թարգմանություն, օտար լեզվի դասընթացների անցկացում:

Փորձագիտական խումբը կարևորում է բուհի կողմից ՀՀ և Արցախի բուհերի, կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակների հաստատումը, սակայն դեռևս չի երևում դրանց արդյունավետությունը: Միայն այն որ դրանք հնարավորություն են ընձեռել ՄԿԾ-ներ ներդնելու, սակայն այստեղ համագործակցության դերը ուղիղ արտահայտված չէ:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ բուհը կարողացել է ներրգրավվել միջազգային ծրագրերում, ինչը պայմանավորված է նաև համապատասխան հմտություններով պատասխանատուների առկայությամբ, հատկապես որ այդ ծրագրերի հաջող ավարտը հանգեցրել է նոր ծրագրերի առաջարկներ ստանալուն: Միաժամանակ դրական է այն, որ այդ ծրագրերի շրջանակում կարողացել է հարստացնել ռեսուրսային բազան, ներդնել կրթական ծրագիր, զարգացնել որոշ աշխատակիցների կարողություններ: Սակայն մտահոգիչ է այն, որ դրանք չեն ապահովել ակադեմիական շարժունություն ուսանողների և ՊԴ կազմի համար, նրանց կարողությունների զարգացման հնարավորություններ չեն ստեղծել: Միաժամանակ դեռևս այս ուղղությամբ առկա չեն ծրագրեր:

Փորձագիտական խումբը նշում է, որ բուհի համար կարևոր հնարավորություն է արտասահմանյան տարբեր բուհերի և կամակերպությունների հետ համագործակցության հաստատումը՝ հաշվի առնելով իրենց կարիքները, կարողությունները և ՌԾ նպատակները: Միաժամանակ հայկական սփյուռքը ևս ԳՊՀ-ի միջազգայնացման հնարավորություն է, որը, սակայն, բուհի կողմից չի դիտարկվել և ուսումնասիրվել:

Փորձագիտական խմբի կողմից նկատելի է այն, որ բուհը կարևորում է ուսանողների և դասախոսների անգլերեն լեզվի իմացության հարցը, նաև այն, որ նրանց լեզվաիմացության ուղղությամբ հարցում է կատարել, սակայն այդ ուսումնասիրության արդյունքները չեն դիտվել որպես ռեսուրսների գնահատում, որը հանգեցներ հնարավորությունների ուսումնասիրման և կիրառման: Մասնավորապես, առկա չեն ռուսաստանյան, ֆրանսիական բուհերի հետ համագործակցության շրջանակներ: Արտասահմանյան բուհերի հետ համագործակցության շրջանակները պայմանավորեցվում են միջազգային ծրագրերում ներգրավմամբ:

Իհարկե կարևոր է, որ բուհը քայլեր է կատարում ուսանողների, ՊԴ, վարչական և ՈւՕ կազմերի լեզվաիմացության զարգացման ուղղությամբ, սակայն դրանք չեն հանգեցրել ցանկալի արդյունքների և չեն ծառայել նախատեսված նպատակներին:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ արտաքին կապերի և միջազգայնացման ոլորտում Գորիսի պետական համալսարանի փաստացի ձեռքբերումները չեն համապատասխանում սահմանված հավակնություններին, միջազգայնացման ուղղությամբ ռազմավարությունը չի բխում իր հնարավորություններից, արտաքին կապերի շրջանակը չի ծածկում ռազմավարական հավակնությունների հասանելիությունը, լեզվաիմացության զարգացման ուղղությամբ միջոցառումները չեն հանգեցրել ակնկալվող արդյունքներին, առկա չեն ակադեմիական շարժունության արդյունքներ և հնարավորություններ, փորձագիտական խումբը եզրակացնում է, որ ԳՊՀ-ն չի բավարարում չափանիշ 9-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Գորիսի պետական համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատվում է **անբավարար**:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

10.1 ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

2014 թվականից գործել է ԳՊՀ-ի որակի ապահովման համակարգը (ձեռնարկ): Այժմ համալսարանն առաջնորդվում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից հրատարակված «Հայաստանի մասնագիտական կրթության համակարգում որակի ապահովման ուղենիշներ,

չափանիշներ և չափորոշիչներ» և «Ինքնագնահատման ուղեցույց» ձեռնարկներով: Համալսարանը ձեռնարկը վերանայելու անհրաժեշտություն է տեսնում:

19.06.2018 թ. հաստատվել է ԳՊՀ ԿՈԱ և ՈւԿԱ բաժնի կանոնակարգը, որը սակայն թույլ չի տալիս հասկանալ, թե բաժինն ինչ դեր է ստանում համալսարանի որակի ապահովման համակարգում:

ԳՊՀ-ի ռեկտորի 30.12.2019 թ. հրամանով ստեղծվել է ԿՈԱ և ՈւԿԱ բաժնին կից Որակի հսկման ներքին աուդիտի հանձնաժողով, սակայն սահմանված չեն հստակ գործառույթներ:

ԳՊՀ-ի 2019-2023 թթ.- ՌԾ-ում առկա է Որակի ապահովում բաժին, որում առկա են այս ուղղությամբ նպատակներն ու խնդիրները, որոնց լուծման համար համալսարանը 2019-2023 թթ. զարգացման ՌԾ-ի առանցքային գործողությունների իրականացման ժամանակացույցով նախատեսել է 6 գործողություն, որոնք ընդհանրական են և չափելի չեն, չկան պատասխանատուներ (աջակցել մատուցվող կրթական ծառայությունների կատարելագործմանը, բացահայտել համալսարանի շահակիցների կարիքները և աջակցել և դրանց բարելավմանը և այլն): Միաժամանակ անհասկանալի են այդ փաստաթղթով համալսարանում որակի ապահովմանը միտված որոշ գործողություններ, այնպիսի տպավորություն է, որ դրանք ստորաբաժանման գործառույթներ են ոչ թե համալսարանի ռազմավարական ծրագրով նախատեսված գործողություններ (մասնավորաբար՝ աջակցել համալսարանի կրթական ծրագրերի հավատարմագրմանը, նպաստել համալսարանի կառավարման համակարգի բարեփոխումներին):

2020 թ.- հունվարի 21-ին հաստատվել է Որակի ապահովման ներքին աուդիտի հանձնաժողովի աշխատակարգը, որը չի պարունակում փաստաթղթով նախանշված գործընթացների իրականացման ընթացակարգային մանրամասներ:

10.2 Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

ԳՊՀ-ում առկա է ԿՈԱ և ՈւԿԱ բաժին, որն ունի 1 ղեկավար, 3 աշխատակից: Բաժնին հատկացված է 1 աշխատասենյակ՝ համապատասխան գույքով և նյութատեխնիկական հնարավորություններով:

Բաժնի բոլոր հաստիքների համար մշակվել և 2019 թ. դեկտեմբերին հաստատվել են պաշտոնների նկարագրեր, որտեղ ներկայացված են գործառույթները: Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ աշխատակիցները խստորեն չեն առաջնորդվում սահմանված գործառույթներով, կարևորում են փոխօգնությունը:

Բաժինն անհրաժեշտ նյութական ռեսուրսներ ձեռք է բերում ընթացիկ պահանջագրերով: Սակայն չունեն հաշվարկներ, թե յուրաքանչյուր ուսումնական տարում ինչպիսի նյութական ռեսուրսներ են ծախսվել:

Որակի հսկման ներքին աուդիտի հանձնաժողովը և Որակի ապահովման ներքին աուդիտի հանձնաժողովը գործում են հասարակական հիմունքներով:

ԳՊՀ-ն որակի ապահովման գործընթացների իրականացման համար տրամադրվող հիմնական ֆինանսական ռեսուրսները համարում է ԿՈԱ և ՈՒԿԱ բաժնի աշխատակիցների ամենամսյա աշխատավարձերն և հավելավճարները:

ԿՈԱ և ՈւԿԱ բաժնի մեկ աշխատակից վերապատրաստվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից կազմակերպված «Որակի ապահովման համակարգի բարելավում: Ինստիցուցիոնալ կարողությունների ինքնավերլուծություն» երկփուլ վերապատրաստման դասընթացին, մեկ աշխատակից՝ Բաց-հասարակության հիմնադրամներ-Հայաստան կազմակերպության կողմից կազմակերպված «Բարեվարքության գնահատման մեթոդաբանություն և որակի ներքին ապահովում» դասընթացին:

ԿՈԱ և ՈւԿԱ բաժնի աշխատակիցների, ֆակուլտետային պատասխանատուների և հանձնախմբերի կատարողականների գնահատում, կարիքների վերհանում չի իրականացվում, չնայած որ այս ուղղությամբ նաև տրամադրվել է խորհրդատվություն նախորդ ինստիտուցիոնալ հավատարմագրման արդյունքում: Սակայն համալսարանը համարում է, որ հավելյալ ռեսուրսների անհրաժեշտություն չունի:

ԿՈԱ և ՈւԿԱ բաժինը բավականին աշխատանքներ է տարել համալսարանի տարբեր գործընթացների հետ կապված փաստաթղթերի մշակման ուղղությամբ:

Հարցումները սկսել են անցկացնել նաև առցանց հարթակների միջոցով՝ կիրառելով դրանց հնարավորությունները:

10.3 Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:

2019 թ. հաստատվել է ԳՊՀ-ի դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կանոնակարգը: Ըստ որի իրականացրել են պիլոտային հարցումներ, սակայն դեռևս չեն երևում դրանց ազդեցությամբ բարելավումները:

Ուսանողների և ՊԴ անձնակազմի ուսումնական և աշխատանքային միջավայրից բավարարվածության հարցումների կանոնակարգի (հաստատված՝ 2019 թ. դեկտեմբերի 26-ին) համաձայն սկսել են հարցումներ անցկացնել ուսանողների և դասախոսների շրջանում, սակայն փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ այս հարցումներին ուսանողների ու դասախոսների ներգրավվածությունը այնքան էլ ակտիվ չէ:

Դասախոսներն ու ուսանողները ընդգրկված են գիտական խորհրդի և ֆակուլտետների խորհուրդների կազմերում, վերջիններիս կազմերում ներգրավվել են նաև գործատուներ՝ ուղղված նախորդ հավատարմագրման գործընթացում փորձագիտական խմբի կողմից տրված այն խորհրդատվությանը, որ ակտիվացնեն արտաքին շահակիցների ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում: Խորհուրդների կազմերում ներգրավված ուսանողներն ընտրվում են ՈւԽ-ի կողմից, սակայն փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ ՈւԽ-ն ակտիվ գործունեություն չի ծավալում և ուսանողները հիմնականում տեղյակ չեն նրանց գործունեությունից, այդ թվում՝ ՈւԽ անդամ ուսանողները: Ուսանողներն ակտիվ ներգրավված չեն նաև որակի ապահովման գործընթացներում, ավելին՝ դրանցում ներգրավվելու համար չունեն մոտիվացիա:

Բացի ֆակուլտետի խորհուրդներից, արտաքին շահակիցները ներգրավված են նաև ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում: Միաժամանակ սկսել են

հարցումներ անցկացնել գործատուների (23 դպրոցների տնօրենների և 19 այլ գործատուների) շրջանում, արդյունքները վերլուծել են: Գործատուները պրակտիկաների ժամանակ կարծիքներ են արտահայտում օրագրերում: Դեռևս չի երևում այս ամենի արդյունքների ազդեցությունը գործընթացների վրա:

ԿՈԱ և ՈւԿԱ բաժնի կողմից մշակվել է հարցաթերթիկ շրջանավարտների շրջանում հարցումների կազմակերպման համար, որտեղ լրացնում են նաև իրենց տվյալները՝ անհրաժեշտության դեպքում նրանց հետ կապ հաստատելու աշխատանքի առաջարկի նպատակով: Այցի արդյունքում պարզվեց, որ շրջանավարտները ներգրավված չեն բուհի բարելավման գործընթացներում:

Բուհի ինստիտուցիոնալ հավատարմագրման հանձնախմբում ընդգրկվել են ներքին շահակիցներ, սակայն ինչպես պարզ դարձավ փորձագիտական այցի ժամանակ, դասախոսների և ուսանողների ներգրավվածությունը թույլ է եղել. գլխավորապես ներգրավվել են վարչական աշխատակիցները: Հանձնախմբում արտաքին շահակիցներ ներգրավված չեն:

10.4 Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

ԳՊՀ-ում ԿՈԱ և ՈւԿԱ բաժինը վերակազմավորման արդյունք է: 2019 թ.-ի դեկտեմբերին ստեղծվել է ԿՈԱ և ՈւԿԱ բաժնին կից Որակի հսկման ներքին աուդիտի հանձնաժողով: Սակայն փաստաթղթերի ուսումնասիրությունը և փորձագիտական այցը ցույց է տալիս, որ այս օղակների դերը համալսարանի որակի ապահովման համակարգում հստակ չեն արտահայտվում:

Համալսարանը չունի որակի ներքին ապահովման համակարգի մշտադիտարկման, վերանայման քաղաքականություն և մեխանիզմներ, առկա չեն նաև բենչմարքինգի իրականացման մոտեցումներ: Չնայած նախատեսել էին բենչմարքինգ իրականացնել 2020 թ,, սակայն դեռևս չի իրականացվել:

Համալսարանի գործընթացների վրա մեծ ազդեցություն է ունենում ինստիտուցիոնալ հավատարմագրումը, որին ընդառաջ մշակվել և ներդրվել են բավականին փաստաթղթեր, իրականացրել են նոր հարցումներ և վերլուծություններ, որոնք սակայն չեն հանգեցրել բարեփոխումների:

Տարբեր չափանիշներում ներկայացված փաստերից, փաստաթղթային հենքերից և փորձագիտական այցից երևում է, որ համալսարանում գործընթացները հիմնականում գտնվում են պլանավորման, իսկ որոշ դեպքերում՝ իրականացման փուլերում:

10.5 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

Որակի ներքին ապահովման համակարգի փաստաթղթային հիմքերի տերմինաբանությունը համապատասխանեցված է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից հրատարակված ձեռնարկներում գործածվող տերմինաբանությանը, քանի որ գլխավորապես առաջնորդվում են դրանցով: Համալսարանի համար ըստ ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների ինքնավերլուծության իրականացման երկրորդ փորձն է: Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ ինքնավերլուծության խմբում կային

անդամներ, ովքեր ինքնավերլուծության իրականացման առաջին փորձին արդեն մասնակցել էին և այժմ փորձել էին բարելավել իրենց գործունեությունը նախորդ փորձի հիման վրա: Սակայն այս առումով նկատելի չէր համընդհանուր մոտեցում գործընթացի բարելավում նախորդ փորձի և գործընթացի գնահատման հենքով:

Ինքնավերլուծության մեջ առկա է ըստ չափորոշիչների ոչ լիարժեք կամ անհամապատասխան ներկայացման մասով (մասնավորաբար՝ 1բ, 2գ, 2դ, 2ե, 2զ, 2է և այլն): Նույնիսկ որոշ դեպքերում նկատելի է ըստ չափանիշների պատասխանատուների աշխատանքի խիստ առանձնացված բնույթը, ընդհանուր թիմային և շահակիցների ներգրավված աշխատանքի թույլ արտահայտվածությունը: Միաժամանակ թույլ է արտահայտված վերլուծական մոտեցումը: Համալսարանի վերաբերյալ լիարժեք և համակողմանի պատկերացում չեն տալիս ինքնավերլուծության մեջ ներկայացված ուժեղ ու թույլ կողմերը, հնարավորություններն ու վտանգները:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որոշ գործընթացներ ձեռնարկվել են հենց ինքնավերլուծություն կատարելու ընթացքում, սակայն միաժամանակ փաստաթղթերի ուսումնասիրումը ցույց տվեց, որ դրանք գլխավորապես նախորդ հավատարմագրման ժամանակ ներկայացված խորհրդատվություններով արդեն արտահայտվել են: Միաժամանակ շահակիցները նշում են, որ ինքնավերլուծությունը նոր բացահայտումների չի հանգեցրել, ինքնավերլուծությունում նշված խնդիրները մինչ այդ էլ ակնհայտ են եղել:

Համալսարանի և դրա տարբեր օղակների հաշվետվությունները չեն պարունակում բավարար տվյալներ անհրաժեշտ վերլուծությունների իրականացման համար, ինչպես նաև չեն պարունակում համակողմանի վերլուծություններ:

10.6 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

ԳՊՀ-ի կայքում տեղադրված են ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծությանը որպես հավելվածներ կցված երեք հարցումների վերլուծություններ՝ 1. ուսանողների ուսումնական միջավայրից բավարարվածության հարցումներ, 2. ՊԴ կազմի աշխատանքային միջավայրից բավարարվածության հարցումներ, 3. Գործատուների շրջանում հարցումներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ շահակիցները հիմնականում տեղյակ չէին այդ վերլուծություններից: Շահակիցները տեղյակ էին ուսանողների կողմից ՊԴ կազմի գնահատման հարցումներից, ամբիոններում՝ դրանց վերլուծություններից՝ արտահայտված համընդհանուր միջին միավորով:

ԳՊՀ-ի կայքում հրապարակվում է ռեկտորի հաշվետվությունը համալսարանի գործունեության վերաբերյալ, որը առավելապես տեղեկատվական բնույթ է կրում, թույլ է արտահայտված վերլուծական բաղադրիչը: Այլ հրապարակումները ևս տեղեկատվական բնույթ են կրում, միաժամանակ եղած տեղեկատվությունն էլ հասանելի չէ էջի անգլերեն տարբերակում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում բուհի ջանքերն ուղղված որակի ապահովման համակարգի ուժեղացմանը: Համալսարանում

առկա է որակի ապահովման գործընթացներին ուղղված որոշ փաստաթղթային հենք, սակայն դրանք բավարար չեն կարգավորելու համապատասխան գործընթացները, իսկ եղած փաստաթղթերն էլ դեռևս լիարժեք չեն ծառայել իրենց նպատակին: Հստակ կարգավորված չէ համալսարանի տարբեր օղակների դերակատարությունը որակի ներքին ապահովման համակարգում, ինչը թույլ չի տալիս երաշխավորելու համընդհանուր որակի ներքին ապահովման համակարգի որոշակիությունն ու բնականոն գործընթացը:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ համալսարանում տարբեր հանձնախմբեր են ստեղծվում որակի ապահովման տարբեր խնդիրների լուծման նպատակով, դրանով փորձելով նաև շահակիցների ներգրավվածություն ապահովել, սակայն վերջիններիս նպատակների և գործառույթների անհստակությունը խոչընդոտում է գործունեության արդյունավետության գնահատումը:

Որակի ապահովման գործընթացների և՛ ՌԾ-ով, և' այլ փաստաթղթերով ոչ հստակ պլանավորումը թույլ չի տալիս գնահատել դրանց արդյունավետությունը, այս առումով նաև դժվարանում է այդ գործընթացների համար տրամադրվող ռեսուրսների բավարար լինելն ու դրանց արդյունավետ կիրառումը:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ մշակվել են ԿՈԱ և ՈւԿԱ բաժնի աշխատակիցների պաշտոնների նկարագրեր, սակայն անհրաժեշտություն է տեսնում, որ դրանք բխեցվեն և պայմանավորեցվեն ինչպես այլ փաստաթղթերի, այնպես էլ իրական գործընթացների հետ: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ԿՈԱ և ՈւԿԱ բաժնի գործունեությունը դեռևս բավարար հստակ և համակարգված չէ, ինչի արդյունքում տուժել է որակի մշակույթի տարածման գործընթացը: Միաժամանակ շատ կարևոր է, որ իրականացվեն նախ բաժնի աշխատակիցների կարիքների գնահատում, ապա նաև՝ այլ օղակների՝ ուղղված նրանց կատարելագործմանը և որակի ապահովման գործընթացների իրագործմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ համալսարանն ընդլայնում է հարցումների ուղղությունները՝ նախատեսելով ներգրավել շահակիցների առավել լայն շրջանակ, նաև այն, որ վերանայում է հարցումների մեխանիզմները: Սակայն այդ հարցումները դեռևս պարբերական բնույթ չեն կրում, դեռևս տեսանելի չեն դրանցում ներքին և արտաքին շահակիցների լայն շրջանակի ներգրավվածությունն ու նրանց մոտիվացվածությունը ներգրավվելու առումով, միաժամանակ չի երևում հարցումների ազդեցությունը բարելավման գործընթացներում: Փորձագիտական խումբը կարևորում է, որ շրջանավարտները ևս ներգրավվեն որակի ապահովման տարբեր գործընթացներում, քանի որ նրանք լավագույնս կարող են իրազեկել այն խնդիրների մասին, որոնց բախվում են իրենց գիտելիքները, կարողություններն ու հմտությունները կիրառելիս:

Փորձագիտական խումբը գտնում է, որ ՈւԽ-ի, որպես կարևոր օղակ դեռևս կայացած չլինելը բացասական է անդրադառնում նաև որակի ապահովման գործընթացներում ուսանողների առավել ակտիվ ներգրավման առումով, քանի որ նրանց կողմից են ընտրվում տարբեր կառույցներում ուսանող ներկայացուցիչներ:

Հստակ չէ որակի ապահովման ներքին համակարգը համալսարանում և տարբեր օղակների դերակատարությունը դրանում, բացի այդ չեն ուսումնասիրվում նաև որակի ապահովման ներքին համակարգի կարիքները, ինչը վտանգում է որակի ապահովման

ներքին համակարգի արդյունավետության ապահովումը: Միաժամանակ փորձագիտական խումբն ակնկալում էր, որ նախորդ հավատարմագրումից հետո ապահովվեր գործընթացների առնվազն մեկ ՊԻԳԲ շրջափուլի իրականացումը:

Որակի ապահովման ներքին համակարգը գլխավորապես կենտրոնացված է գործընթացների, ֆորմալ որոշումների ու ռեսուրսների վրա, և ոչ այն հիմնահարցերի, թե այդ գործընթացները, որոշումները ու ռեսուրսները իրականում ինչպես և ինչքանով են օժանդակում կրթության, հետազոտության և բուհի ծառայությունների իրականացմանը:

Կարևոր է, որ որակի ներքին ապահովման համակարգի փաստաթղթային հիմքերի տերմինաբանությունը համապատասխանում է համընդհանուր տերմինաբանությանը, սակայն տվյալների հավաքագրման մեխանիզմների անկատարությունը, ընթացիկ հաշվետվություններում վերլուծական բաղադրիչի պակասը դժվարեցնում են ինքնավերլուծության իրականացումն ու արտաքին գնահատումը: Ինքնավերլուծությունը բավարար հիմքեր չի ապահովել համալսարանի գործընթացների վերաբերյալ օբյեկտիվ պատկերացում կազմելու համար:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ համալսարանը կարևորել է որոշ հարցումների վերլուծությունների հրապարակումը, սակայն կարևոր է, որ սա կրի ընդհանուր և պարբերական բնույթ: Բացի այդ կարևոր է, որպեսզի ապահովվի ընթացակարգերի և գործընթացների որակի վերաբերյալ շահակիցների համար բավարար տեղեկատվության հասանելիությունը, այլապես կարող է վտանգվել կիրառված մեխանիզմների արդյունավետությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԳՊՀ-ի որակի ապահվման քաղաքականությունն ու ընթացակերգերը չեն երաշխավորում ՌԾ-ից բխող համապատասխան նպատակների իրագործումը, ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը որակի ներքին ապահովման գործընթացներում թույլ է արտահայտված, հստակ չէ որակի ներքին ապահովման համակարգը և չեն գնահատվում կարիքները, բուհում որակի ներքին ապահովման գործընթացները հիմնականում գտնվում են պլանավորման և իրականացման փուլերում, իրականացված հարցումների և վերլուծությունների արդյունավետությունը նկատելի չէ, որակի ապահովման ներքին համակարգի կողմից հավաքագրված տեղեկատվությունը հիմք չի դառնում որոշումների կայացման համար, երաշխավորված չէ գործընթացների և ընթացակարգերի որակի վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը շահակիցների համար՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԳՊՀ-ն չի բավարարում չափանիշ 10-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Գորիսի պետական համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատում է ***անբավարար:***

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Բավարարում է
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8.Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Չի բավարարում
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

_____

Արմենուհի Սարգսյան
Փորձագիտական խմբի ղեկավար

23 հուլիսի 2021

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Արմենուհի Սարգսյան՝ 2006 թ. ավարտել է Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտը՝ «Մաթեմատիկա» մասնագիտությամբ: 2011 թ. շնորհվել է ֆիզմաթ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2007-2011 թթ. եղել է ԳՊՄԻ-ի «Մաթ. անալիզ և դիֆ. հավասարումներ» ամբիոնի դասախոս, 2011-2014 թթ.՝ նույն ամբիոնի ասիստենտ, 2014-2017 թթ.՝ «Բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի» ամբիոնի դոցենտ, 2017 թվականից առ այսօր՝ «Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ՏՏ» ամբիոնի դոցենտ: 2012-2016 թթ. եղել է ԳՊՄԻ-ի Հետբուհական և լրացուցիչ կրթության բաժնի վարիչ: 2017-2018 թթ. եղել է ՇՊՀ-ի Որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն, իսկ 2018 թվականից Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրենն է: Մի շարք գիտական նախագծերում հանդես է եկել որպես ավագ գիտական աշխատող կամ ղեկավար: 2017 և 2019 թթ. դասախոսությամբ հանդես է եկել Անգլիայի Քիլի համալսարանում, Erasmus + շարժունության ծրագրի շրջանակներում: 2018 թվականից ՇՊՀ-ի Գիտական տեղեկագիր հանդեսի խմբագրական խորհրդի նախագահի տեղակալն է, մինչ այդ (հիմնման պահից) հանդիսացել է պատասխանատու քարտուղարը: 1 ուսումնամեթոդական ձեռնարկի և 60-ից ավել գիտական հոդվածների հեղինակ և համահեղինակ է:

Կիս Կուվենար՝ 1982 թվականից պատմության դոկտոր է: 2016 թվականից Նիդերլանդների Ավրորա եվրոպական համալսարանների միության գլխավոր քարտուղարն է: 38 տարվա փորձ ունի միջազգային բարձրագույն կրթության, իրավական և դատական համագործակցության ոլորտում և 33 տարվա փորձ կառավարման, քաղաքականության մշակման, ռազմավարական կառավարման և փոփոխությունների կառավարման ոլորտում: Անդամակցում է մի շարք միջազգային գործակալությունների և ասոցիացիաների, մի շարք գիտական հոդվածների և հետազոտությունների հեղինակ և համահեղինակ է:

Նարինե Կիրակոսյան՝ 1989 թ. ավարտել է Երևանի ժողտնտեսության ինստիտուտի Կառավարման ֆակուլտետը: 2001 թ. ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտուրան: Տնտեսագիտության թեկնածու է և դոցենտ: 2007 թ. Քաղաքացիական ծառայողների ու համայնքային ծառայողների վերապատրաստման դասընթացների դասընթացավար է: 2010 թվականից մինչ այժմ Եվրոպական համալսարանի դասախոս է, 2013 թվականից՝ նույն համալսարանի տնտեսագիտության և կառավարման, այնուհետ կառավարման ամբիոնի վարիչ: 6 մասնագիտական գրքերի և 48 գիտական հոդվածների հեղինակ է:

Նարինե Միրականյան՝ 2006 թ. ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ֆիզմաթ ֆակուլտետը

«Մաթեմատիկա» մասնագիտությամբ: 2006-2011 թթ. հանդիսացել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ՀՊՄՀ «Մանկավարժության պատմության և տեսության ամբիոն»-ի հայցորդ: 2016 թվականից մանկավարժական գիտությունների թեկնածու է: 2014-2019 թթ. աշխատել է ՀՀ ԿԳ նախարարության Կրթության ազգային ինստիտուտում՝ որպես ուսուցիչների վերապատրաստման դասընթացների դասընթացավար: 2019-2020 թթ. հանդիսացել է Հյուսիսային համալսարանի Որակի ապահովման վարչության պետ, նաև դասախոսել է նույն համալսարանում: 2020 թվականից աշխատում է ՀՀ Կրթության տեսչական մարմնում՝ որպես Ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման, վերլուծությունների և գնահատման վարչության փորձագետ: Մի շարք գիտական հոդվածների հեղինակ է:

Գրիգոր Բեջանյան՝ Հյուսիսային համալսարանի Իրավագիտություն բաժնի մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանող է: 2020 թվականին ավարտել է Տեղական ժողովրդավորության դպրոցը: Մասնակցել է ՈԱԱԿ «Ուսանողության ձայն» նախագծի ուսանող-փորձագետների պատրաստման դասընթացին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

26.04.2021 թ. - 29.04.2021 թ.

	26.04.2021 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*	*Մուտքային տվյալներ*
1	Հանդիպում ԳՊՀ ռեկտորի հետ	12:00	13:00	60 րոպե	Meeting ID: 819 3562 3050 Passcode: 912385
2	Հանդիպում պրոռեկտորի հետ	13:15	14:15	60 րոպե	Meeting ID: 828 9344 9920 Passcode: 497740
3	Հանդիպում դեկանների հետ	14:30	15:20	50 րոպե	Meeting ID: 844 6694 0008 Passcode: 392431
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	15:30	16:30	60 րոպե	Meeting ID: 826 3204 6117 Passcode: 992010
5	Հանդիպում ինքնավերլուծության խմբի անդամների հետ	16:30	17:10	40 րոպե	Meeting ID: 871 0572 4151 Passcode: 557902
6	Հանդիպում գործատուների հետ	17:20	18:20	60 րոպե	Meeting ID: 881 2581 6532 Passcode: 893411
7	Հանդիպում շրջանավարտների հետ	18:30	19:30	60 րոպե	Meeting ID: 865 1785 7506 Passcode: 947141

	27.04.2021 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*	*Մուտքային տվյալներ*
1	Հանդիպում ԳՊՀ խորհրդի անդամների հետ	09:30	10:10	40 րոպե	Meeting ID: 870 4689 0610 Passcode: 135310
2	Հանդիպում ամբիոնների վարիչների և կրթական ծրագրերի պատասխանատուների հետ	10:30	11:30	60 րոպե	Meeting ID: 839 2988 2819 Passcode: 825850
3	Հանդիպում պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների (10-12 հոգի) հետ	12:00	13:00	60 րոպե	Meeting ID: 850 0123 2121 Passcode: 754595
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:10	14:10	60 րոպե	Meeting ID: 814 0474 1207 Passcode: 273963

5	Հանդիպում Ուսանողական խորհրդի և Ուսանողական գիտական ընկերության ներկայացուցիչների (8-10 հոգի) հետ	14:20	15:00	40 րոպե	Meeting ID: 846 0589 2046 Passcode: 748107
6	Հանդիպում ուսանողների հետ	15:20	16:20	60 րոպե	Meeting ID: 810 3646 7771 Passcode: 82496
7	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:30	18:30	120 րոպե	Meeting ID: 814 0474 1207 Passcode: 273963

	28.04.2021թ.			*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*	*Մուտքային տվյալներ*
1	Հանդիպում «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի պատասխանատու/ներ/ի հետ	Հանդիպում «Մաթեմատիկա» կրթական ծրագրի պատասխանատու/ներ/ի հետ	Հանդիպում «Տնտեսագիտություն» կրթական ծրագրի պատասխանատու/ներ/ի հետ	09:30	10:30	60 րոպե	Meeting ID: 818 7674 4502 Passcode: 891697
2	Հանդիպում «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի դասախոսների հետ	Հանդիպում «Մաթեմատիկա» կրթական ծրագրի դասախոսների հետ	Հանդիպում «Տնտեսագիտություն» կրթական ծրագրի դասախոսների հետ	11:00	12:00	60 րոպե	Meeting ID: 836 6480 7696 Passcode: 852511
3	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ			12:30	13:30	60 րոպե	Meeting ID: 859 5028 6421 Passcode: 765153

4	Հանդիպում «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի ուսանողների հետ	Հանդիպում «Մաթեմատիկա» կրթական ծրագրի ուսանողների հետ	Հանդիպում «Տնտեսագիտություն»կրթական ծրագրի ուսանողների հետ	13:40	14:40	60 րոպե	Meeting ID: 820 5857 3251 Passcode: 944660
5	Բաց հանդիպում			15:00	16:00	60 րոպե	Meeting ID: 829 4578 8180 Passcode: 313724
6	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում			16:30	18:30	120 րոպե	Meeting ID: 859 5028 6421 Passcode: 765153

	29.04.2021 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*	*Մուտքային տվյալներ*
1	Հանդիպում ստորաբաժանումների ղեկավարների (Ուսումնական մաս, աշխատակազմի կառավարման, տնտեսական գործունեության կազմակերպման, արտաքին կապերի և համագործակցության, հասարակայնության և լրատվության բաժիններ, հաշվապահություն) հետ	09:30	11:00	90 րոպե	Meeting ID: 810 8979 7940 Passcode: 035366
2	Հանդիպում ԿՈԱ և ՈՒԿԱ բաժնի աշխատակիցների հետ	11:30	12:30	60 րոպե	Meeting ID: 834 2313 9739 Passcode: 390401
3	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրած կազմի հետ	12:40	14:00	100 րոպե	Meeting ID: 871 5497 1781 Passcode: 981597
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	14:10	15:10	60 րոպե	Meeting ID: 839 5595 5922 Passcode: 038750
5	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	15:20	18:30	160 րոպե	Meeting ID: 839 5595 5922 Passcode: 038750
6	Հանդիպում ԳՊՀ ղեկավար կազմի հետ	19:00	19:30	30 րոպե	Meeting ID: 841 9176 1869 Passcode: 980380

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

Հ/Հ	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	ՌԾ գործողությունների կատարման ժամանակացույց	1
2.	Ներքին շահակիցների կարիքների վերհանման վերլուծություններ	1
3.	Շրջանավարտների կարիքների բացահայտման վերլուծություններ	1
4.	Գործատուների կարիքների վերհանման վերլուծություններ	1
5.	Որակի ապահովման ներքին աուդիտի հանձնաժողովի նիստերի արձանագրություններ, վերլուծություններ հաշվետվություններ	1
6.	ՌԾ մոնիթորինգի հանձնաժողովի հաշվետվություններ	1
7.	Ամբիոնների և այլ ստորաբաժանումների հաշվետվություններ, աշխատանքային պլաններ	1
8.	«Զբոսաշրջության կառավարում» մասնագիտության ներդրման անհրաժեշտության վերլուծություն	1
9.	ԳՊՀ հաստիքացուցակ	2
10.	Ֆակուլտետների, ամբիոնների, ստորաբաժանումների տարեկան պլաններ	2
11.	Հաշվետվություններ/ամբիոնների և ֆակուլտետների/	2
12.	Կառավարման խորհրդի նիստերի արձանագրություններ /վերջին երեք տարիների համար/	2
13.	Ուսումնական խորհրդատուների կազմը, խորհրդատվության թեմաները և հանդիպումների ժամանակացույցը, գրանցումների մատյանը /	2
14.	Ուսումնական ծանրաբեռնվածության նորմատիվները	2
15.	Գիտխորհրդին առընթեր հանձնաժողովների կանոնակարգեր	2
16.	Համալսարանի կազմակերպչական կառուցվածքը փոխելու անհրաժեշտության վերաբերյալ վերլուծություններ, հաշվետվություններ	2
17.	ԳՊՀ էթիկայի կանոնակարգի համաձայն իրականացված ներքին աուդիտի կամ ռիսկերի կառավարման գործընթացները հաստատող փաստաթղթեր	2
18.	Ուսանողների նախաձեռնությամբ և առաջարկով ԳՊՀ-ում տեղի ունեցած	2

	քննարկումների արձանագրություններ	
19.	Ֆակուլտետների և ամբիոնների ՌԾ-ներ	2
20.	Ամբիոների և ֆակուլտետների հաշվետվություններ	2
21.	Ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունները	2
22.	Կրթական ծրագրերի մշտադիտարկման կանոնակարգեր	2
23.	Ուսումնական պլանների վերանայման վերաբերյալ հիմքեր և վերլուծություններ	3
24.	Դասավանդման և ուսումնառության արդյունավետության գնահատման վերլուծություններ	3
25.	Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների, ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի ուսումնական ու աշխատանքային միջավայրից բավարարվածության վերաբերյալ հարցումների արդյունքներ	3
26.	Ուսանողների ձեռքբերած գիտելիքների, կարողությունների ու հմտությունների, դրանց չափման համար քննաշրջաններից հետո ամբիոններում, ֆակուլտետներում և գիտական խորհրդում կատարված ուսման առաջադիմության վերլուծություններ, իրականացված հարցումների արդյունքներ ուսանողների շրջանում	3
27.	Առաջարկությունների արձանագրություններ, որոնց հիման վրա մշակվել է ԳՊՀ ուսանողների գիտելիքների գնահատման կանոնակարգը	3
28.	Պրակտիկաների իրականացման ծրագրեր	3
29.	Ավարտական հանձնաժողովի նախագահների հաշվետվություններ	3
30.	Ուսումնական, արտադրական, նախաավարտական պրակտիկաների կարգեր	3
31.	Ուսումնառողների գնահատման քաղաքանության վերանայման հիմքերը և արդյունավետությունն ապահովող մեխանիզմներ	3
32.	ՄԿԾ-ներում փոփոխություններ կատարելու հիմնավորումներ, արձանագրություններ և այլն	3
33.	ՄԿԾ-ի վերանայման, գնահատման ու բարելավման ընթացակարգ	3
34.	Դասացուցակներ /այս ուսումնական տարվա համար/	3

35.	Դասալսումների մատյաններ / ամբիոններից մեկական/	3
36.	Դասախոսների պորտֆոլիոներ, դասախոսի պլաններ /եթե կան, յուրաքանչյուր ամբիոնից՝ հինգական/	3
37.	Պրակտիկաների լրացրած օրագրեր/ ընտրված 3 կրթական ծրագրերի համար՝ 4-ական/	3
38.	Ուսանողների թվի ցուցանիշներ՝ 2019թ.-ի համար	4
39.	Ուսման վարձերի զեղչերի կարգ	4
40.	Ծալաթերթիկներ, գովազդի տեսահոլովակներ	4
41.	Վերլուծություններ ուսումնական խորհրդատուների աշխատանքի արդյունավետության վերաբերյալ	4
42.	Ուսանողների կրթական կարիքների վերհանման վերլուծություններ, հաշվետվություններ	4
43.	ՈւԽ նիստերի արձանագրություններ, հաշվետվություններ	4
44.	Ուսանողներին ներկայացվող հարցումների ձևաչափեր, մեթոդաբանություն, արդյունքների վերլուծություններ	4
45.	Ուսանողների ընդունելության ժամանակացույցեր, Վերլուծություններ, Ստորաբաժանումների հաշվետվություններ	4
46.	Շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ վիճակագրական տվյալները 2019-2020 ուստարվա համար	4
47.	Կարիերայի կենտրոնի հաշվետվություններ, վերլուծություններ	4
48.	Գործատուների կարծիքի ուսումնասիրության հարցաթերթիկի նմուշ, վերլուծություններ, հաշվետվություններ	4
49.	Ուսանողների շրջանում կարիերայի կենտրոնի վերաբերյալ հարցման ձևաթուղթ, մեթոդաբանություն, ընդհանուր վերլուծություն	4
50.	Ուսումնական խորհրդատուների կազմը, խորհրդատվության թեմաները և հանդիպումների ժամանակացույցը, գրանցումների մատյանը	4
51.	ԳՊՀ ՈՒՀՕ կազմի աշխատանքի ընդունման և ազատման ընթացակարգ	5
52.	Գիտահետազոտական, ուսումնամեթոդական և կազմակերպական աշխատանքների վերբարեյալ վերլուծություններ, հաշվետվություններ, արձանագրություններ	5

53.	ԳՊՀ ՊԴ կազմի վերապատրաստումների և որակավորման բարձրացման վերաբերյալ հաշվետվություններ և վերլուծություններ	5
54.	ՊԴ կազմի մասնագիտական կարողությունների համապատասխանությունը կրթական ծրագրերով շնորհվող որակավորումներին ցույց տվող հիմքեր	5
55.	ՊԴ կազմի կարիքների բացահայտման, մշտադիտարկման վերլուծություններ/ հաշվետվություններ	5
56.	Տվյալներ ՊԴ և ՈՒՕ կազմերի վերաբերյալ 2020-2021թթ. դրությամբ	5
57.	Տվյալներ պարգևավճարների վերաբերյալ	5
58.	ՊԴ կազմում համալրած դասախոսական կազմի ցուցանիշներն ըստ տարիների /3 տարի/	5
59.	ԳՊՀ ՊԴ կազմի ձևավորման և պաշտոնի տեղակալման կանոնակարգ	5
60.	Դասախոսների վերապատրաստումների ժամանակացույց	5
61.	Վերապատրաստման փաթեթներ	5
63.	Հետազոտության և գիտության զարգացման ռազմավարություն և քաղաքականություն	6
64.	Գիտական կենտրոնի հաշվետվություններ, վորլուծություններ, գնահատման վերլուծություններ	6
65.	«Սյունիքի նյութական և հոգևոր (ոչ նյութական) ժառանգությունը» թեմայով գիտական ծրագրի իրականացման հաշվետվություններ	6
66.	Սյունիքի նյութական և հոգևոր (ոչ նյութական) ժառանգությունը» թեմայով գիտական ծրագրի շրջանակներում իրականացված հետազոտություններ/5 համարները/	6
67.	ԳՊՀ-ում իրականացված մի քանի հետազոտությունների օրինակներ	6
68.	Հետազոտական ոլորտի զարգացման գնահատման մեխանիզմներ և հաշվետվություններ	6
69.	Գիտական կենտրոնի 2020-2023թթ. ռազմավարական զարգացման գործողությունների միջնաժամկետ պլան	6
70.	Գիտաժողովների արձանագրություններ, հաշվետվություններ	6
71.	Բազային ֆինանսավորման ծրագրի արդյունքում իրականացված թեզեր	6

72.	Բյուջեի կատարողական /վերջին երկու տարիների համար/	6
73.	Ըստ տարիների ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաները	6
74.	Դրամաշնորհային ծրագրերի ցանկ, որոնց դիմել է բուհը	6
75.	ԱՊՀ և օտարերկրյա ամսագրերում տպագրված 2020-2021 թթ.-ին գիտական հոդվածներ	6
76.	2019 և 2020 թթ-ին տպագրված ներպետական և արտասահմանյան ամսագրերը	6
77.	Կուրսային, ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի օրինակներ	6
78.	Գրադարանի հաշվետվություն /վերջին 2 տարիների համար/	7
79.	Erasmus + LNSS ծրագրի շրջանակում ձեռք բերված գույքի ցանկ	7
80.	Բուհի տարեկան հաշվետվություններ /վերջին փ տարիների համար/	7
81.	ֆինանսական ռեսուրսների կառավարումը (%-ով ամբողջ բյուջեի նկատմամբ)	7
82.	2020թ.-ի եկամուտների և ծախսերի նախահաշիվներ	7
83.	2020 թ.-ի հաշվետվություն, նախահաշիվներ	7
84.	Ռեսուրսներից բավարավածության հարցումների գնահատման արդյուքում բարելավմանն ուղղված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ	7
85.	Ֆակուլտետների հաշվետվությունների վերլուծությունները և հիմքեր, թե ինչի հիման վրա են վերհանվել ու ներկայացվել ֆակուլտետների խնդիրները	8
86.	ԳՊՀ-ի ներքին և արտաքին շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման քաղաքականություն և ընթացակարգ	8
87.	Ուսանողների ուսումնական միջավայրից և ՊԴ կազմի աշխատանքային միջավայրից բավարարվածության հարցումների վերլուծություններ	8
88.	Ներքին և արտաքին շահառուների կարիքների վերհանման ընթացակարգ, վերլուծություններ	8
89.	Ներքին և արտաքին շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման քաղաքականություն և ընթացակարգ	8

90.	«Գործընկերություն և ուսուցում» ՀԿ-ի կողմից իրականացված արտաքին մոնիթորինգի արդյունավետ գնահատման հստակ մեխանիզմների մասին փաստող փաստաթղթեր	8
91.	Արտաքին կապերի բաժնի կանոնակարգ	9
92.	Փաստաթղթայի հիմքեր առաջատար հաստատությունների միջազգայնացման փորձը ուսումնասիրելու մասին	9
93.	Էրազմուս+, DAAD և «Գորիսի ֆրանսախոսների մշակութային կենտրոն» ՀԿ-ի հետ տեղեկատվական հանդիպումների կազմակերպման արդյունավետության վերլուծություններ	9
94.	Գործուղումների վերաբերյալ հաշվետվություններ	9
95.	ԳՊՀ գրադարանի ֆոնդի հարստացման ռազմավարական պլանի նախագիծ	10
96.	«Զբոսաշրջության կառավարում» ՄԿԾ-ի վերանայման հիմքեր	10
97.	ԳՊՀ Բենչմարքինգի իրականացման քաղաքականություն և ընթացակարգ	10
98.	ԿՈԱ և ՈԻԿԱ բաժնի աշխատակիցների թվի ավելացման պատճառների վերլուծություններ	10
99.	Ֆակուլտետի խորհրդի կազմ	10
100.	ՈԱԱԿ ներկայացված թերությունների շտկման կատարման մասին հաշվետվություններ	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ[5]

1. Լսարաններ
2. Դեկանատներ
3. Ամբիոններ
4. Ստորաբաժանումներ
5. Լաբորատորիաներ
6. Կաբինետներ
7. Բացօթյա սպորտային դաշտ
8. Բուժկետ
9. Գրադարան
10. Ընթերցասրահ
11. Արխիվ
12. Ճաշարան
13. Հանրակացարան

[5] COVID-19 համավարակով պայմանավորված՝ ՄՈՒՀ-ի ռեսուրսները դիտարկվել են առցանց տարբերակով՝ ՄՈՒՀ-ի կողմից նախապես ներկայացված տեսանյութերի միջոցով:

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԳԱԱՑ- գործունեության արդյունավետության առանցքային ցուցանիշներ
ԳՊՀ- Գորիսի պետական համալսարան
ԿԳՄՍ նախարարություն- Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ԿՈԱ և ՈՒԿԱ բաժին- Կրթության որակի ապահովման և ուսանողների կարիերայի աջակցման բաժին
ՄԿԾ- մասնագիտության կրթական ծրագիր
ՄՈՒՀ- մասնագիտական ուսումնական հաստատություն
ՈԱ- որակի ապահովում
ՈԱԱԿ - Մանագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն
ՈԱՇ- որակավորումների ազգային շրջանակ
ՊԴ կազմ-պրոֆեսորադասախոսական կազմ
ՌԾ- ռազմավարական ծրագիր
ՈՒԳԸ- ուսանողական գիտական ընկերություն
ՈՒԽ- ուսանողական խորհուրդ
ՈՒՕ կազմ-ուսումնաօժանդակ կազմ